

«DROSHAK»  
REVUE MENSUELLE  
organe  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԱԿ

№ 6—7  
JUN — JUILLET  
1928  
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԵՎՅՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

## ՈՒՐԻԱԳԾԻՈՂ ՆՈՐ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Ամբողջ հինգ տարի աչքերը Փոքր Ասիային յառած պատերազմի պատրաստութիւններ տեսնելուց և հանրային կարծիքը այդ պատերազմի համար մշակելուց յետոյ՝ Փաշիստական Իտալիան յեղակարծ՝ volte face կատարելով իր արտաքին քաղաքականութեան մէջ՝ բարեկամութեան ձեռք մեկնեց թիւրքիային:

Ով ծանօթ է այն անտեսական և աշխարհագրական պայմաններին, որոնք բնաանհրաժեշտորէն դրդում էին Մուսուլիսիին Փոքր Ասիան կամ գոնէ նրա արեւմտեան վերլայեթները դրակելու ծրագրներ որոճալ, և ով տեղեակ է այն տեղագրին աշխատանքներին, որ մինչև վերջերս կատարում էր Իտալիան այդ ծրագրների համար անհրաժեշտ ռազմական ոյժը կազմակերպելու և դիւանդադրական աշակցութիւնը ապահովելու նպատակով՝ անշուշտ զարմացած կը մնայ այս յանկարծական փոփոխութիւնից: Բայց իրողութիւնը մնում է իրողութիւն: Իտալիան այսօր կապւած է թիւրքիայի հետ մի դաշինքով, որ գոնէ առաջիկայ հինգ տարիների համար անհաւանական է դարձնում պատերազմը նրանց միջև, եթէ, ի հարկէ, որ և անակնկալ պարզայ զգա «բուրջի կտոր» դարձնելու այդ դաշինքը, ուրիշ շատ աւելի զօրաւոր դաշինքների պէս:

Իտալական տեսակէտից այս քաղաքական փոփոխութիւնը կարող է մի քանի կերպ բացատրել: Կարելի է ենթադրել, որ Մուսուլիսի ուզում է տամանակ շահել իր ռազմական նախապատրաստութիւնները լրացնելու համար: Կարելի է մտածել, որ անտեսական թափանցումի ճանապարհով Փոքր Ասիան իր հակակշռի տակ անելու տեսակէտը հիմա նրան աւելի շահաւետ է թւում, քան պատերազմական արկածը — որի հետևանքները դժուար է գուշակել — մասնաւոր որ յարձակողական Փաշիզմի վտանգից ահաբեկւած թիւրքիան այսօր հակամետ է այնպիսի զի-

ջուճներ անելու Իտալիային, որոնց մասին նա առաջները լսել իսկ չէր ուզում: Վերջապէս կարող է պատահել, որ Դիւշէն Բալքաններում կամ այլուրեք ունի անմիջական առաջադրութիւններ, որոնք նրան նազ հրամայական չեն թւում, քան թէ «նոսրմէական արժանիք» Տարուսի բարձունքների վրա անկելու ազգային պահանջը: Սրանք աւելի կամ նազ չափով հաւանական ենթադրութիւններ են, և պէտք է խորհրդածութեան նիւթ դառնան թիւրքիայի ապագայով շահագրգռւած մարդկանց համար: Այսօրայ կացութեան մէջ մեզ համար կարևորն այն է, որ թիւրք-իտալական դաշնագրութիւնը, հեռացնելով արեւմտեան իմպերիալիզմի կողմից թիւրքիային սպառնացող վերջին անմիջական վտանգը՝ առժամայէս գոնէ ազատում է Մուսուաֆա Քեմալի ձեռները այդ վտանգի կապանքներից: Կարևոր է սա այն տեսակէտից, որ դրանով Անգլիայի համար դիւրանում է թիւրքիան հակախորհրդային թշնամական օղակի մէջ առնելու քաղաքականութիւնը, որ մինչև հիմա չէր յաջողում գլխաւորապէս այն պատճառով, որ Մուսուաֆա Քեմալը շատ թանկ էր գնահատում Ս. Հ. Միութեան բարեկամութիւնն ու աշակցութիւնը արեւմտեան իմպերիալիզմի դէմ պաշտպանելու գործում:

Այս կացութիւնից անհրաժեշտ եզրակացութիւնները հանելուց առաջ, յիշենք վերջին ամիսների քաղաքական իրադարձութիւններից մի քանի դէպքեր ևս: —

Լրագրներից յայտնի է, որ թիւրքիան ներկայիս ձգտում է Յունաստանի հետ և՛ սահմանայնութեան զալու երկու երկրների միջև առկա մնացած վիճելի հարցերի շուրջ՝ որպէսզի կարելի լինի ստահ հետ նոյնպէս «non-aggression»-ի դաշնագրի ստորագրել: Երէկայ մահացու թշնամիի հետ բարեկամանալու այս ձգտումը ինչ պատճառներ էլ ունենայ, կասկած չկայ, որ սրանց մէջ թրակիայում ազա-

ձեռներ ունենալու և առհասարակ Յունաստանի կողմից ապահովելու միտումը կարևոր տեղ է բռնում :

Ուշագրաւ է, որ Թիւրք-յունական մերձեցման համար ոգի ի բուխ նշխարում է Իտալիան՝ նրանց միջև «անչափանդեր միջնորդի» դեր կատարելով : Եթէ նկատել ունենանք, որ Իտալիան ինքն էլ է հետամուտ Յունաստանի հետ բարեկամութեան դաշն կոչելու՝ կարող ենք մտածել, որ այս եռալարի կապակցութիւնները նրան շահագրգռում են զլիստորապէս բալքանեան քաղաքականութեան տեսակէտից : Ի այս սա չէ խանդարում, որ Թիւրքիան կամ նրա քաղաքականութիւնը ղեկավարող արտաքին «աներևոյթ» ուժերը, ա՛յլ տեսակէտներ և ա՛յլ ակնկալութիւններ ունենան յոյն-թիւրքական մերձեցման նկատմամբ :

Կարևոր քաղաքական իրադարձութիւններից մէկը պէտք է համարել և ջրղական խնդրում Թիւրքերի բռնած նոր ընթացքը : Քրդութիւնը հրով-արով և բռնի տեղահանութեամբ բնաջնջելու քաղաքականութիւնը, որ Շէյխ Սաիդի ապստամբութեան օրերից ի վեր ամենայն բարբարոսութեամբ հետապնդւում էր Անգորայի կողմից Արևելեան Անատոլիայում՝ այսօր փոխարինել է ընդհանուր ներումի, սիրաշնորհեան և բարենորոգումների քաղաքականութեամբ : Այս նոր ընթացքը, որ չէ ներդաշնակում քեմալական Թիւրքիայի օտարակեր տրամադրութիւններին՝ մեզ մտածել է տալիս, որ Թիւրքիան ոչ միայն ուզում է ազատ ձեռներ ունենալ Քրդաստանում — մի բան, որին հասնելու համար նա կարիք չունի բնաջնջումի և աւերումի աննդական քաղաքականութիւնից հրաժարելու — այլ որ նա ուզում է օգտագործել ջրղական ուժերը ճիշտ այնպէս, ինչպէս որ հին Թիւրքիան էր օգտագործում նրանց արտաքին պատերազմների ժամանակ :

Վերջապէս խիստ նշանակալից պարագայ է հանդիսանում վերջին ամիսների անցուղարձի մէջ և Թիւրք-աւղանական դաշինքը : Աւղանիստանը, համաձայն այդ դաշնագրի, ընկնում է Թիւրքիայի քաղաքականութեան հունի մէջ : Վերջինս ոչ միայն լիազօրութիւն է ստանում կազմակերպելու Աւղանիստանի զօրքը, այլ և լայն հնարաւորութիւններ է ձեռք բերում այդ երկրի մատող սերունդը և նրա մտաւոր-բարոյական կեանքը Թիւրքական ոգով կերտելու : Սա արդէն ոչ թէ Թիւրքիայի ձեռներն ազատելու տրամադրութեամբ պէտք է բացատրել, այլ ձեռները Ս. Հ. Միութեան քաղաքական գործերի մէջ մխրճելու մտադրութեամբ :

Թէ այս քայլն ի՛նչ աստիճանի հաճոյք կարող է պատճառել Ս. Հ. Միութեանը՝ դրա մասին գաղափար կազմելու համար բաւական է յիշել, որ ինչպէր և Ջեմալ փաշաները, ինչպէս և նրանց պանթուրանական ծրագրներով

տարած միւս երիտասարդ և ոչ-երիտասարդ Թիւրքերը, Աւղանաստանի միւս համարել են ամենակարևոր քաղաներից մէկը Ռուսաստանի Թիւրքացեղ ժողովուրդների անջատական շարժումները հրահրելու և ղեկավարելու համար : Եթէ սրա վրա աւելացնենք, որ այս երկիրը հին ժամանակներից սկսած անդր-օղուսական հակամարտութեան կիզակէտներից մէկն է հանդիսացել և մասնաւորապէս խորհրդային իշխանութեան կողմից շարունակ դիտել է իրրե ամենակարևոր երկրից որ շնչկաստանում անգլիական իմպերիալիզմին մահացու հարած հասցնելու համար՝ այն ժամանակ պատկերը պարզ կը լինի :

Որհնորային իշխանութիւնը, Աւղանաստանի կրկնակի կարևորութիւնը աչքի առաջ ունենալով, սկզբից ի վեր իր արևելեան քաղաքականութեան անխնաբարերից մէկը դարձրեց այս երկիրը օտար ազդեցութիւններից ղերծ պահելու գործը, և ամէն կարգի աջակցութիւն ընծայեց նրան՝ անկախ կեցած ընդունելու համար : Նոյն նպատակով էր, որ բուլղերիները մի երկու ամիս առաջ, Մոսկուայում և Պետերպուրգում կոմունիստական կարմիր դրօշակները աւղանական փաղիշահի ոտքերի առաջ խոնարհեցնելով՝ ներբողներ էին կարգում նրա «ազատախոհ ոգուն» և «յառաջադիմական ձգտումներին» : Սակայն, ինչպէս տեսնում ենք, ստորաբարչութիւններն էլ չօգնեցին նրանց՝ հռչակաւոր արևելեան քաղաքականութիւնը գէթ այս կէտում փրկելու համար : Անյաջողութիւնը, որ օրհասի պէս հետևում է բուլղերի քաղաքագէտներին՝ պարտութիւնից պարտութեան մղելով նրանց՝ Աւղանիստանի խնդրում ևս «կոտորած տաշտի» առաջ կանգնեցրեց Ս. Հ. Միութիւնը :

Այս բոլոր գէպերից համադրութիւնից մեկ համար այն է որևազձեւած, որ Թիւրքական օճը, բուլղերիների ծոցում իր ստառած, ընդարմացած մարմինը տաքացնելուց յետոյ՝ ժամանակը հասած է նկատույթ իր Թունաւոր խայթոցը դարձնելու երէկայ փրկիչների դէմ : Առանց այդ փրկիչների կամքը հարցնելու, նա բարեկամութեան ձեռք է մեկնում Փաշիստական Իսալիային : Առանց նրանց տրամադրութիւնները հաշի առնելու, նա փորձեր է անում մերձենալու Յունաստանին հենց այն պահին, երբ վերջինս անբարեացակամ դիրք է բռնել Ս. Հ. Միութեան դէմ : Միւս կողմից, իր ձեռները խառնակուն, յունական և ջրղական հօգսերից ազատելու ջանքերին ուղղելուց, Թիւրքիան նորից իր աչքերն ուղղում է դէպի Աւղանաստան, որ, ինչպէս ասացինք, համաթուրանական շարժումների դարբնոցն է հանդիսանում :

Այս խաղերը, որ ըստինքեան էլ մտահոգիչ են Ս. Հ. Միութեան պէս խախտու, արտաքին և ներքին դաւերի մատնած մի պետութեան համար կրկնակի չափով մտահոգիչ

պէտք է նկատեն, եթէ աչքի առաջ ունենանք, որ նրանց բոլորի յետևն էլ Անգլիայի մատր կայ: 1924-ից ի վեր Իտալիայի արտաքին քաղաքականութիւնը, մասնաւորապէս Մերձար Արևելքի և Բալքանի գործերում, ընթանում է միանգամայն ներդաշնակ անգլիականին, և կասկած չկայ, որ թիւրք-իտալական բարեկամութեան դաշինքը Անգլիայի օրհնութեամբ է կնքած: Ուշագրաւ նշաններ կան նաև, որ թիւրքիայի քաղաքականութիւնը յունական, քրդական և աւզանական ինդիւրներում թեյադրած է Անգլիայի կողմից: Իսկ թէ ինչի է ձգտում Անգլիան թիւրքիայի ձեռները գանազան կապանքներից ազատելու և դէպի Աւդանստան ուղղելու դիւանադիտութեամբ՝ դրա բացատրութիւնը պէտք է որոնել անշուշտ անգլո-խորհրդային հակամարտութեան մէջ, որ ինչպէս յայտնի է, վերջին խոլումից յետոյ բացայայտ թշնամութեան կամ «անդէն պատերազմի» հանդամանք է առել:

Պ. Ն. Միութեան վարիչներն ըստ երևոյթին անգիտակ չեն անգլո-թիւրքական մեքենայութիւններին: Նրանց պաշտօնական և ոչ-պաշտօնական թերթերը, ճիշտ է զսպւած ձևով, իրենց դժգոհութիւնը յայտնեցին թիւրք-իտալական և թիւրք-աւզանական դաշնադրութիւնների առթիւ, իսկ «Չարեա Վոստոկա» թերթը, որ բոլշևիկների արևելեան քաղաքականութեան արտայայտիչն է հանդիսանում՝ յանկարծ սկսեց հետաքրքրել քրդական շարժումներով՝ նրանց մէջ ազգային-ազատագրական յեղափոխութեան տարրեր գտնելու համար... Մի քանի գաւառական թերթեր էլ, թիւրքիայի կասկածելի ընթացքը պատեն առիթ համարեցին լոյսաշխարհ հանելու այն մութ գործերը, որ կատարում են թիւրքական գործակալները թաթարական

չրջաններում: Սակայն, բոլշևիկեան դիւանադիտութեան հրապարակային « ելոյթները » սրանից այն կողմը չանցան: Ըստ երևոյթի նպատակայարմար չնկատեց այդ դիւանադիտութեան պատճառած ընդհանուր հիասթափութիւնը աւելի ևս խտացնել՝ արևելեան քաղաքականութեան այս նոր անշուշտութեան մասին հրապարակօրէն երկար-բարեկ խօսելով: Իսկ թէ ինչ է անցնում-դառնում բոլշևիկեան դադարի դիւանադիտութեան լարելիսթոսում՝ դա, առ այժմ դռնէ, մտաչելի չէ հասարակ մահկանացուների տեսողութեանը:

Աւելորդ է ասել, որ այս ուրազծող քաղաքական ընթացքը կենսական նշանակութիւն ունի յատկապէս մեզ համար: Որովհետև եթէ այդ ընթացքը իր տրամաբանական վարձանին հասնի, այսինքն, եթէ թիւրքիան — Անգլիայի դրդամբ թէ ինքնաբերաբար, Պ. Ն. Միութիւնը օղակող միւս թշնամի պետութիւնների հետ միասին թէ առանձին—թշնամական գործողութիւնների ձեռնարկի այդ Միութեան դէմ՝ նրա առաջին գոհը Հայաստանը և Հայ ժողովուրդը պէտք է լինեն: Սա մեր երկրի աշխարհագրական և քաղաքական պայմաններով ճշտած մի ողբերգական վիճակ է, որի մասին երկու կարծիք չի կարող լինել: Ողբերգական է այս վիճակը մանաւանդ այն պատճառով, որ Հայաստանի դռները բաց են թիւրքիայի առաջ, իսկ խորհրդային կարմիր բանակը շատ անյուստալի պահակ է այդ բաց դռներից թշնամու ներխուժումը արգելելու համար:

Արդ, ի՞նչ են մտածում Հայաստանի ներկայ վարիչները այս ահաւոր կացութեան հանդէպ: Եւ մտածո՞ւմ են արդեօք նրանք այս մասին...

# Յ Ո Վ Ա Կ Ի Մ Բ ՈՒ Դ Ա Ղ Ե Ա Ն

(1870 —1928)

Մնած է Կաղզանում 1870 թ.ին, ուր և անց է կացրել մանկութեան օրերը: Միջնակարգ դպրոցը աւարտելուց յետոյ, 1891-ին անցաւ Օդեսա և ընտրեց համալսարանի իրաւաբանական բաժինը, որը աւարտեց 1895-ին: Ուսանող ժամանակից մասնակցութիւն է ունենում Հ. Յ. Դաշնակցութեան մէջ և իր սրտին մօտիկ համարելով կուսակցութեան զբաղեցնող իւրն-դիրները՝ եռանդով աշխատում է: Ուսումը աւարտելուց յետոյ փոխադրուում է Ալեքսանդրապոլ, որտեղ զբաղուում էր իրաւաբանութեամբ, միաժամանակ աշխատելով կուսակցական շարքերը կազմակերպելու բաւականին դժուարին գործով — 96-97-98 թւերի հայկական հարցի ընթացքի օրերին, երբ թիւրք կառավարութիւնը յեղափոխութիւնը ձգտելու և հայկական հարցը թաղելու նպատակով կազմակերպեց հայերի դանդաւածային ջարդեր Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Լոբանով-Ռոստովսկիի բարեհաջողութեամբ:

Հետզհետէ Յովակիմը սկսում է դառնալ կարևոր կուսակցական դէմք: Թէ է շատ անգամ պաշտօնական մարմինների և ժողովների մէջ չէ երևում. սիրում էր և ձգտում լինել անկասկած, սակայն, միշտ պատրաստ էր ամենայն սրտցաւութեամբ գործնական աջակցութիւն ցոյց տալու: Գերազանցապէս զաղափարական էր և նուրբ պրպտող միտք ունէր, սրամիտ էր և իր կծու լեզուն շատ աւելի գործ էր անում ընկերների ձախող քայլերի վերաբերմամբ, քան կուսակցական հակառակորդներին ու թշնամիներին: Իր կենցաղով, վարելակերպով ժողովրդասէր դեմոկրատ էր: Ազատամիտ լինելով հանդերձ՝ իր արտայայտութիւնների ընթացքին շատ կրճատ էր, սակայն, ոչ թէ անձնական թշնամանքով, այլ նախանձախնդրի՝ գաղափարականութիւնը, արդարութիւնը պաշտպանելու: Հոգին բարձր և անբիծ պահպանելու դերազոյն ձգտումով սուգորւած: Այդպէս ենք տեսնում նրան և 1919-ին, երբ իբրև Հայաստանի Պորհրդարանի անդամ, աշխատակցուում էր Պորհրդարանի օրէնդրական կենտրոնի, կամ զբաղւած իր լինում նախապատրաստական աշխատանքներով բազմաթիւ յանձնաժողովների մէջ:

Նոյնն էր նա, երբ շատ ծանր ջղային մթնոլորտում Պորհրդարանի դաշնակցական Փրակիցայի նախագահ ընտրելով՝ ղեկավարում էր նրա աշխատանքները և ժողովները:

1920-ի մայիս 5-ին, երբ Հ. Յ. Դաշնակցութիւնը համայնավարների դաւադրական աշխատանքները աչքի առաջ ունենալով՝ ստանձնեց իր դէկտատուրան և իւրօր ստիպւեց ամբողջութեամբ կառավարութիւն դառնալ, Պորհրդարանի անդամները անցնելով գանազան վայրեր՝ անմիջապէս լծեցին գործնական աշխատանքների պայքարելու համայնավար ըմբոստութիւն-

ների դէմ, Բուզաղեանը վերցրեց իր վրա ամենապատասխանատու և վտանգաւոր պաշտօններից մէկը — անցաւ Ալեքսանդրապոլ՝ ըմբոստութեան կենտրոնը — ժողովրդի լքւած տրամադրութիւնը բարձրացնելու և կազմակերպելու պատժողական-անարեւելական խումբ: Դաւադիրներին դէմ, որը և փայլուն կերպով յաջողեց: Նոյնպիսի յաջողութեամբ Յովակիմի ղեկավարութեան ներքոյ փետրւար 18-ի ապստամբութիւնից յետոյ կազմակերպեց «Ռուսանդական Գւարդիա»-ն, որը գիշեր-ցերեկ միշտ պատրաստ էր ամէն անակնկալ դէպքերում օգնութեան գնալ՝ ճակատում կուռղեներին և թէ երևանում:

Իր քայլերի մէջ Յովակիմը շրջահայեաց էր և զգոյշ: Երևույթութեան մէջ մնացել է մի փոքրիկ դէպք՝ այդ դիժը բնորոշող: 1920թ. դեկտեմբեր 2-ի Հայաստանի կառավարութեան մեծամասնականներին փոխանցումից յետոյ, վերջինները շարքեցին իրենց տւած ոչ մի խոստումը, ի միջի և այլոց և այն՝ թէ ոչ ոքի չպէտք է ձերբակալեն, և խորհուրդ տւին Հայաստանից հեռանալու մի քանի նախարարների և Պորհրդարանի անդամների. սակայն, 3 օր շնացած, այդ մարդկանց ձերբակալեցին Վրաստանի սահմանի վրա և բերելու երևանի բանտը: Այս դէպքը շատ ծանր էր ազդել ընկերների և ժողովրդի վրա, որը սկսել էր կասկածել մեծամասնականների շիտակութեան վրա: Բուզաղեանը մնացել էր երևանում ազատ, նա դիտում էր, ուսումնասիրում նոր կացութիւնը և որոնում հնարաւոր ելք: Շատ չտեւեցին նրա պրպտումները: Հաջիւ 2 շաբաթ անցած, նրան ձերբակալում են և բերում այն սենեակը, ուր արգելափակւած էին կառավարութեան նախկին անդամները: Բուզաղեանը, ջերմ բարեկեցից յետոյ, շատ զգոյշ փոփոսց թէ բան ունի մեզ յայտնելու, սակայն, պատերն իսկ չպիտի լսեն: Մենք մէկ ժամ սպասելուց յետոյ, մի առիթով հեռացրինք մեզ սպասարկող մարդուն և համոզւելով, որ ոչ ոք լսող չկայ, շրջապատեցինք նրան լսելու նորութիւնը. նա շատ ցած ձայնով յայտնեց մեզ առաջին յուսատու լուրը, թէ զբոսում ժողովուրդը և ընկերները շատ վրդովւած են և պատրաստութիւններ են տեսնում:

Իր փաստաբանական գործունէութեան մէջ Բուզաղեանը իւրացրել էր և բարձր էր պահում այն գաղտնամիտ գաղափարական և բարոյական սկզբունքները, որ յատուկ էին այն ժամանակայ ուսակական դատական և երդւեալ Հաւատարմատարների հիմնադրութիւններին: Յովակիմը զբաղւած էր զվաւորապէս քաղաքային և դատերով և միմիայն արդար դատուող, այսինքն, դրեց չէր պաշտպանի իր գործը, որ իր խղճի տեսակէտից անարդար էր, որ պաշտպանւելիք մարդը, նրա տեսակէտից, անպայման յանցաւոր արարք ունի՝ գործած, որին պաշտպանելու համար

Տարկաւոր էր ունենալ փաստարանական ստիպատական հրուշակեցիլա եւ ճկուն-յարտաբուլ խիղճ: Այդ տեսակ դատեր նա մերժում էր կտրականապէս եւ ընդհակառակը, եթէ դորժի ուսումնասիրութիւնը նրան համարում էր, թէ պաշտպանութեան համար առաջարկած անձը մեղք չունի, զո՛հ է դաւերի կամ իր միամտութեան, նա ուրախութեամբ ստանձնում էր այդ տեսակ գործ եւ չէր խնայում ոչ եռանդ եւ ոչ միջոց պաշտպանելու եւ արգարութիւնը վերականգնելու: Փայլուն ճառասիրտ չէր, սակայն, նիւթը լաւ, բաղմակովմանի ուսումնասիրող. սրամիտ եւ տրամաբանօրէն դաստարարած նրա ճարտ մեծ տպաւորութիւն էր գործում թէ՛ ունկնդիրներէ վրա, թէ՛ դատաւորներէ եւ մեծ մասամբ նրան յաջողում էր հասնել իր նպատակին, որի համար եւ լաւ իրաւարանի համբաւ էր վայելում ոչ միայն Արեգազըրպողի, այլ եւ Կարսի ու Երևանի շրջաններում:

Ամուրի էր, բայց միշտ շրջապատւած մեծ եղբոր բազմանդամ ընտանիքով եւ նրա հոգեբով տարած: Կատակասիրտ էր, սակայն, միշտ թախիծը վրան, մեղամարդոտ. թւում էր մեղ, թէ ինչ որ մշտական ցաւ կրժում էր նրա սիրտը, հոգին: 1921-ի քաղաքական վայրիվերումները, հայրենիքի կորուստը, քաղաքական դարձելի հորիզոնը եւ ընկերային հիւանդոտ մթնոլորտը մեծապէս ազդել էին վրան: Նա կորցրել էր հողեկան հաստատակալութիւնը, Թաւրիզում բոլորովին ստանձնացել էր եւ քաւած կեանք էր վարում շուգեանլով ոչ ոքին տեսնել: Նա սանջւում էր արդէն հողեկան հիւանդութեամբ, որը երեք վերջին տարիները մաշեց նրան եւ հասցրեց գերեզման:

Sit tibi terra levis!  
Յ. ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

## Հ ա կ ա խ ո թ ի ե ղ ա յ ի ն գ ա ղ ա փ ա թ ի ա կ ա ն պ ա յ Մ ա թ ի յ ա տ ա կ ա ն ա ո ա ջ ա դ ը ու թ իւ ն ն եր լ Հ ա յ ա ս տ ա ն ու մ<sup>\*)</sup>

Հակախորհրդային գաղափարական պայքարի առաջին խնդիրը պէտք է լինի Հայաստանում այսպէս կոչւած վիճելի հողամասերը Հայաստանին միացնելու պահանջը:

Այս հարցի մասին այնքա՛ն յաճախ եւ այնքա՛ն շատ է գրուած մեր մամուլի մէջ, որ նա առանձին լուսարանութեան չէ կարօտում այլ ևս: Կարող են մինչև անգամ ասել, թէ նրա մասին հայ ժողովրդի հետ խօսելու էլ կարիք չկայ, որովհետև այսօր Հայաստանի յետին դիւղերում էլ քաղաքականապէս փոքր ինչ հասուն ամէն մի Հայ մարդ գգում եւ դիտակցում է անդրդովասեան հակական գաւառները Ագրեջանի եւ Վրաստանի ճիրաններից դուրս կորցելու եւ Հայաստանին կցելու պահանջը:

Սակայն, սրանով մեր դերը վիճելի հողամասերի հարցում չէ սպառուած: Երկու հանգամանք անհրաժեշտ են դարձնում նրա ներքո՛վ գրագրումը: Առաջինն այն է, որ հայ բուլճերիները եւ նրանց կառավարական խամաճիկները իրենց ապիկարութիւնը քողարկելու, կամ վրացի ու թաթար ընկերներ լաւաբիւն չլիպչելու» համար, ամէն ջանք գործ են դնում հակազդելու մեր պրոպագանդին եւ միջանդու հայ ժողովրդի ազգային-պետական գիտակցութիւնը: Հակազդեցութիւնն էլ, ինչպէս գիտէք, չէ կատարուած միայն խօսքով եւ գրքով, որին մենք կարող էինք եւ կարևորութիւն չտալ, որովհետև նրանց ընդ ոք չէ հասուում — այլ ասելի՛ աղբու միջոցներով, ինչպէս սիրաշահութեան կաշառքը կամ բանտի ու արտորի

սպանայիքը, որոնցից կարող են հրապուրել կամ վախենալ տկար հոգիները: Երկրորդ հանգամանքն էլ այն է, որ հայ ժողովուրդը, ճիշտ է, գիտակցում եւ զգում է մեր հողային պահանջների արդարութիւնն ու անհրաժեշտութիւնը, սակայն, կլանւած աօրեայ բազմապիսի հոգեբով, որ ստեղծել է եւ շարունակում է ստեղծել նրա համար բուլճերիկեան բռնապետութիւնը՝ չէ անդրադառնում այդ պահանջներին այնպիսի թափով եւ ուժգնութեամբ, որ նրանց իշխանութիւնը սարսի, իսկ տկար հոգիները ամբապնդեն:

Մեր գաղափարական պայքարը ահա այս առաջադրութեամբ պէտք է ծաւալուի վիճելի հողերի խնդրում: Նա պէտք է գործօն դարձնի ժողովրդական զանգուածները տրամադրութիւնները մինչ այն աստիճան, որ օրեայ իշխանութիւնը հարկադրաբար մղուի գէպի հետեւ երկընտրանքը. կա՛մ արտայայտուի հանդիսանալով ժողովրդական տրամադրութեանը՝ հիմնովին փոխել իր լեզուն հարեանների եւ Ս. Հ. Միութեան ստորապետի հետ այս հարցի մասին խօսելիս՝ եւ կա՛մ, իբրև մի դաւաճանական կրիկ, մատնել անարգական կացութեան՝ ահ ու զողով սպասելով այն ժամին, երբ ժողովրդական քաջացի դուրս կը շարտի նրան իր միջից:

Ըստ ինքեան հասկանալի է, որ այս պայքարը առանձին խնամքով պէտք է առաջ մղուի վիճելի հողամասերում: Մենք այստեղ խնամքի մասին ենք խօսում եւ ոչ թէ ուժգնութեան, որովհետև այդ հողամասերում ապրող հայ ժողովուրդը՝ օտար տիրապետութեան լուծ անմիջականօրէն գզալով՝ արդէն իսկ ուժեղ տրամադրութիւն ունի պայքարելու իր ազատախրութեան համար. այնքան ուժեղ, որ նոյն-իսկ տեղական հայ բուլճերիները չեն կարողանում

\*) Այս պայքարի ընդհանուր առաջադրութիւններին մասին խօսել ենք «Դրօշակ»ի №12-ում 1927թ.

դերձ մնալ նրա ազգեցութիւնից: Մեր պայքարն այստեղ նպատակ պէտք է ունենայ միւտ խառնած պահել վրացի և թաթար բուլշեփիներէ դուրսը և Ռ. Ն. Միութեան վարիչներին այն համոզումը ներշնչել, որ Անդրկովկասում անհնարին է լիուլի տեական խաղաղութիւն հաստատել, մինչև որ հայ ժողովրդի դէմ կատարւած անարդարութիւնը շարքադրելի՝ նրա սահմանակից հատուածներին ազգային ինքնորոշման իրաւունք տալով:

Վիճելի հողամասերի խնդրում մեր պայքարը առաջ պէտք է տարւի այնպիսի մի ձևով, որ թէ՛ Հայաստանում, թէ՛ Անդրկովկասում և թէ՛ արտասահմանում յստակօրէն զգայելի, որ մենք բաւականներ չունենանք մտահոգութեամբ չենք բռնւած, ինչպէս որ այդ ներկայացնում են վրաց տարազինները ոմանք, սակեւով թէ՛ մենք ողբ քան բարձրացնում կտրւած դիկի մտքերի համար: Պէտք է ամենքի համար պարզել, որ այս խնդրի լուծումը կենսական նշանակութիւն ունի ոչ միայն հայ ժողովրդի քաղաքական ապագայի, այլ և ներկայի համար: Պէտք է ամենքը հասկանան, որ հայ ժողովուրդը չէ ուզում և չէ կարող հաշուել այն շարժութեան հետ, որ ինքը Անդրկովկասում քանակով երկրորդը լինելով, իսկ որակով, ստեղծարարական կարողութիւններով ոչ մէկից յետ չմնալով՝ սեղմելի մի նեղ հողաւերտի մէջ, որ աւելի քան երկու անգամ փոքր է Վրաստանից և գրեթէ երեք անգամ փոքր Ալգերիանից: Այս անարդարութեան երեսից՝ Հայաստանը այսօր նոյնիսկ արտաքուստ պետութեան սպաւորութիւն չէ թողնում, այլ մի ընդարձակ դատարի, և, գրան համապատասխան էլ, հայ ժողովրդի քաղաքական կշիռը Անդրկովկասում և Ռ. Ն. Միութեան մէջ վերածւած է արհամարհելի քանակի:

Այս անարդարութիւնը վերացնելու համար ոչ մի գոհաբերութիւն մեծ չէ: Եւ մեր պայքարը անհրաժեշտ գոհաբերութեան պատրաստակամութիւնը պէտք է հրահրի հայ ժողովրդի մէջ:

Հայաստանի հողերի ընդարձակման և նրա քաղաքական կշիռ ծանրացման պահանջի բնական շարունակութիւնն է կազմում Տաճկահայաստանի հարցը, որ մեր գաղափարական պայքարի երկարող խնդիրը պէտք է կազմի հակախորհրդային ճակատի վրա:

Տաճկահայաստանի և անդրկովկասեան Հայաստանի միացման պահանջը առանձին ուժգնութեամբ պէտք է հրահրել մեր կողմից մասնաւորապէս այն պատճառով, որ խորհրդային իշխանութիւնը անթափանցելի պատնէտով անըպետել է իրարից երկրում մնացած հայ ժողովուրդը և իր անբաղկ բունների շուրջը յաճող տաճկահայութիւնը: Երկրի ժողովուրդը այսպէս թէ այնպէս լսում է, օրինակ, դարաբաղցիների և ակալքայալիցիների տրամադրութեան մասին և որոշ չափով էլ ազգում այդ տրամադրութիւնից՝ անզրկովկասեան Հայաստանի ամբողջացման գաղափարով ստորգրելու համար: Սակայն, արտասահմանի տաճկահայ տարաբարութեան բաղձանքները և նրանց անկատար մնալու պատճառով առաջացած ցաւի ճիչերը նրան չեն հասնում կենդանի արձագանք առաջ բերելու համար:

Մեր պայքարը ուժգին պէտք է լինի այս հարցի շուրջը մանաւանդ այն պատճառով, որ խորհրդային

իշխանութիւնը առանձին եռանդով աշխատում է արմատացնել հայ ժողովրդի մէջ այն համոզումը՝ թէ տաճկահայական հարցը այլևս զոյուրթիւն չունի, թէ նա ընդմիջտ թաղւած է: Աւելի՛ ևս: — Մի անօրինակ շնականութեամբ հեղինակով հայ ժողովրդի անհամար զոհերի յիշատակը՝ այդ իշխանութիւնը ամէն առթիւ կրկնում է Զինովիէի խօսքը, թէ «հայական հարցը լուծւած է», հետևաբար ոճիւր են զործում նրանք, ովքեր «սահմանի այն կողմն են նայում»:

Իր գործին հմուտ մի պրոպագանդիստի ձեռքին այսքանն էլ բաւական է ժողովրդական ցատում առաջ բերելու համար, որովհետև «Հայկական հարցից» լուծումը համարել այն, որ թիւրքերը տաճկահայութեան մի մասը կտորել, իսկ միւս մասը վտարել են երկրից, վերջինս, զայլերի ու արջերի որջի վերածելով՝ դա նշանակում է թքել հայ ժողովրդի պահանջներական արդութիւնների վրա: Բայց մեր պրոպագանդիստը ուրիշ նիւթեր ևս ունի իր տրամադրութեան տակ խորհրդային իշխանութեան անմարդկային կերպարանքը մերկացնելու համար. նիւթեր, որոնք առանձին վերլուծութեան և մեկնութեան չեն կարողում ապացուցանելու համար, որ Հայկական հարցի այդօրինակ լուծումը՝ առաջին հերթին բուլշեփեան սխրագործութիւնների արդիւնքն է: Մտածել միայն, թէ ինչ վիճակ կունենար այսօր Տաճկահայաստանը, եթէ հոկտեմբերեան յեղաշրջումը չլինէր և եթէ Մուստաֆա Բեմալը բուլշեփեից օժանդակութիւն չստանար Թիւրքիայի բոլոր ազգային հարցերը թիւրքին վայել ձևով «լուծելու» համար...

Մեր գաղափարական պայքարը երրորդ խնդրին է պաշտպանել Հայաստանի պետական ինքնուրոյնութեան մնացորդները կենտրոնական իշխանութեան կրանիչ քաղաքականութեան դէմ: Վերջինիս մասին մենք առիթ ենք ունեցել արտայայտելու այս էջերում՝ ցոյց տալու համար, որ բուլշեփեան «բեղափոխութիւնը» իր ընկերային բովանդակութիւնն սպառելուց յետոյ — այսինքն ծրարւած ընկերակարական հասարակարգը կապիտալիզմի ծաղրանկարներով փոխարինելուց յետոյ — այժմ էլ ձեռնամուխ է եղել հաշիւաբար դարի ենթարկելու իր քաղաքական բովանդակութիւնը, որի մէջ ազգային հարցի լուծումը, ինչպէս յայտնի է, առաջնակարգ տեղ էր բռնում: Այս լուծումը, որ սկզբում հասկացում էր ազգերի ինքնորոշման իրաւունքի անկապակաղ գործադրութեան ձևով, յետոյ դարձաւ ինքնորոշում ազգերի հարկադրական միացում, իսկ այժմ էլ դառնում է միացած ազգերի ստեղական ինքնավարութեան ունչացում:

Համաձայն «ԻՆՅԻՍ ԵՆԵՊԵՐՔՈՒՄ»-ի հաղորդագրութեան՝ այս մտքով է արտայայտել վերջերս Ստալինը «Պոլիտբիւրո» նիստերից մէկում: Նոյն թերթը հաղորդում է նաև, որ ազգային հանրապետութիւնների ներկայացուցիչները բողոքում են Ստալինի կենտրոնաձիգ քաղաքականութեան դէմ և ձգտում են ցոյց տալիս պաշտպանելու «հոկտեմբերեան յեղափոխութեան քաղաքական նաճուսնները» Խուսաւտանի նաճուղական ակտիւակներին:

Հաստատուած կարող ենք սակել, որ հայ բուլշեփեիները ստրկական համակերպութեամբ պէտք է հետևեն Ստալինին և ոչ թէ իրենց ազգային-պետական

իրաւունքները պաշտպանող միւս բոլշեւիկներին: Այս ստրկական համակերպութիւնը ջորարկելու համար նրանց բաւեր չեն պակասի, ի հարկէ. — «ինտերնացիոնալիզմ», «անտեսական ներքնաշէնք և քաղաքական վերնաշէնք», «մարքսիստական դիալեկտիկա ազգային հարցում» և այլ այս կարգի սպրանքներ շատ ունեն նրանք՝ միամիտներին աչքերին փոշի քանկելու համար: Եւ մեր պայքարի կողմնակի առաջադրութիւնները մէկը պէտք է լինի նոյնպէս ջորագործ անել նրանց, որ նոյնիսկ միամիտները տեսնեն, թէ ի՞նչ դերակերպ մէջլքի տէր և քաղաքականապէս ինչքա՞ն անկախազէր մարդիկ են վարում այսօր հայ ժողովրդի ճակատագրի: Սակայն, ի հարկէ, այդ պայքարի հիմնական նպատակը պէտք է մնայ Հայաստանի հանրային կարծիքը շահագրգռել մեր ազգային-պետական կազմակերպութեան մտացորդների պաշտպանութեան հարցով, որպէսզի նրա վարչչները չկարողանան հեշտութեամբ այդ մտացորդները անդրելու լիսեան կուսակցական դեռեֆորտի (առեստուր) առարկայ դարձնել:

Ներգաղթի խնդիրը, ինչպէս միշտ այնպէս և այժմս կազմում է մեր գաղափարական պայքարի ամենակարևոր առաջադրութիւններից մէկը, թէև մենք նրան, շարայրութեան կարգով այստեղ չորրորդ տեղն ենք տալիս:

Այս հարցի մասին ես խիստ շատ է գրած և լուած, և մենք երկար ու բարակ լուսարարութիւններ տալու հարկադրանքի տակ չենք գտնում այլևս: Աւելորդ չենք նկատում, սակայն, անցորակի մատնաշէն վիշտաւոր թեր և դէմ պատճառարարութիւնները, որոնք վերջին տարիների ընթացքին յստակօրէն ձեակերպւել են այս հարցի շուրջ:

Նախ երկրի հայ ժողովրդին պէտք է բացատրել, որ մենք թիրաքահարութեան ներգաղթի խնդիրն արծարծելով՝ երկու հիմնական նպատակ ենք հետպնդում. առաջին՝ ուժեղացնել երկրի հայրութիւնը, որ չափազանց անհրաժեշտ է թէ՛ Հայաստանի պետական կզի մեծացման և թէ՛ նրա պաշտպանութեան համար և երկրորդ՝ ապստել արտասահմանում ցրւած մեր ժողովրդի րեկորները անգաստական կեանքի տանջանքներից և անխուսափելի այլասերման և օտարացման վտանգից: Երկու նպատակներն էլ այնքան պարզ են և հսկանալի, որ մեծ ջանք է պահանջուում նրանց ժողովրդականացման համար:

Այսուհետև պէտք է մերկացնել ժողովրդի առաջ ամբողջ սուտն ու կեղծիքը, այն պատճառարարութիւնները, որ առաջ են քալում խորհրդային վարչչները դրսի հայրութեան ներգաղթը խափանելու համար:

Նրանց առաջին պատճառարարութիւնն այն է, թէ միջոցներ չկան թիրաքահայ տարագիրներին երկիր փոխադրելու համար: Գժւար չէ ցոյց տայ, որ այս պատճառարարութիւնը հիմնովին չսուտ է: Նախ՝ որովհետև Հայաստանի խորհրդային իշխանութիւնը ամուր փակել է երկրի դռները նաև այն տարագիրներին առաջ, որոնք կարող են սեփական միջոցներով հայթայթել իրենց ճանապարհի և նոյնիսկ տեղաւորման ծախսերը: Այնուհետև՝ և թէ խորհրդային իշխանութիւնը չիտակ և սրտացաւ վերաբերմունք ունենայ դէպի ներգաղթի հարցը՝ արտասահմանի գաղութային

կազմակերպութիւնները և անհատ հայերը անկասած աւելի՛ մեծ պատրաստակամութեամբ դրամական միջոցներ կր տրամադրեն այս գործի համար: Այս միջոցները չեն տրամադրում զլլխաւորապէս այն պատճառով, որ ամենքն էլ զգում են, որ այդ իշխանութեան ձեռքին ներգաղթի հարցը լոկ պատրուկ է Հանդիսանում արտասահմանի հայութիւնից դրամներ կորդելու և գանազան կուսակցական կամ յիմարական ձեռնարկների վրա վատնելու համար: Վերջապէս՝ եթէ Հայաստանի այսօրայ վարչչները ողի ի բուն աշխատելին ներդաղթի համար՝ անկարելի է, որ նրանք Հայաստանի պետական ըրիջլէկց տարեկան գունէ մի քանի հարիւր հազար րուբլի չկարողանային տրամադրել այս գործին: Էլ չինք խօսում այն մասին, որ այդպիսի աշխատանքի դէպքում նրանց անկասկած կը յաջողէր որոշ օտանակութիւն ստանալ Ս. Հ. Միութեան զանձարկիցի և մինչև իսկ արտասահմանեան օտար աղբիւրները:

Նրանց երկրորդ պատճառարարութիւնն է, թէ Հայաստանում հող չկայ թիրաքահայ գաղթականներին տեղաւորելու համար, որ նոյնպէս բացարձակապէս սուտ է: —

Համաձայն խորհրդային մամուլի մէջ լոյս տեսած վիճակաբութիւնների՝ Սորհրդային Հայաստանի այժմուայ տարածութեան վրա համաշխարհային պատերազմի նախորդակին սպրում էր 1.050.000—1.075.000 մարդ\*) Այս տարւայ յունւար 1—ին, ըստ նոյն վիճակաբութիւնների, նոյն տարածութեան վրա ամենատատ հաշւով, մէջն առնելով նաև երկրաշարժի և այլ պատճառներով երկրից ժամանակաւորապէս հեռացածների՝ կար 952.480 մարդ...

Այսպիսով, ներկայումս՝ Հայաստանում 91.500—116.500 մարդու ազատ տեղ կայ, որ կարող է տրեւել գաղթականներին: Կլոր հաշւով ասենք 100.000 մարդու տեղ:

Այս թիւը պէտք է նագաղդն նկատել հետեւալ պատճառներով.

ա. Հայաստանի տնտեսութեան «ինտենսիֆիկացիան» և «ինդուստրիալիզացիան», որոնց մասին հայ բոլշեւիկները թմրկահարում են 1923—էջ ի վեր՝ պէտք է աշխատող նոր ձեռքերի կարիք ստեղծած լինի—եթէ, ի հարկէ, այդ թմրկահարութիւնները սուտ չեն:

բ. 1922—էջ ի վեր շորացող ճահիճները, բացող ստուններ և անողող անջրտի հողերը — եթէ սրանք իրականութիւն են, ինչպէս նպատակաւոր են հայ բոլշեւիկները — նոյնպէս պէտք է առնազն մի երկու տասնեակ հազար նոր աշխատաւորների սպրումին:

գ. Եթէ Հայաստանում, աղբար հողաբաժանման հիմունքներով թուրքերին և ուսներին տրամադրւած հողերը հաւասարացւեն մարդ գլուխ հայերին տրւած հողերին՝ կը գոյանայ մի քանի տասնեակ հազար ղեւեառի տարածութեամբ հողային Փոնդ, որ կարելի է այս կամ այն կերպ օգտագործել գաղթականների համար:

դ. Վերջապէս, նոյն նպատակի համար կարելի է օգտագործել և Հայաստանի մօտ 107.000 դեւեստիւն արօտները, որոնք խորհրդային իշխանութեան բարե-

\*) Экон. Вестн. Армения, 1928, № 2-3.

Հանձնարարութեան արար Ազգային թուրք քաղաքացիական պատերազմի ժամանակ, չնայած որ նրանց բուն բնակավայրը օտուած է բնութեան ամենաճոխ բարիքներով:

Այս ամենի վրա եթէ աւելացնենք և վիճելի հողամասերում նոր դաղթականներ տեղաւորելու հնարաւորութիւնները—ինչպէս, օրինակ, Այսալքարիում, ուր պատերազմից առաջ մօտ 78,000 հայ կար, իսկ հիմա միայն 50,000 — կամ Շարուր—Նախիջևանում, ուր նախկին մօտ 60,000 հայ բնակչութիւնից մնացել է միայն 4000 — այն ժամանակ կը տեսնենք, որ Հայաստանի խորհրդային իշխանութիւնը ոչ թէ 100,000, այլ 250,000—300,000 դաղթականներ տեղաւորման ճար կը դանի, եթէ ուզենայ:

Սակայն, ցաւն այն է, որ նրան այս հարցը չէ գրադեցնում: Ձէ գրադեցնում, որովհետեւ դաղթական հայութեան վիճակը նրան չէ հետաքրքրում, իսկ Հայաստանի հայութեան ուժեղացումից նա ոչ մի բարիք չէ սպասում իր համար: Նրա պատճառաբանութիւնները ներգաղթի դէմ միամտորոնքի խաբելու և «ներսի» ու «բարսի» հայութեան մէջ վիճ բանալու քննող ունին— ուրիշ ոչինչ: Սրա համար էլ մեր պայքարը ամանձին ուշադրութեամբ պէտք է կենտրոնանայ ներգաղթի հարցի շուրջը:

Հայ ժողովրդի, մանաւանդ նրա մատաղ սերնդի ազգային ոգու պահպանման խնդիրը ևս մեր հակախորհրդային դաղափարական պայքարի առարկան պէտք է դառնայ:

Այս մարդի մէջ մեր աշխատանքը աւելի՛ ծանր է, քան այն, ինչ կատարում էինք ցարիքի օրօք: Որովհետեւ այն ժամանակ ապագայնացման վտանգը ճակատից էր դալիս և ուղղակի հարւածում: Ռուսաց կառավարութիւնը արգելում էր մեր յիշի գործածութիւնը պետական և հանրային կենտրոն, փակում ազգային զարդաները, բացառապէս ռուսական դատախարակութիւն տալիս պետական և համայնական դպրոցներ յամալսող մեր մատաղ սերնդին և բացմալիսի դժբարութիւններ յարուցանում հայ թատրոնի, մամուլի և ազգային մշակոյթի այլ գործօնների դէմ: Հայ ժողովուրդը տեսնում էր այս ամենը և պաշտպանուած նրանց դէմ ինչով կարող էր:

Բողջեկները ապագայնացման քաղաքականութիւնն այլ բնոյթ է այլ ձևեր ունի: Նա ճակատից չէ դալիս, այլ թիկունքից, գալիս է ոչ թէ իշխանութեան խոճոռ դէմքով, այլ ամբողջարի հաճախօտութիւններով: Նա բացառապէս ռուսացման նշանաբաններ չէ առաջարկում իրեն, որ կարող էր վերադառնալ հայ ժողովրդի ազգային ինքնասիրութիւնը, այլ միջադաշնացման նշանաբանները: Վերջապէս, այս ապագայնացման քաղաքականութիւնը ազգային մշակոյթի արտաքին նշանների դէմ չէ գործում, այլ նրանց էութեան դէմ: Նա, օրինակ, չէ փոխում հայոց լեզուն պետական լեզու դարձնելու համար մեր կառավարութեան կողմից արած կարգադրութիւնը, բայց այնպէս է արտադրում, այլանդակում և գունդեցնում այդ լեզուն, որ ճաշակի տէր ամէն մի մարդ անհրաժեշտութիւն գրայ «Լենինի լեզու»—ին սպաւինելու՝ իր կուլտուրական պահանջները բաւարարելու համար:

Նա մեր ազգային դպրոցները չէ փակում: Ընդհակառակը, նրանք թիւը աւելացնում է: Բայց այդ դպրոցների մէջ մեր մատաղ սերունդը դաստիարակում է այնպիսի ոգով, որ նա հայութեան հանդէպ որևէ հարգատուութիւն չզգայ: Նոյն քաղաքականութիւնը մենք նկատում ենք՝ կրակաճութեան, կ' թատրոնի, կ' արևատի, կ' պատուութեան կ', առհասարակ, հայկական մշակոյթի ամբողջ անդաստանում:

Ազատ ստեղծագործութեան, ազատ մրցակցութեան պայմաններում, այն ամենը, ինչ որ հայ բողջեկներն իրեն «ազգային մշակոյթ» են ներկայացնում՝ մի քանի ամսում դուրս կը շարժուէ հրապարակի: Այս բանը քաջ յայտնի է նրանց: Դրա համար էլ նրանք, ոչ մի գունդեցնում և բռնութեան առաջ կանգ չառնելով՝ փակում են ազգային-մշակութային ստեղծագործութեան բոլոր ուղիները:

Թերևս մեր հակախորհրդային դաղափարական պայքարը ոչ մի կէտում տեքնիքապէս այնքան դժուար չէ, որքան այս հիլիգիտրոլ կէտում: Բայց և այնպէս, մեր կարելին պէտք է անենք հայ ժողովրդի և մասնաւորապէս նրա մատաղ սերնդի ազգային ոգին պահպանելու և հայկական մշակոյթի այլանդանը հակադրելու համար:

Մեր այս պայքարի մէջ առանձին տեղ պէտք է բռնեն այն աշխատանքները, որոնք կատարելու են հայկական «կարմիր» բանակի մէջ:

Բողջեկները և նրանց արտասահմանեան արքանակները շարունակ գրապարտում են մեզ, թէ մենք թշնամի ենք «կարմիր» բանակին, թէ մենք նրան քաջալուծում ենք հետապնդում ևն: Մենք չենք կարող թշնամի լինել հայկական բանակին — ինչ դոյնով էլ նա յորջորջելու լինի — որովհետեւ մենք նրան Հայաստանի պաշտպանութեան հիմնական խարխիսն ենք համարում: Մենք ոչ միայն նրա քաջալուծը երբեք չենք հետապնդել, այլ և, հակախորհրդային պայքարի ամենատուր պահերին էլ, պատրաստակամութիւն ենք յայտնել ամէն միջոցներով օժանդակելու նրա կողմակիբարութեանը և ուժեղացմանը: Այս դիտէ մասնաւորապէս Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կենտրոնական Վարչութիւնը, որի հետ մեր կուսակցութիւնը, 1921-ի վերջերին, այս մասին բանակցել և համաձայնութիւն է կայացրել: Այսօր ևս, վաղը ևս մեր տեսակէտը մնում է և մնալու է նոյնը: Հայաստանի բանակը, ինչ անկաններով էլ նրան մեծարելու կամ նուստացնելու լինեն մեր հակառակորդները, պէտք է ամբողջ հայ ժողովրդի դուրսդրանքի առարկան կազմի և ամէն աջակցութիւն դոնի նրա կողմից կազմակերպւելու և ուժեղանալու համար:

Այս այսպէս լինելով հանդերձ՝ մենք չեւտում ենք և պէտք է չեւտենք ամենուրեք, որ Հայաստանի բանակի առաջադրութիւններն ու խնդիրները մենք բոլորովին այլ կերպ ենք պահանում, քան հայ բողջեկները:

Նախ և առաջ մենք ձգտում ենք և ամէն կերպ պէտք է աշխատենք, որ այդ բանակը հետու մնայ քաղաքականութիւնից և շխտունի ներքին քաղաքացիական կոիւնքիին յօշուտ այս կամ այն կուսակցութեան: Այստեղ մեզ անանցանելի սարքեր և ձորեր են բաժանում բողջեկներից, որոնք ժողովրդական բա-



նախին «կարմիր» տիտղոսն են կոչնում՝ նրան իրենց բունպակտութեան գործիք դարձնելու համար:

Այնուհետև՝ մենք պէտք է ամէն ջանք թափենք, որ Հայաստանի բանակը, էթէ զաղաքական վաղանցիկ կացութեան հետանցելով էլ հարկադրւած է օրդանական կապ պահպանելու ուստիան կարծիք բանակի հետ, ներքնապէս այն զգացողութիւնն ունենայ, որ ինքը հայ ժողովրդի բանակն է և ամէն բանից առաջ պարտաւոր է նրան՝ պաշտպանել արտաքին վտանգները:

Այս ազգային գիտակցութեան կարևորութիւնը պատկերացնելու համար, բուսական է յիշել 1918 թիւը: Այն ժամանակ էլ կովկասեան բանակի մէջ կային զօրամասեր, որոնք ամբողջովին հայերից էին կազմւած: Սալային, չնայած որ կովկասեան ռազմաճակատի մերկացումը համար, բուսական է յիշել 1918 թիւը: Այն ժողովրդին՝ հնար մտնալ յիշեալ հայկական զօրամասերը պահել Կովկասում, որովհետև նրանք, ոչ միայն օրդանապէս, այլ և հոգեպէս կապւած լինելով ուստական բանակին՝ չուզեցին նրանցք բաժանուել անպատ այն ժամանակ, երբ նա ամբողջացած դէպի Ռուսաստան էր դիմում այնտեղ ցրելու համար: . .

Նոյն ողբալի վիճակն է մեզ սպասում և այսօր, կովկասեան ճակատում որևէ պատերազմական վտանգ ծագելու պարագային, էթէ մեր բանակը ուստաց զօրքին աւելի կապւած լինի, քան թէ Հայաստանին և հայ ժողովրդին: Որովհետև ոչ ոքի համար դադարիք չէ, որ փոքր ե շատ է լուրջ վտանգի դէպքում ուստաց զօրքը պէտք է լքէ Հայաստանը և քաշի դէպի Փոքր Կովկասի, թերևս և Մեծ Կովկասի բարձունքները: 1921-ից ի վեր երկու անգամ նրա սպայակոյտը Տաճկաստանի հետ պատերազմելու հաւանականութեան առջև է դրուել, և երկու անգամն էլ նա Հայաստանի մեծ մասն անմիջապէս պարպելու որոշում է հանել:

Արդ՝ ի՞նչ կը լինի մեր ժողովրդի վիճակը, էթէ ուստաց կարմիր զօրքերը, դուցէ և լուսագոյն ռազմապետական նկատումներով, դուցէ և շուտով վերադառնալու մտադրութիւնով Հայաստանից քաշելիս՝ հետը տանին նաև իրենց մասը կազմող հայկական զնդերը: Թող ջանեն թէ այս բանը անհնարին է, որովհետև կարմիր հրամանատարներն այլ վերաբերմունք ունեն դէպի հայ ժողովրդի ճակատագրի, քան թէ ցարական գեներալները: Մենք զրանք լուրի էլ, վատին էլ լաւ ծանօթ ենք և գիտենք, որ պատերազմի պահին ոչ միայն հայ ժողովրդի, այլ և ուստ ժողովրդի կեանքն ու գոյքը նրանց ռազմական ծրագրները փոխել չեն կարող: Անցեալի փորձերով հիմնաւորւած այս երկուդն անհրաժեշտ է դարձնում աշխատելու, որ Հայաստանի հայկական զնդերը տողտուին աղբային գիտակցութեամբ, որպէսզի նրանք, վտանգի պահին, հայ ժողովրդի պաշտպանութեան մտահոգութիւնը վեր դասեն ամէն բանից:

Այսպիսով՝ հակախորհրդային զաղապարական պայքարի վեցերորդ խնդիրը պէտք է լինի Հայաստանի բանակի ազգային և հայրենասիրական տրամադրութիւնների մշակումը հետևեալ կոնկրետ առաջադրութիւններով.

ա. Հակազդել այդ բանակը բուրձնեան բունպետութեան կոյր գործիք դարձնելու քաղաքականութեանը՝ արժատացնելով նրա մէջ այն համոզումը, որ իր

զերը և կողմը արտաքին թշնամիների դէմ երկրորդ պաշտպանին է և ոչ թէ կուսակցական պայքարների խաղալիք դառնալը:

բ. Տողքով նրան հայրենասիրական զաղապարներով, որպէսզի նա, իբրև հայ ժողովրդի մտից և արեւնից կերտւած մի ոյժ, վտանգի պահին այդ ժողովրդի պաշտպանութեան գերագոյն հոգուր շատորակաւ ուստական կարմիր հրամանատարութեան ընդհանուր ռազմագիտական նկատումներին:

գ. Ներշնչել հայ ժողովրդին Հայաստանի բանակն ուժեղացնելու գիտակցութիւնը և դարկ տալ բանակի և ժողովրդի մէջև հոգեկան հարազատութիւն ստեղծելու գործին:

Հայաստանի բանակի ուժեղացման և ազգայնացման աշխատանքներին դուգահե՛ւ՝ մեր հակախորհրդային սպայաբը պէտք է դարկ տայ և հայ ժողովրդական գանդւածների ինքնապաշտպանութեան գործին: Մեր սպայմաններում, կազմակերպւած զօրքը, որքան էլ ուժեղ լինի քանակով և որակով՝ չէ կարող մեն-մենակ դիմադրաւել արտաքին թշնամուն, աւանց ժողովրդիցական գանդւածների զինական արջակցութեան: Հայ-վրացական պատերազմի ժամանակ, էթէ մեր զօրքը մենակ մնար՝ հարկ թէ կարողանար քշել Լոռիից վրացական զօրքերին և Տրոսակներին: Նա կարողացաւ այդ անել, որովհետև Լոռիի զինւած զիւղացիութիւնը նրա կողքին էր կանգնած: Նմանապէս Ղարաբիխէի և Սարգարապատի ճակատամարտներում մեր զօրքերը հերոսական գործեր կատարեցին, որովհետև զինւած ժողովրդը նրանց հետ էր:

Ժողովրդական ստեղծութեամբ շրջապատւած խորհրդային իշխանութիւնը, ամբողջ տասը տարի ժողովրդի երջանկութեան համար բըտնալան աշխատելուց յետոյ, այսօր իսկ մահւան սարսուռ է զգում «զինւած ժողովրդը» զաղապարից և դուրկանական միջոցներ զիմում հայ բանտրներին և դիւզացիներին զինաթափ անելու համար: Ինքնապաշտպանութեան կենդանական քնաղբից թիւլաղբւած այս քաղաքականութիւնը հակառակ է մեզ: Բայց հակառակ է նաև, որ մենք, այդ իշխանութեան հողեկան արտաօտի սիրոյն, չենք կարող անտես սունել մեր ժողովրդի և մեր երկրի պաշտպանութեան պահանջները: Եւ քանի որ, ինչպէս ասացինք, այդ պաշտպանութեան համար անհրաժեշտ է զինւած ժողովրդական ուժերի մասնակցութիւնը՝ մենք ամէն կերպ պէտք է հակազդենք հայ ժողովրդական գանդւածները զինաթափելու քաղաքականութիւնը՝ դարձնելով այս գործը հակախորհրդային զաղապարական պայքարի կարևոր խնդիրներից մէկը:

Եթէ հակախորհրդային պայքարի ընդհանուր առաջադրութիւններին, որոնց մասին խօսել ենք վերև յիշւած յօդուածում, աւելացնենք և այն յատուկ առաջադրութիւնները, որոնց նա հետապնդում է և պէտք է հետապնդելու առանձնապէս Հայաստանում՝ քնականաբար հարց պէտք է ծագի, թէ ինչպէ՛ս է, որ Հ. Յ. Դաշակցութիւնը, այսքան բացասական վերաբերմունք ունենալով դէպի խորհրդային իշխանութեան ընդհանուր սկզբունքները և այսքան վնասակար գանդելով նրա գործնական, քաղաքականութիւնը Հայաստանում՝ սահմանափակում է զաղապարական պայքարով այդ

իշխանութեան զէմ և ոչ թէ միջոցներ ձեռք առնում նրան տապալելու և նրա պատուհասից հայ ժողովրդին ազատելու համար:

Այս հարցը շատ տրամաբանական, շատ տեղին է և մենք մեր զաղափարական պայքարի ընթացքին նրան անտես առնել չենք կարող: Անտես առնել չենք կարող անսահմանը այն պատճառով, որ նրա մասին բաւական անհնթեթե կարծիքներ կան տարածւած հասարակութեան մէջ մեր հակառակորդներին կողմից:

Մրանցից ոմանք — զլիաւորապէս ուսովազարնե-րը — սննդում են, թէ սուտ է, որ մենք չենք ուզում Հայաստանի խորհրդային իշխանութիւնը բռնի տապալելու: Եւ որովհետեւ տարեներէ ընթացքում այդպիսի սուսպիւսման փորձ չեն նկատուած մեր կողմից՝ կառուում են մտաուիլ մէջ կամ հրապարակային ժողովներում այս կամ այն դաշնակցական գործչի սրած հակախորհրդային սուր արտայայտութիւններին կամ սպառնալիքներին՝ իրենց իրական կամ հռետորական կարծիքը ակացուցանելու համար: Անշուրջ է ստել, որ սու շատ խղճուկ կարծիք է: Դաշնակցութեան պէս մի կուսակցութիւն, և թէ Հայաստանի խորհրդային իշխանութեանը բռնի տապալելու մտադրութիւնն ունենալով՝ նախ տարիներ շարունակ ծածուկի և հրապարակային ժողովներէ մէջ չէր ներշնչի իր շարքերին և չեղած հասարակութեանը, որ բռնի տապալման զազաբակահուցիւնը աննպատակաբար է, և ապա՝ մինչև այսօր անկասկած որևէ փորձ կատարած կը լինէր իր մտադրութիւնն իրագործելու համար, մանաւանդ որ բռնի իրական պրոպագանդան շարունակ բազմապիսի առիթներ է տալին գինւած յեղափոխական պայքարի համար: Մենք կարող էինք բազմաթիւ փաստեր յիշատակել ցոյց տալու համար, թէ ինչպիսի փնտրականութեամբ մեր կուսակցութեան ղեկավարութիւնը ընդդիմացել է այն բոլոր ձեռնարկներին, որոնք կարող են այդպիսի մի յեղափոխութեան արդանակն դառնալ: Բայց պատմութեան այս ծալքը բանալու ժամանակը դեռ հասած չենք համարում:

Ուրիշները — զլիաւորապէս բուլեիները — բացարձակ են մեր համբերութիւնը անկառողութեամբ: Դաշնակցութիւնը, նրանց տակով — ժողովում և թաղում է երկրում: Էլ ինչպէ՞ս նա կարող է որևէ իշխանութիւն տապալելու մտայն երազել: — Այս տղայական շարակրատութեան արժէքը ցոյց տալու համար քառական է յիշատակել միայն Փետրուար 18ը, երբ մեռած ու թողւած Դաշնակցութիւնը յանկարծ մտիքներէ միջից յարութիւն առաւ և, ժողովրդական շարժման դուրսն անցնելով՝ մի քանի ժամում դուրս ջնջ քուշնիներին փրենց տաքով բռնեցից և Լոսանջոսի, Շարլոթի և Մեմֆիսի կողմէ բոլոր աւ բարանի տակ շարաքնեցով պահեց: Որ այսօր էլ հայ ժողովուրդը և մասնատրապէս նրա դիւղադիական հոծ պանդուխտները կատարած են բուլեիական վարչապետութեանց զէմ — այդ գիտեն նրանք նաև, որ հազարաւոր մարդկանց քրքրե դաշնակցական բանտարկելը, աքորները և փախտական շարժումը, ինչպէս և օդն է բռն Դաշնակցութեան զէմ զքրքրե ու խռովը չարապ վախտի խողալիքը կամ հողմազապիւրի զէմ խոյսարդ զոնքելուտութիւն չեն հանդիսանում Հայաստանում: Հետևաբար մենք կարող ենք նրանց բացատրութիւնը

իրբե ալրում կամ ալրուղ սրտի մխիթարանք նկատել և անցնել:

Կան շեղոք հայ մարդիկ էլ, որոնք բարեմտօրէն կարծում են, թէ դաշնակցութիւնը «ազգասիրական» նկատմաներով է հանդուրժող վերաբերմունք ցոյց տալին դէպի Հայաստանի խորհրդային իշխանութիւնը: Այդ իշխանութիւնը, ասում են նրանք, ինչ էլ լինի, հայկական է, և Դաշնակցութիւնը, իբրև ազգային կուսակցութիւն, հնարաւոր չէ համարում բռնի միջոցներէ դիմել նրան տապալելու համար: — Այս կարգի հայրենակիցների բարեմտութեանն արժանի հարկ տալով հանդիմ պէտք է պակնք հերեւեալը: Մեր «ազգասիրութիւնը» երբեք այնքան հեռուները չէ դնում, որ մենք հանդուրժենք հայ ժողովրդի զինին գործադրուող բռնութիւններին այն պատճառով միայն, որ նրանց հեղինակները Գոլիցին կամ Համիդ չեն կոչուում, այլ Կարապետ կամ Կարաբաբ: Մենք անթոյլատրելի ենք համարում որևէ ազգային իշխանութեան զէմ բռնի միջոցի դիմելը երկու պայմանով միայն. նախ՝ որ նա ժողովրդի կամ զով կենսաքի կոչում լինի և ապա՝ որ անհնարին չզարմնի օրինական պայքարն իր զէմ: Հայաստանի խորհրդային իշխանութիւնը չէ արդարացնում այս երկու պայմաններից ոչ մէկը: Դրա համար էլ երբեք ազգասիրութեան զէմ չենք համարի նրան տապալելը, և թէ այդպիսի մտադրութիւն ունենալիք:

Վերջապէս, կան մարդիկ էլ — ինչպէս, օրինակ, խորհրդային իշխանութեան զէմ պայքարող վրացի և ազբերչանցի հաբեանները, որոնք մեր «ձերբարկուումութիւնը» բացատրում են մեր անուղղիչ առաջադրութեամբ: Նրանց կարծիքով մենք, «ակզբեք է մեր ռուսական օրինատարին ունենալով»՝ առեւտրը ենք համարում «գործոն» պայքար մղել Հայաստանի այսօրայ կառավարութեան զէմ, որովհետեւ նա փաստօրէն Մոսկուայի ներկայացուցչութիւնն է հանդիսանում: Այսպէս մտածողների մէջ կան նաև մարդիկ, որոնք ինչ որ վաղտնի համաձայնութիւններ են երեւակայում ժեր և հայ բուլեիներէ միջև: Այս ամենը պարզ անիրազեկութեան արդուք է: Եթէ մեր հաբեանները տեղեակ լինէին այն անհնանակ կողմնակիցին, որ մզի ենք մենք անցեալում առաւ և հայ բուլեիներէ զէմ է այն թշնամական յարաբերութիւններին, որոնք այսօր դուրսիւն ունեն երկուստեք՝ նրանք իրենք էլ լքումութիւնից զուրկ կը համարէին նման ենթադրութիւնները:

Այսօրինակ անհնթեթե կամ միամիտ կարծիքները ցրելու հետ միասին՝ մեր հակախորհրդային զաղափարական պայքարը վաղտնեք պէտք է բացատրեն ժողովրդին այն ներքին և արտաքին պատճառները, որոնք մեզ հարկադրում են ոչ միայն բռնի միջոցներէ չդիմել Հայաստանի այսօրայ բռնապետներէ զէմ, այլ և արդիւն հանդիսանալ, որ երկրի պահանջատարութեանը՝ ըզայնպայսմ նրանց կամայականութիւններից ու վարչապետութիւններից՝ անխուհեմ քայլեր կատարեն: Այս պատճառները կազմակերպական խողովակով շատ յստակօրէն պարզաւոր են ում հարկն է, և նրանց մասին այստեղ իսուք բանալու կարիք չկայ: Այսքանը բարեպէտ է ստել, որ նրանք բնութ են հայ ժողովրդի իւրաքանչիւր քաղաքական կայութիւնից և նրա կենսական շահերը վտանգի չենթարկելու մտահոգութիւնից:

Ա. ՋԱՄԱԼԵԱՆ

# Ի Ն Ք Ն Ա Ք Ն Ա Դ Ա Տ ՈՒ Թ Ի Ի Ն . . .

Որոհզգային հաստատութիւնները, ունենալով դիկտատորական վարչաձև և միասնեանօրէն կառավարելով միակ օրինական Կոմունիստական կուսակցութեան կողմից՝ ազատ են մնացած ժողովրդի ու ընդգլխադիր հասակների հոկոտութիւնից:

Հարեր յատն միլիոն ժողովուրդ սամրոյժ մի ամանամակի ընթացքում զոհ է դարձել մի բուն մարդկանց «բռնութեան, հարբեցողութեան, շատութեան, անասն ճնշումների, ամէն ձեռն ստորութեանց, յանցադործութիւնը թաղցնելուն և ոճրագործների պաշտպանելուն...» (Կոմսոմոլսկայա Պարուս) Ա յունիս)» և միայն տաննէկերուր տարում, — երբ այլևս ծանկեղն ու պարտակէն անհար է, երբ փաստերն իրենք են ազապակում, սկսել են միջոցներ խորհել՝ այդ անաւոր շարքների ստաջն տանելու

Ինքնաքննադատութիւն — ասա միակ բուժիչ միջոցը, օրին փարեցնի սոյն թիւ ապրիլից Կենտրոնական և Վերահսկիչ կոմիտէները՝ իրենց նախադասութիւնների միացալ նիստում: «Նա կարծում եմ, ձեռնարկում է Խոսկիւր, որ ինքնաքննադատութիւնը մեզ նոյնքան անհրաժեշտ է, որքան և ջուրն ու օդը: Ես հպարտ եմ, որ առանց դրան մեր կուսակցութիւնը չի կարող առաջ գնալ, չի կարող բանալ մեր խոցիքը և ուղղել մեր սիակասութիւնները: Իսկ թերութիւններ շատ ունենք: Պէտք է ազնորէն ու բացառապէս խոստովանենք արք»:

Բայց «ազնորէն» ո՞ր մէկը խոստովանել: Պետական մեքենայի վտարժար բիւրոկրատիզմը, ծանրաշարժութիւնը, քարացածութիւնը, վրդովեցուցիչ քաշքուղի, կառավարելու անբաւարար կարողութիւնը, թէ՛ արհեստակցական միութիւնների «փոսածութիւնը, շինովիկիւթեան վերահինդանութիւնը, սանձարձակութիւնը, հարբեցուցութիւնը, շարժման անոշադրութիւնը, ղեպի դանդաղների պահանջները, սնարարութիւնը, թնտեսութիւնը վերին թաւերի հանդէպ, սոցիալութիւնը, սոցիալանոցականութիւնը, համարութիւնը...», կամ թէ՛ կուսաբանիւնների «գանգաձաներից կարելի, ստորին խաւերին բարձրի նայելը, անքննադատելի ու անսպասկան համարելը...» (Կենսկոմի կոչը կուսակցութեան բոլոր անդամներին ուղղած՝ 5 յունիս): Իսկ շարաշահութիւնը, կաշառակիւրութիւնը, գեղծումները, բանարարութիւնները...:

Ի՞նչ արգիւնք կարգ է ունենալ ինքնաքննադատութիւն նշանաբանը և ի՞նչպէս սյայթարել վերը թած այլապագակութիւնների դէմ: «Ինքնաքննադատութիւնը նախ և առաջ կուժեղացնի բանուր դասակարգի աշաղջութիւնը, կը դարձնի նրա ուշադրութիւնը գէպի մեր միութիւններից, կը գերբացնի այդ միութիւնների շտկումը և անհարկն կը դարձնի ամէն մի «անակնկալ» մեր արեգմագործ աշխատանքներում: Երկրորդ՝ կը դարձնի բանուր դասակարգի քաղաքական հուրտուրականութիւնը, նրա մէջ կը գարգանայ երկեր

տէրը լինելու դգացմունքը և կը հեշաացնի երկեր կառավարել սովորելու դործը» (Ստալին):

Իսկ թերութիւնների դէմ պայքարելու համար պէտք է զործի կոչել բանուրագիւղացական ճնշութեանը, որին աջակցելու են՝ արժիւթիւնները, կոմերիտասարգութիւնը, բանուրները, պաշտօնէութիւնը, օրին աջակցելու են՝ արժիւթիւնները, ուժեղացնել բոլորքի դրասենակների զործունէութիւնը, բանարականայնի պիտանական մէքենան է, որ գլխաւորն է, գեկավարել լինիից ցոյցմունքներով, ար առում է. 1. Պէտք է հարաբարութիւն տալ ամէն մի ցանկացողի անպայման առանց թոյլտուութեան թղթերի, նայնակ կիրակի և տօն օրերին, ղեմել մեր բոլոր հիմարութիւններին ու որը պատասխան ստանալ այդ դեմումներին. 2. Պէտք է հիմնել ամէն տեղ տեղեկատու գրասենակների՝ յայտարարելով ժողովրդին նրանց ընդունելութեան օրերն ու ժամերը:

Սակայն, ի՞նչ օգուտ մերկացումներից ու ընդհատութիւններից, երբ բոլոր շարքների աղբեր բոլորիկեան պետական ձեռք վարչական քեթիթի մէջ է թաղանւն: Իրենց, բոլորիկիւնի քեթիթի իսկ խոստովանած այդ բոլոր բացասական երեոյթները նախանում էր միջազգային ընդերմարութիւնը, երբ վերջինս, ամէն կեքք պայքարելով միասնեան կոմիտէտարարութիւնը՝ ամէն առաջադրում էր ժողովրդապատկերունքների ուղիով ընթանալ դէպի ընդերմարութիւն: Ի՞նչ օգուտ Կենտրոնական և Վերահսկիչ կոմիտէների հրահանգներից թէ՛ «բանգիւղացականութեան մարմինները պէտք է ամէն կերպ պաշտպանեն իրենց օժանդակող անձնարարութիւններին ու յանձնատեղիներին այն հետապնդումներից, որոնց կարող են ենթարկել պատասխանատուութեան կոչող պաշտօնականները կողմից» (Ջարապ Վոստրիկ), ապրիլ 19): Երբ կուսակցական պաշտօնական իր հարածները կատարելու համար իր արամադրութեան տակ ամէն միջոց ունի, կամ երբ կարող է ամէն լուպէ յանգուզն քննադատել մեղաբարել, որպէս Տրոցկիի կողմնակից, նակադիպոստական, Իոնաւարդանի դասարարութեան մասնակից, դրամատիքութեան ու Անգլիայի լրտես և այլն և այլն:

Որոհզգային բոլոր թերութիւնն ու Հանտրոնները աշխատում են պետական մեքենայի գահաւէճ քաշքույան բուն պատճառները լուսարարել: Միայն, բոլորն էլ չեզեքեկ խօսքերից ու յեզպիտական նշանարաններից գաւ ոչինչ չեն աւում: Չարիք բուն արմատն այն է, որ ինչպէս Եանասն էր ստում 15րդ համադարձարում իր արտասանած ճարի մէջ՝ կամուկիտը իրաւունքներն ունի, բայց ոչ նախ պատուպիտանաւուրիւն: Միայն այդ դրութեան ունեցող խորհրդակարար պաշտօնեան է, օր լայն հնարատուութիւն ունի գիտելու ամէն ձեռն սանձարձակութեան: Մյու մասին Բուխարինն ստում է. «քանի որ մեր կուսակցութիւնը երկրում միակ տիրող կուսակցութիւնն է և

քանի որ մեր կառավարելու ձևը դիկտատորական է, ի հարկէ, կոմունիստներէ համար մեծ զայթակողութիւն է օգտագործել իր դրուժիւնը՝ ջրից չոր դուրս գալու յոյսով... Բանից դուրս է գալիս, որ բոլշևիկեան կոչումը, մանաւանդ, երբ նրա կողող պրոլետարական ծագում ունի, ենթադրել է տալիս, որ ապահոված է պատասխանատուութիւնից իր արարքներէ համար»:

Այո՛, բոլշևիկեան կուսակցութիւնը իր միահեծան դրութեամբ դարձել է կամայականութեան ու անարդարութեան մի հնոց:

Այդ տեսակէտից, առանձնապէս, առատ նիւթ է մատակարարում 15րդ համազումարի տասնամեայ հաշւետուութիւնը:

Համոձայն բանգիւղտեսչութեան նախագահ Օրջոնիկիձէի գեկուցման՝ խորհրդ. մեքենայի ուսումնասիրութիւնը հետեւեալ թերութիւններն է յայտնաբերում: — «Ձափագանց կենտրոնացում, հսկայական երկուցիւն, որոշութեան բացակայութիւն, գործադրողներէ անպատասխանատուութիւն, աներեւակայիք քաջջուղ և աղաւաղում կուսակցութեան ու կառավարութեան հրահանգներէ»:

Օրբնակներ. — Վեստիկի նահանգում հողաչինութեան գործը անցել է 13 նահանգային ու զատուային ստեաներից... Ագրքէնի տեղական բիւզընէ հաստատուելու համար ճամբորդել է 63 ատեններում... Հաշմանդամ Օվէչկինը ամբողջ եօթ տարի դիմում է արել արհեստական ոտք ստանալու համար... Ձափագանցած կենտրոնացման ու երկուցիւն լիք-ւիւրային հնարաւորութիւն տեց Ֆինժողկոմատում վերացնել 150 և առևտրական ժողովմատում՝ 80 ստորաբաժանումներ... Հաղորդակցութեան կոմիսարիատը հաշւետուութիւններէ համար տարեկան գործ է ածում վեց և կէս միլիոն կիրոյց աւելի թուղթ... Ուկրայինայում մէկ տարւակ ընթացքում դատարան է կանչւած ազգաբնակչութեան 15 տոկոսը... Արտասահմանեան ներկայացուցչութիւնները կրճատման ենթարկւելով՝ 2272ից իջել են միայն 926ի—28½ միլիոն ռուբլու տնտեսումով... 115 առևտրական սակարաններէից թողնել են միայն 14ը— 11½ միլիոնի տնտեսում... Չանագան հիմնարկութիւններում 15—40 տոկոսի կրճատումներ, որոնք տարեկան 300 միլիոն ռուբլու տնտեսում կը տան... Իրաստանի Կենտ. Վիճակագրական Վարչութիւնը տրեստներին 1427 հարց պարզանող հարցարան է ուղղել... Հողժողովմատը չըջաբերական է ուղարկել, պահանջով տեղեկութիւններ բանջարատնոցները փչացնող նապատանկների ճիշտ քանակի ու տեսակի մասին...:

Ստալինը իր գեկուցման մէջ առանձնապէս քննադատում է քաջշուրճ՝ «աւա ձեց մէկ դիւղացի, որ 21 անգամ ապահովագրական հիմնարկութիւն է դնացել արդարութիւն ձեռք բերելու, որին, վերջ է վերջոյ, չի էլ հասել... Մէկ ուրիշը՝ 66 տարեկան դիւղացի, 600 վերստ ոտքով ճանապարհ է կտրել ճմարտութիւն իմանալու և չի իմացել... 56 տարեկան քեղիկուհին, ժողդատուարի պահանջով կտրել է 500 վերստ ոտքով և 600 վերստ էլ ձիով, առանց արդար վճիռ ձեռք բերելու...»:

«Մենք հրատարակում ենք անհամար քանակու-

թեամբ նոր օրէնքներ: Բայց աւելի լաւ կը լինէր, որ մենք գործադրէինք մեր իսկ ձեռքով գրւած հին օրէնքները: Եւ սա ոչ թէ կառավարելու տեխնիկային է վերաբերում, այլ քաղաքականութեան հարց է... Մենք պէտք է վերացնենք կուսակցական կարգապահական դատարանները, քանի որ օրէնքի առաջ հաւասար են թէ կուսակցական և թէ անկուսակցական պաշտօնեաները, իսկ դրանց համար ունենք ընդհանուր դատարան» (Եսկովիկ):

«Երբ մենք որոշ յանցանքների համար պատասխանատու պաշտօնեաների դատի ենք ենթարկում, իսկոյն ամէն կողմից խոչընդոտներ են յարուցւում դատարանի առաջ... Պէտք է խոստովանել, որ կուսակցութեան անգամներից շատերը հարում են այն աստիճան, որ գործում են զանազան յանցանքներ՝ միտումներ, սպանութիւն, բռնութիւն, ծեծ և այլն» (Պետական դատախազ՝ Կրիլենկո):

«Րեազանի նահանգում ամբողջ վեց տարի տեղի էին ունենում ասպատակութիւններ՝ սպանութիւններով ու թալանով, իսկ դատարանը զբաղւում էր միայն գործը սկսելով ու ապա դադարեցնելով... Մեր դատարանները փոխանակ յեղափոխական ընազգով առաջնորդելու, կանչել են օրէնքի տուտին՝ դառնալով անհոգի չինովնիներ» (Շիբրեստով):

«Պորհրդային աշխատաւորը բարեխիղճ աշխատելու ոչ մի խթան չունի. նա միշտ իրեն կրճատման դամոկլեան սրի տակ է գլուս» Կոտով):

«Մեր տնտեսական նոր ձեռնարկները կառուցելիս նախնական հաշից 200—230% աւելի են արժենում. և այդ գումարը պետական դանձարանից է ելնում» (Րոյգենման):

«Հայաբուրժուար Մոսկուայում նախ ձախելով է զբաղւում, իսկ Ուզբեկստանի ներկայացուցչութիւնը՝ սպիրտի առևտուր է անում» (Մորոզով):

Թէ քրէական ու պետական յանցագործութիւնների մէջ իրենք բոլշևիկները ի՞նչ տեղ են դրուում, ցոյց են տալիս հետեւեալ թւերը. կուսակցութիւնից դուրս արւած 650 հողուր 40 տոկոսը մեղադրւում էր զեղծումների, 17 տոկոսը՝ քրէական յանցանքների և 10 տոկոսը՝ սրիկայութեան համար:

Եւ ի՞նչ հրէչային արարքներ ասես, որ տեղի չունեցան 15րդ կուսամագումարից յետոյ: —

Մեղադրական աթոռին են նստած Ղրիմի 16 գործիչներ՝ հանրապետութեան նախագահ Իբրահիմովի ղեկավարութեամբ: Այս վերջինս տարիներ ընթացքում կապ է պահպանել աւազակախմբերի հետ, որոնց միջոցով կատարել է ամենավայրագ յանցագործութիւններ: Իր արարքների զգտնիքը երևան չհանելու համար, նա իր ձեռքով խեղդել է կարմիր կամաւոր Չեխակին, վատնել է 37 հազար ռուբլի պետական դրամ և այլն:

Նոյն մեղադրանքների տակ առնւեց և Մոլդոնսկի նահանգի կուսակցական ղեկավար խումբը: «Անընդհատ հարբեցողութիւն, փառնումներ, բռնաբարութիւն, կապ աւազակեղբի հետ... Կուսակցականները կտրւել են զանգւածներից, կազմակերպութեան մէջ հաստատել են բռնակալ րեժիմ, խարում էին կենտրոնին, հովանաւորում չարագործներին...», ահա թէ ինչ է պարզել Վերստուգիչ Յանձնատնոյրի քննութիւնը:

Աւելի սարսափելին կատարել է Սոչիի շրջանում, Կոմկուսի պաշտօնաթերթը այդ առթիւ գրում է. — «Որ Սոչիի կուսակցական և խորհրդային ղեկավարութիւնը նեխում ու քայքայում է, յայտնի է վաղուց: Դեռ 1926-ի կէսերին քննութեան համար Սոչի ուղարկուող ղարկեցիք սեճովեան բանգիւղտնաչուի ժողովի, որոնք, սակայն, եկան այն իմաստուն եզրակացութեան, թէ՛ իշխանութիւնը չվարկաբեկելու համար, հարկաւոր է լուսթեամբ անցնել և շխորանալ:

«Սոչիի ղեկավարները կարող էին երկու և կէս տարբար ընթացքում թալանել խորհրդային դոյքը, ծաղրել յեղափոխական օրէնքները, աղւաւղել կուսակցութեան և խորհրդային իշխանութեան դասակարգային ընթացքը, բռնաբարել կանանց: Մի շարք քաղաքացիների է թրջակիցների մերկայումները մնում էին անհետևանք և բացի այդ, նրանք բոլորը դատի էին ենթարկուած որպէս բամբաստիներ: Նոյնիսկ այն աղիւ ընկերները, որոնք փորձում էին պաշարել, ստիպւած էին իրենց ժողովները զազտնի գումարել: և որպէսզի չմեղադրեն հակախորհրդային դաւաճութեան մէջ, ժողովներին հրաւիրում էին նաև Գէպէտի նախագահին:

«Այդ այլանդակ խմբակի գլուխն էին կանգնած՝ կուսակցութեան քարտուղար Զարապովը և գործկոմի նախագահ Զանչեկոն: Նրանց ընկերներն էին՝ Ֆիլիբոսովի վարչը Սազանը, կոմսոսեուսի Վարչի փոխարէնը, վարչական բաժնի վարչի Գոլոտուրը և ուրիշներ: Պատասխանատու պաշտօնները ժամանակը սպանում էին ամենավայրագ ու անսպասելի շայտ խրախանքներում, որը երբեմն վերջանում էր կանանց խմբակի բռնաբարութեամբ: Առանձնապէս աչքի էր ընկնում կուսակցութեան ղեկավար Զարապովը: Երիտասարդ կոմունիստ աղջիկները գիշերը կանչուած էին իրր թէ «զաղտնի» աշխատանքի համար... Ովքեր չէին յանձնուած քարտուղարի կրքերին, պաշտօնից դրկուած էին: Շատ գործազուրկ կանայք, տնտեսական ծանր դրութիւնից դրդւած, պաշտօն ստանալու յոյսով, անտրտունը ենթարկուած էին... Շատ դէպքերում Զարապովը իր հարձերին խոստանում էր ընդունել կուսակցութեան մէջ: Սիրային գործերի մէջ կաւատութիւն անողը կոմերիտիութեան երկրորդ քարտուղար Զերնան է, որը միշտ մատակարարում է թարմ կոմունիզմներ:

«Այդ բոլորի անխուսափելի հետևանքն էին դրամական զեղծումներ: Գործկոմի նախագահ Զանչեկոն իւրացրել է 2000 ռուբլի պետական դրամ և որոշ գումար էլ մանուկների օգնող յանձնարմբի դրամակրկից...» (Պրաւդա, 8 ապրիլի):

Եթէ միւս բոլոր փաստերը մի կողմ թողնենք և առնենք միայն Սոչիի դէպքերը, արդէն բաւական է կոմերիտաւորային այլաբանութեան մասին գաղափար կազմելու համար: Ոճրագործ յանցանքներ ծածկել «իշխանութիւնը չվարկաբեկելու համար», թշուառութեան հասած կանանց կրքերի գոհ դարձնել «պաշտօն յաճողներու խոստումով», մէկին կոմերիտիութեան քարտուղարի աստիճանին հասցնել «կոմսոցիականը մատակարարելու համար», իւրացնել անապաստան մանուկների համար հանգանակւած դրամները... Աւելի քան սարսափելի է: Եւ մտածել

մէկ վայրկեան, որ միլիոնաւոր մարդկանց ինչքն ու կենսքը պատիւ հետ մէկ տեղ նման հրէշների է յանձնւած...

Իսկ սեփական ու հասարակական գումարների վաճառումները: Կարելիայի ներկայացուցիչը Կրեմլում, իւրացնում է 40 հազար ռուբլի... Թուրքեստանի կուսակցութեան փոխ-նախագահը դատի է ենթարկուած զեղծումների համար... Կիրգիզստանի հանրապետութեան նախագահն ու կուսակցութեան նախագահը զնդակահարուած են վաճառումների համար... Եթէ թելու լինենք աւելի ստորադաս պաշտօնանների զեղծումներն ու վաճառումները՝ կատարած շինարարական ճակատում, տնտեսական ասպարէզում, կրոնաբարոյականում, առևտրական հիմնարկութիւններում, ֆինրաժիններում, արտասահմանեան ներկայացուցչութիւնների մէջ, դրա համար կիրճներով թուղթ է հարկաւոր: Բաւական է յիշել, որ այս կամ այն ձևով զողացւած գումարների թիւը տարեկան բազմաթիւ միլիոնների է հասնում: Նոյնիսկ չի խնայուած բանորի գրպանը. — Վրաստանի արհմիութիւններում 1927թ. վառնել է 15 հազար ռուբլի («Պրոլետար» ապր. 10): 15 հազար ռուբլի, որը զոյացել է բանկոյներից ու ծառայողներից կոպէկ-կոպէկ զանձւած անգամաՎճարներից: Իսկ սրիկայութիւնն ու հարբեցողութիւնը: Բազում երեք ամսւայ ընթացքում կատարել է 1636 յանցագործութիւն և 1799 սրիկայական դէպք («Կոմունիստ» մայիս 15): Մայիս 29-ին, խուլիպանական արարքների համար Երեւանում զնդակահարուած են ոմն Ներսիսեան և Նախչիքարեան: Թէ ինչ աստիճանի է հասած սրիկայութիւնը, բաւական է միայն յիշել, որ այդ չարիքի առաջն առնելու համար սահմանւած է մահան պատիժ: Հարբեցողութեան չափը հասկանալու համար, բաւական է աչքի անցկացնել հետևեալ թւերը. — 1923-24թ. սպառուել է 600,000 լիտր ալեղ, 1924-25ին՝ 48 միլիոն լիտր և 1926-27ին՝ 360 միլիոն լիտր. սոյն տարւայ համար նախատեսուած է մօտ կէս միլիարդ լիտրի սպառում: Միայն 1927թ. ընթացքում, ողբից ըմպելիների համար, բնակչութիւնը ծախսել է 1200 միլիոն ռուբլի («Ռեզեստիս» յունիս):

Պէտք է ասել, որ սրիկայութեամբ ու հարբեցողութեամբ տարւած են նաև անապաստան երեխաներն ու դպրոցական աշակերտները: Բազում, 1927-ին 1918 յանցագործ երեխաներից 599-ը պարոցի աշակերտներ էին («Կոմունիստ» 8 մայիս): 8-ից 16 տարեկան 2420 դպրոցական աշակերտների զնութիւնը պարզել է, որ հարիւրից 15 տղաներ և հարիւրից 14 աղջիկներ հարուած են կանոնաւոր կերպով, իսկ 34 և 10 ալեղ են գործածուած. միայն հարիւրից 11-ն է, որ դեռ օղու համը չէ ստած («Ռեզեստիս»):

Իսկ բարքերի անկումը: Դեռ բոլորիս յիշողութեան մէջ թարմ է լինիլըբարդի Չուբարեան փողոցում տեղի ունեցած բռնաբարութեան դէպքը, երբ 40 հոգի հերթով լվում են մի գոթարու ուսանողուհու: Եւ այդ դէպքից յետոյ «չուբարդչիկներ» անբարոյականութեան խորհրդանիշ է դարձել: Արտեմովկանում, գործկոմի նախագահը քէՖի ժամանակ, հարբեցնելով միլիցիայատնին, բռնաբարում է վերջինիս կնոջը. հետեւանքը՝ կնոջ անձնապապանութիւնը: Մոռակայում,

բանաստեղծներ Արշալույսերը, Անտիֆեր և Ալբրուշչինկան հարբեցնում են ուսանողուհի իրականությանը և հերթով բռնաբարում: Նոյն գլխին իսկ խեղճ գոհը ինքնասպանութիւն է գործում: Երևանի փողոցում, բանաստեղծ Պարենցը շահական առաջարկութիւն է անում օր. Ալփազեանին և մերժում ստանալով, ատրճանակից վերադարձնում է շնորհակալ աղջկան:

Առանձնապէս տարատեսակ է շուրարովչիկան, որի հերոսները մեծ մասամբ կոմերսիանտներն են: «Մենդելիկէտեի ճեմարանում սերւած խոց է զկուկուրեկու»-ն. այդ խոցի իմաստը նրանումն է, որ սենեակում մարում են լոյսերը և մթութեան հոյանաւորութեան տակ կատարում ամէն ինչ... Այո՛, շուրարովչիկան, գրում է «Կոմսոմոյսկայա Պրաւդա»-ն, իսկական շուրարովչիկան: Միայն աւելի նրբացած ու կուրտուրականացրած ձևով» (Յունիս 10):

Եւ, անտարակոյտ, նման հերոսները մեծ մասամբ անզայտօ էն ճնում: Պարենցը իր բամբնելի արարքի համար դատաստարուեց ուժ տարւայ ընդդարգելքի՝ օսկայն, ուժ օր իսկ բանտում շմաց: Կուսակցական Կոլեկտիվը բռնաբարում է բանֆալի մի ուսանողուհի և վարակում սիֆիլիսով. որպէս պատիժ, գուրս է արւում կուսակցութիւնից և փոխադրւում մէկ ուրիշ համալսարան (Կոմսոմոյսկ. Պրաւդա, 10 յունիս):

Քարքերի անկմանը պակաս չի նպաստում և բոլջեիկեան բարոյական հակացողութիւնը: Տիկին Կարանտայի թարրած ձագառ սէրը՝ իր արդիւնքները յայտնաբերում է: Ահա մէկ նմոյշ. — «Ղուրդուղուլիի շրջանային քաղուսկոմի նախագահ Մանուկ Զատո-

յանը շատ է մտահոգւած նոր կեանքով ու կենցաղով. այդ մասին նա դատաստարութիւններ է կարգում և աշխատում է լուսաւորել կանանց... Տարբերութիւն չկայ իմ և թո ամուսնու մէջ, նոր ևս, չես հակահում, թե՛ տանջում պաս ևս պահում, աղատ աղբրը, կեանքն ալսպէս է պահանջում» («Պորճը. Հայաստան» 29 մայիս), պարզաբանում է նոր կենցաղի քարոզչին ու օդապարտում միամտ գեղջկուհիներին...

Եւ ոսկորական է, Երբ յանցաւորը, փոխանակ արժանի պատիժը կրելու, նոյնիսկ աւելի բարձր պաշտօնով փոխադրւում է մէկ ուրիշ վայր: Այսպէս՝ Բալիուլ Կենդիւրիկոնի (Թուրք) պաշտօնավարում էր Կոոպրատիւն մէջ և ստանում ամուսնու 185 բուրի. զեղծում կատարելու պատճառով գործից հրաժարեցում է և դատի ենթարկուած Հայաստանի առեարական բաժինը, ընկերոջ օգնած լինելու համար, նրան նշանակում է իր ներկայացուցիչը Նախիլջանում: Երբ դատարանը նրան դատաւարտում է բանտարկութեան, մինչև իր սպառուելը, իրեն փոխարինում է եղբայրը՝ Պարուիլը: Երկու եղբայրները 11 ամսւայ ընթացքում ունենում են 1500 բուրլու շրջանառութիւն, որից 1350ր. վերցնում են իրենց ուժիկի ղիմաց ու փոստ-հեռագրային ծախսերի համար, մնացած 150ր. էլ ծախսում են առ հաշիւ... («Պորճը. Հայաստան» 27 մայիս):

Եւ այսպէս անվերջ: Բեժիմը փոսած է հիմքից. ուղում են «ինքնաքննադատութեանը» բոժեղ: Կարելի՞ բան է:

ԱՅՈՏ

## «ԱՉԳԱՅԻՆ ՀԱՐՅՈՒ ՄԱՐԲՍԻՉՄԻ ԲՈՒՐԱՅՈՒՄ»

Ազգային հարցը Ռուսաստանի և մասնաւորապէս Կովկասի ամենէն կենդան քաղաքական խնդիրներէն մէկը եղած է անցնալի մէջ ու նոյնքան կենդան խնդիր մը կը մնայ այսօր ևս: Անոր տեսական և գործնական պարզարանումը մօտ երեսուն տարիներու քննութեան նիւթ դարձած է Ը. Յ. Դանիակցութեան ղեկավար տարիներու կողմէ: Ը., հակառակ հարցի գաղափարական մշակման և գործնական կեանքի հարուստ փորձերուն, կովկասեան իրականութեան մէջ մեր հակաուսկոպիները մնացին թշնամի աղգային ազատագրական շարժման և, իրենց զրականութեանը և գործօն քաղաքականութեամբ, ամէն ճիգ ու ջանք թափեցին ջատելու հայ ազատագրական յեղափոխական շարժումը:

Ինչպե՛ս, այս հակամարտութեան հիմնական գրգռատնճարը թաղնւած է տիրող և տիրապետող ազգի, կամ զրացի փոքր ազգերու ներհակ քաղաքական և անասեական շահերու ետին: Իսկ անոնք, որ այդ ներհակ շահերը կը քօտարկէին դանադան անուններու տակ, ոչ միայն կօտուէին աղգայնամոյական յատուկ գէնքերէն, այլ և յեղափոխական հոսանքներու մտայնութենէն, հէնց յեղափոխական տարրերու միջո-

ցաւ Ինդիլու ազգայն՝ յեղափոխութիւնը, որպէս հակաաշխատանքական շարժում մը: Այսպիսով, աղգային յեղափոխութիւնը պարտաւորւած էր ոչ միայն պայքարել տիրող ազգի, կամ դրացի ազգի յետադիմական և աղգայնամոյ տարրին դէմ, այլ և ստիպւած էր իր ուժերը սպառել ընկերակցական հոսանքներու սխալ մտայնութեան դէմ և յատ յանախ, ընկերային շարժման փոթորկալի օրերուն, գործնական կեանքի մէջ բախել այնպիսի հոսանքներուն, որոնք յանուն աշխատանքութեան անուղղակի կերպով տիրող դասակարգիչուն ծառայութիւն մը կը մտտուցանէին:

Ոսքը աղգամիջկան հակամարտութեան կուրսն մասին չէ, այլ այն մտայնութեան, որ մարքսիստ և ոչ-մարքսիստ հոսանքները յայտնաբերեցին վերջին 25 տարիներու ընթացքին և իրենց այդ մտայնութեամբ ամենավատ պատուարը դարձան ընդդէմ հայոց աղգային վերածնունդի շարժման:

Աղգային հարցի լուծման վերաբերմամբ Դանիակցութեան հակաուսկոպիստ այլ ընկերակցական հոսանքներու սխալ ըմբռնումները և՛ աղիտաբեր էին և՛ հակաընկերակցական: Այդ ըմբռնումները քանի մը հոսանքներու կողմէ սրբաբարձ և մասամբ, Բայց

բուլղերիկան հոսանքը կը մնայ այդ արտաւոր մտայնութեան ժառանգորդը և մարքեան ու Լենինեան սկզբունքները կեանքի մէջ կը գործադրէ խաբէպատիր յայտարարութիւններով՝ միշտ հին նպատակին հասնելու համար. — փոքրիկ ազգերու ձուլումը: Հիմա, երբ պատմական խոչոր անցեալի վրէժազանհատութիւնն է, որ տեղի կունենայ, դարձնաւ մշուշպատ քացատրութիւնները կուգան չգրեցանքերու անցեալի սխալները: Մինչդեռ բոլոր տեսակները՝ կան սնանկ հոչակելու մարքեան տեսութիւնը ազգային հարցի մասին, ու հետևողականօրէն՝ սնանկ հոչակելու նաև Լենինի ու իր յաջորդներու բռնած դիրքը ազգային հարցի կարգաւորման մէջ:

Ընկերավարական միտքը միանգամ ընդմիշտ պէտք է ազատարարի Մարքսին ու իր յաջորդներէն, ինչ որ կը վերարարի ազգային հարցին: Այս ազատագրումը չի կրնար տեղի ունենալ քաղաքացի քացատրութիւններով և ոչ ալ Մարքսի ու Լենինի սկզբունքներու այլ կերպ վերծանումներով: Այդ ընթացքը ընկերավարական նոր սերունդի աչքը չի բանար, այլ նոր լոյսով մը դաշն կը շլացնէ, որպէսզի, ան այդ կախարական ըմբռնողութենէն դուրս լջայ:

Այս խորհրդածուրթիւններուն կը մղւիմ, երբ աչքէ կանցնիմ մեր մօտաւոր անցեալի վերազանհատական պատմութիւնը: Դ. Անանուն «Ռուսահայոց Հասարակական Զարգացումը» գրքի մէջ կը յայտարարէ թէ՛ «Ազգային հարց ասածդ իր մանրամասնութիւններ մէջ, տեսականի և գործնականի կողմից, դժուարութեամբ անսխալ անխառն անխառն միւս չէր դարձել մայիսիսի ֆուրայում...» Այսինքն, Եթէ ազգային հարցը քննած ըլլար մարքսիզմի շուրջում, Հայոց ազատագրական շարժման ելքը այլ կերպ պիտի ըլլար: այս է այն պարզ եզրակացութիւնը, որ կարող եմք հասնել մարքսիստ Դ. Անանունի վերոյիշեալ նախադասութենէն:

Գ. Ռաֆակ, «Բեւայի Ֆեդերացիա» գրքի մէջ խիստ քննադատութեան ենթարկելով մարքսիստական հոսանքներու թիրախութիւնները ազգային հարցի մասին, կը գտնէ, որ մարքսիզմի մեծ ուսուցիչները ազգային հարցով չեն գրաւած, ու խօսքը ուղղելով մեզի հակառակորդ ընկերավարական հոսանքներուն՝ կեցրակացնէ. «Երանց աշակերտները էլ Ռուսաստանում, մեամատնդ Կովկասում, մեամում են քայմուտիստները: Ինչ խնդրի մասին կուզե՞ք գրեցէ՛ք անոնց, որ անոնք իսկոյն բաց են անում իրենց քայմուտը — Մարքսի և Էնգելսի գրքերը. եթէ այնտեղ այնչէր չկայ այդ մասին, իսկոյն յայտարարում են այդ բանը յետադէմ, բուրժուական, հակառակ պրոլետարիատի շահերին...» Ինչպէս կը տեսնուի Գ. Ռաֆակի ալ կարծեա թէ՛ հակած է ընդունելու, որ մարքսիզմի մեծ ուսուցիչները ազգային հարցով չեն գրաւած: Մինչդեռ հակազգային մտայնութեամբ տարած ընկերավարական հոսանքներն ու ղեկավարները այդ ընթացքը ժառանգած են Մարքսին, Էնգելսին և Լասալին:

Ազգային հարցը քննութեան աած ժամանակ, մարքսիստական տեսակէտը, ըստ էութեան հակազգային ըլլալու մասին քիչ խօսած է, ընդհակառակը, բարձրագի պրոլետարիատի եղած են ապացուցանելու համար, որ Մարքսը ազգային շարժման շեշտած

հակառակութիւն ունեցած չէ, և օրինակներ բերած են ցոյց տալու անոր պաշտպանութիւնը լեհական և իտալական հարցի արծարծման ժամանակ: Եւ այս բոլորը անոր համար, որպէսզի Մարքսի հակազգային հիմնական տեսակէտները ջողարկէին, ու մասամբ մեր շրջապատի միջոցաւ մեղմանայ, իր թունոտ սլաքները, յանձն Մարքսի, ղեզղէ՛ հայ աշխատաւորութեան ազգային շարժման չեմ:

Ընկերավարական խոչոր դէմքերէն շատերը Մարքսի սխալ ըմբռնումները ազգային հարցի մասին, այն ժամանակաւ քաղաքական կացութեան կը վերադարձին: Իսկ մեր մէջ (Դ. Անանուն և Գ. Ռաֆակ) կը գտնեն, որ ազգային հարցով, առհասարակ, Մարքս և իր յաջորդները գրաւած չեն:

Այս հարցին՝ ուղղակի հակառէն մօտեցած է ուկրայինացի գիտնական հեղինակ մը, Վ. Լեվինսքի, (սոց.-դեմ.-մարքսիստ) իր «Ընկերավարական Ինտերնացիոնալներն ու Գերմանիայի ժողովուրդները» արժէքատը գրքին մէջ: Մարքսիստական գրականութեան խիստ հմուտ այս հեղինակը առանց կողմնակի քացատրութիւններու, կը ջրէն այն պարզան, որ Մարքս, Էնգելս և Լասալ գրաւած են բարձրագի անգամներ ազգային հարցերով և վճահական կերպով հակառակ դերք բռնած են: Հէջ սկզբէն հեղինակը կը սկսի հետեալ բացորոշ յայտարարութեամբ. — «Պատմութեան գուրկ ժողովուրդներու մասին Մարքսի, Էնգելսի և Լասալի տեսակէտները կարելի է սահմանադրել մէկ նախադասութեամբ. — այն ժողովուրդները, որ պատմութիւն չունին, չունեն որևէ ապագայ, և դատապարտած են ոչնչանալու:

« Կար կաուցկին և Օտոս Թաուէրը մեամ գաղափարի մը սխալ ըլլալը ապացուցանելով համադերձ, կը ձգտեն այդ սխալ ըմբռնումը քացատրել վայրիեանի ֆաղափական կացութեամբ: Մենք կը կարծենք, որ այս բացատրութիւնը վրիպումնք մըն է: Ըստ մեզ, օրգանական կայ մը կայ Մարքսի, Էնգելսի և Լասալի տեսակէտներուն և Հեղինի պատմական տեսութեան միջև, ինչ որ կը վերաբերի պատմութեան գուրկ ժողովուրդներու մասին»... (L'Internationale Socialiste et les peuples opprimés. V. L. էջ 5):

Հարցը այսպէս բացորոշ դնել յետոյ, Վ. Լեվինսքի 1840ական թվականներէն մինչև մեր օրերը (1920), ազգային հարցի հետ առնչութիւն ունեցող գրականութենէն և Միջազգայնականներու նիստերու արձանագրութիւններէն մէջբերումներ կընէ և լիովին կապացուցանէ իր վերը յիշած տեսակէտը: Մարքսի, Էնգելսի և Լասալի այդ սխալ ըմբռնումները անուց փոք առած էին իրենց ուսուցիչ Հեղինէն և իրենց այդ հիւանդակին ըմբռնումը Միջազգայնականի միջոցաւ ժառանգութիւն կը մնար նոյն Գերմանիոյ (ս.-դեմ.), ու անկէ կը փախանցէր դուսական Սոց.-Դեմ.-ին (բուլղերիկ և մենչևիկ):

Մարքսիստ Վ. Լեվինսքին, քննութեան առնելով այն դիրքը, որ երեք քառորդ դարէ ի վեր Մարքս և իր յաջորդները բռնած են ազգային հարցի հանդէպ՝ «մարքսիզմի շուրջում», առանձնապէս կանգ կառնէ Լենինի տեսակէտներու վրա, կը գտնէ, որ տեսակա-

նապէս կարծես թէ Լենին կը ձգտի ազգային հարցի արմատական լուծման, սակայն, թէ անոր գրահանութենէն և թէ գործնական կեանքի մէջ կիրարկած մեթոտներէն բացասական երբակացութեան կը յանդի: Ազգային հարցը լուծելու մէջ, մարքսիստական հիւանդութիւնը ներկարկած կը տեսնենք Լենինի մէջ, հակառակ իր բացորոշ դեկրետներուն, որոնք «ազգերու ինքնորոշման» սկզբունքը կը հռչակէին:

Վ. Լեվինսքիի այս գիրքը (որու հայերէն հրատարակութիւնը տեղի տրեւոր տուննայ Ժոս ապագային) տուն կուտայ նորէն անդրադառնալու ազգային հարցին, և հեղինակի դատմ սխալներէն ու հետքեր մեծ չափով գտնել կովկասեան իրակացութեան մէջ: Եթէ վրացական սոց.—դեմոկրատներու պէս, շատերն այսօր, հրաժարած են իրենց քսան տարւայ մարքսիստական դիրքերէն և կանգնած են ազգային անկախութեան սեսակէտի վրա, անգին տակաւին գոյութիւն ունի ուսուսական բոլշեւիզմը իր պոչերով (բոլոր ճնշած ազգերու կամակաւար բոլշեւիզները), որ իր հրահայտին Միութեան մէջ կուղէ ձուլել ճնշած ժողովուրդները, միշտ հին սկզբունքին յենած: — Փոքր և ճնշած ազգերը դատապարտուած են ձուլել մեծ և տիրապետող ազգերու հետ:

\*\*\*

Հայկական կեանքը փոթորիկոյն ու անոր շարժումները գունաւորող եղած է մեր ազգային ազատագրութեան ինդիլը: Արտաքին քաղաքական անյազօթի դժաւարութիւններու հետ, մեր ներքին կեանքի հակամարտութիւններն ու անհասկացողութիւններն ալ, իրենց կարգին, չարաղէտ հետեանքներ են ունեցած: Ազգային հարցի լուծումը ոչ միայն մտաւոր անցեալի մէջ, այլ նաև այսօր, երկու անհաշտ ճակատներու բաժնած է հայ կեանքը: Այսօր նորէն ընկերավարութեան անունին ճառող հայ բոլշեւիզներն են, որ քողարկումներով, կը կրկնեն իրենց Ձ տարի առաջայ նախադասութիւնները, չար ոգին հանդիսանալով հայոց ազգի ազատագրութեան ճանապարհի վրա:

Ազգային հարցի մասին շատ արիւն պղտորուած է ընկերավարական շարժման պատմութեան ընթացքին: Այդ ինդիլը, մասնաւորաբար, շատ փանջած է ճնշած ժողովուրդներու ընկերավարականները, որոնք մեծ մասամբ տարբերած են մեծ և տիրող ազգի իրենց ընկերներէն: Թերևս ամենէն անյուրջ վերաբերմունքը, որ մենք կրնանք գտնել երեք քառորդ դարու ընկերավարական պատմութեան մէջ, ազգային հարցի լուծման մասին տիրող կարծիքն է:

Տիրական ազգերու շահագործող դասակարգերու մտայնութիւնը մեծապէս ներգործած է նոյն ազգի ճնշած դասակարգի պաշտպան ընկերավարական կուսակցութիւններու ըմբռումներու վրա: ու այդպիսով, ազատագրական շարժումներու ընթացքին, անոնք ցուցահանած են վերաբերմունք մը դէպի ճնշած ազգերու շարժումները, որ յար ու նման եղած է (այլ գունաւորումներով և պատճառաբանութեամբ) տիրող դասակարգի նաւադական վերաբերմունքին:

Պատմութեան անողքը անխիւն տակ, սակայն, ազգային հարցի մէջ, Մարքսի և իր հետեւողներու տեսակէտները կը խորտակէին: Այն ազգերը, որոնք;

րատ Մարքսի, մահան դատապարտուած կը նկատէին ու քաշած պատմութեան բեմէն, անոնք 50 տարւայ ընթացքին, իրարու ետեւէ, ազգային պետութիւն զարգման և մասն «պատմութիւն ունեցող» ժողովուրդներու շարքը:

Պատերազմը կուգար վերիվայր չընկու մինչև այդ ժամանակ քաղաքացի կարծիքները: Իսկ ուսուսական յեղափոխութիւնն առուել քան մտահոգիչ կը տեսնէր ազգային հարցը, որ ցցած հրամայականութեամբ իր լուծումը կը պահանջէր: «Աղդերու ինքնորոշման» ինդիլը լայնորէն քննութեան նիւթ կը դառնար: Ընկերավարական հոսանքները կը զգային, որ այդ քանարգոյն ինդիլը պէտք եղած լրջութեամբ չէն ճանաչու հարկաւոր էր անոր լուծումը որոնել: Ի հարկէ, խօսքը մեր իրականութեան մասին չէ, ուր տասնեակ տարիներով շ. Յ. Դաշնակցութիւնը այդ ինքնի հիմնական լուծումը որդեգրած էր, քարոզած ու գործնական անխախտանքներով հետապնդած՝ միշտ հանդիպելով յեղի հակառակորդ այլ ընկերավարական հոսանքներու հակամարտութեան: Մեր հակառակորդները նման վերադասաւորում մը ընելու և ազգային հարցի լուծումը որոնելու համարձակումներ չէին և չեն տակաւին: Անոնք պէտք ունին իրաւամաստարներու, որպէսզի անոնց ըսածը կրկնեն թուփախորէն ու հնչեցնեն թմրուիչը:

Լենին ազգային հարցին աւելի որոշակի մտեցող ու արմատական առաջարկութիւններ բերող խոշոր դէմքերէն մէկն էր. սակայն, այն հիւանդազին մտածողութիւնը, որ միւս և արիւն դարձած էր ընկերավարական որոշ հոսանքներու համար, այդ հին հիւանդութեան էութիւնը կը մնար անհատներու մէջ: Անկէ ազատ չմնաց Լենին ալ: Լեվինսքիին ճշգրտորէն հրապարակ բերելով Լենինի ամբողջական վերաբերմունքը ազգային հարցի լուծման մասին, կը գտնէ, որ այդ վերաբերմունքը, իր արտաքին երևոյթով, պահ մը այն պատրանքը կուտայ, թէ Լենին կըցած է հասնել տեղ մը, ուր ազգային հարցը իր արմատական լուծումը կը գտնէ: Որովհետև Լենին պարզորոշ կրէ էր բանաձևերուն մէջ, որ ազգ մը «ինքնորոշելու և ինքզինք անկախ հռչակելու իրաւունք» ունի: Ասիկա կարծես վերջին խօսքն ըլլայ: Սակայն, Լեվինսքիին Լենինի երկու բացատրական յօդաձևներէն\*) մէջըբերումներ կրնէ, որոնցմէ աւելի քան պայճաւորէն կը հասկցի այն թատերական վերաբերմունքը, որ գոյութիւն ունի բոլշեւիզիան իրաւաստանի իրակացութեան մէջ, ազգային հարցի «լուծման» պարագային:

Լենին ունի, ուրեմն, իր «ԲԱՅՑ»ը: Հին մարքսիստական դպրոցի ժառանգորդ՝ ան անհրաժեշտ կը գտնէ «բայց» մը ըսել ու կցել բացատրութիւն մը, որ հիմնապէս կը քանդէ իր կառուցած ամբողջ շէնքը, որ կը կուլտէ «ազգերու ինքնորոշման ու ինքզինք անկախ հռչակելու իրաւունք»: Այդ «բայց»ը իրօք շարաղէտ նշանակութիւն մ'ունի: Ատիկէ կը հասկցի, որ Լենինի ամբողջ կարծիքը ազգային հարցը լուծելու ինդիլի մէջ թէև ազատագրուած է Մարքսի սխալ մտածողութիւնէն (անշուշտ, պատմութեան հարկադրանքի տակ), սակայն, անիկա միայն ընդատու կերթալ ազգային հարցի լուծման, որպէս ժամանակաւոր երե-



ւայթի մը: Այսպիսով իր ներքին էութեան մէջ կը պահէ Մարքսի հիւսնդութիւնը: Լենին իր այդ յօդածի մէջ կեդրակացնէ. — «Ընկերակուսութեան վերջնական նպատակն է բաժան-բաժան ազդերու ձուլումը»: Այս հիմնական միտքը ելակէտ ունենալով, երբ Լենին իր բանաձևումով ազգային անկախութեան իրաւունքը կը շատազօլէ, ու զուգ կը սպասէ, որ այդտեղ վերջացնէ, ահա «բայց»ով մը ետ նահանջ կը կատարէ, մշուշապատ մթնոլորտ մը ստեղծելով: Այդ ձևակերպման խտացումը տանք քանի մը խօսքով.

— Եթէ ճշւած ազդը դիմում ընէ և ուզէ ամբողջովին անկախ ապրել ռուսական մեծ ազգէն, ռուս բանւորութեան պարտականութիւնն է քշտարկել ի նպաստ այդ ճշւոյ ազգի ազատագրութեան:

— ԲԱՅՑ... Երբ այդ հարցը երթայ ու ենթարկւի նոյն ճշւոյ ազգի մէջ Հանրաքէի, այն ատեն ճշւած այդ ազգի բանւորութեան պարտականութիւնն է քշտարկել Հակառակը և չթողուլ, որ փոքրիկ ժողովուրդը բաժնի մեծ բանւորութենէն... (L'Internationale Socialiste et les peuples opprimés. V. L. էջ 90):

Այսինքն, մէկ ձեռքով կուտամ, իսկ միւս ձեռքով մատ կը թափարակեմ, որ չհամարձակես անոնէ: Զուեշտախաղ մը — որով է այնան շատ տեսնող ուսական վերջին օրերու պատմութեան մէջ: Նոր ձևի բացատրութիւն մը, որ կը նշանակէ՝ դառնալ-դառնալ ու զալ տիրող ժողովրդի մականին տակը մտնել:

\* \* \*

Մեր խեղճուկ իրականութեան մէջ օտարին և տիրողին կապիկը շատ զօրաւոր եղած է, և՛ է: Տասնեակ տարիներով Հայ մարքսիստները Մարքսի պոչէն բռնած՝ Հայկական հարցը կղերա-բուրժուական գործ Համարեցին և իրենց կարելին բրին զայն ձախողցնելու Համար: Հիմա ալ Լենինի քղանցքէն բռնած՝ քարացած խարխու մը նետած են անոր հուշակաւոր «բայց»-ին վրա: Հայ բուլճիկները տէր դառնալով մեր պատրաստի փոքրիկ Հայրենիքին, որ այնքան մեծ գոհողութեամբ կերուեցաւ, ծանր քարի մը պէս բոցեցին ազգային ազատագրութեան և մեր ժողովրդի ամբողջացման ու միութեան կիսատ մնացած ճանապարհը: Անոնք անցեալի մէջ տգէտ էին, ազգային հարցը չէին ուսումնասիրած, ազգային ամբողջութեան ըմբռումը կը թխտէին ու պարզ հանդիսատեսներ էին ազգային մեծ շարժման դէմ յանդիման: Այսօր նոյնպէս, կը նմանին իրենց անփառունակ անցեալին և երբե՛ք կոչւած չեն կենալու ազգային հարցը լուծելու շիտակ ճանապարհի վրա:

Հայ բուլճիկները, հակառակ իրենց աղմուկին, անցեալի իրենց աղքատ ժառանգութիւնը տակաւին կը կրեն իրենց ուսերուն: Հայոց կեանքի մէջ, ազգային հարցի լուծման առաջնորդը Հ. Յ. Դաշնակցութիւնն է. բուլճիկները Լենինի գործակաւորներն են: Այդպէս էին երէկ, այդպէս են և այսօր:

Տեսնուցէ Հայոց պատմութիւնը ի՞նչ կըսէ այս երկու հոսանքներուն ազգային ինդիքը քննած ժամանակ: Պօսենք մարքսիստ Դ. Անանունի բերնով.

— «Մեծ էր հայ մարքսիստների ծառայութիւնը մեր փողաքանակ մտքի արթնացման գործում, բայց այն աւելի մեծ ու արգասաւոր կը լինէր՝ եթէ զգաստ ու շքանկատ երկար ազգային հարցում: Դժբախտաբար, այդ տեղի չունեցաւ: Տեղի չունեցաւ ոչ թէ հայ մարքսիստների շար կամֆի շնորհիւ, այլ որովհետև ազգային հարցը ասածդ իր ամբարձմանութիւնների մէջ, տեսականի և գործնականի կազմից, դեռ ուսումնասիրութեան նիւթ էր դարձել մարքսիզմի բուրժուալու: Ազգային հարցի գործնականը, շարժումն ու պահանջները, կանխեց նրա գաղափարական մշակումը: Առաջ գործ եղաւ, յետոյ գաղափարը: Մեր առաջին մարքսիստները դէմ յանդիման եկան ինչ լայն շարժման: Իրանի չէին այն կողմերը կալ տեսաբանօրէն հիմնաւորել: Եւ որովհետև իրանի անցեալի ժխտումն էին՝ ժառանգ չկանցնելին և անցեալից բխող շարժմանը, համարելով այն կղերա-բուրժուական մտքի արգասիք: Կալի տաք վայրկեանին սա հասկանալի վերաբերմունք էր, բայց ոչ օրինակելի: Երբ առաջին օրերի հապնեալ որոշումը դառնում էր յարատև գործունէութեան աւելցոյց՝ այս արդէն սայթախումն էր»: (Ռուսահայ. Հաս. Զարգ. Գ. հատոր, էջ 408):

Այսպէս, մեր հակառակորդ մարքսիստներն ու այլ հոսանքները ազգային հարցը լուրջ ուշադրութեան առած չէին: Անոնց ազգային հարցի յարատև թխտումը ոչ թէ սպաթաքումն էր, այլ կատարեալ անանկութիւն:

Անբովանդակ ու իրենց համար իսկ նշանակութենէ գուրկ էր «ազգային ինֆորմոյզման» պահանջը: Թէ որքա՞ն ծիծաղելի եղած են անոնք այս լուրջ հարցի վերաբերմամբ, ցոյց կուտայ կարևոր խոստովանութիւն մը, որ կը գտնենք Դ. Անանունի գրքին մէջ: Ան կը գրէ. — «Այդ — Դեմ. բանօրակ. հայ կազմ. վախեցումով թէ կը կատարուի նացիօնալիզմի մէջ, հրաժարւեց և «ազգային ինֆորմոյզման» պահանջից»: (Դ. Անանուն Ռուսահայ. Հաս. Զարգ. Գ. հատոր, էջ 410):

«Մերի բացատումն ու թխտումը թանգ նստող մեզ» : Լաւ է, որ Հիմա գտնէ կը խոստովանին: Այդ բացասական դիրքը քննատեւելն յետոյ Դ. Անանուն կեդրակացնէ. — «Այսպէս, հայ մարքսիստներն ընդհանուր լեզու չգտան ազգային հարցի լուծման մէջ: Մնաց որ յեղափոխութիւնը՝ այսինքն գործնականը (ինչուն չի բռնել ըսել Դաշնակցութիւնը է.Մ.) լուծէ այն, և մարքսիստները գնան շարւելու պատրաստի սեղանի շուրջը»:

Հ. Յ. Դաշնակցութեան հակառակորդ հոսանքներու անձև ու անորոշ վերաբերմունքն աւելի շիտակ՝ ժխտումը, ազգային հարցի վեր յիշւած ձևով սահմանելն յետոյ, շատ հանելի է դարձնում մարքսիստ Դ. Անանունի խօսքով բնորոշել Դաշնակցութեան ազգային հարցի ըմբռումը: Դ. Անանունը յիշեալ գրքի Գ. հատորի մէջ Հ. Յ. Դաշնակցութեան անողոք ու անիրաւ քննադատը դարձած է. սակայն, այդ նոյն գրքի մէջ, կարծես Հարկադրած՝ այնպիսի բնորոշումներ չբռնէ և, որոնք աւելի զբաղանքն անոնց Դաշնակցութեան մասին, քան իր քննադատական բազմաթիւ էջերը:

Կսենք պահ մը:

«Դաշնակցութիւնը նստած էր ժողովրդի ազգային զգացմունքներին ու ամեն տղատունների խանձարուրի մօտ և Յաւուսի էր: (Իջ 411): Աւելի անդին. «Բայց Դաշնակցութիւնը յաւ էր քմբռնում ազգի գոյութեան այլամիջակ վիճակը: Լոկ բարոյական միջոցներով անկարելի էր մրցել տիրոջ և հօգր ազգերու հետ: Կառուար գոնաքերութեամբ անհնարին էր ազատելով նրա անվաճանգ գոյութիւնը: Եւ անո Դաշնակցութիւնը մտնում է հայութիւնը պետական ժող դարձնել»:

Դաշնակցութիւնը Հայութիւնը պետական ազգ դարձնելու իր ձգտումը կուզէր կեդրոնացնել Հայկական նահանգներու և դաւառներու մէջ: Կուզէր սահմանազծել այն վայրը, ուր Հայութեան քաղաքական օճախը պիտի գտնուար, ու կը պահանջէր Հայաստանի դաշնակցութիւնը՝ Փետրեացիա: Այս ամբողջը կը ձևակերպուէին ու տեսական պարզարտութիւն կը ստանային այն ժամանակ, Երբ մարքսիստներու և Գ. Անանուններու համար զազգային հարց ասածը իր մտքաբանութեանց մէջ, տեսականի և գործնականի կողմից, դեռ ուսումնասիրութեան միջը չէր դարձնել մարքսիզմի բարոյում: Մինչդեռ, մեզի համար, շատ պարզ էր, որ Հայոց ազգային հարցը թրքական ու թաթարական քուրայում լաւ «ուսումնասիրած» էր:

Բնական է, որ մենք այդ հիմնական պահանջով պիտի բախուէնք մեր դրացիներուն հետ, մեր տեղը որոշելու համար:

Մարքսիստներն եկան շարեցան պատրաստի սեղանին շուրջ ու հիմա կը խօսին յանուն այն դաշնակցութեան, որ տասնեակ տարիներով քարոզեց ու մարմին սուս մեր կուսակցութիւնը: Անոնք իրենց այս ընթացքին մէջ, կեղծ են, ու միայն կը հանդուրժին կատարած իրողութեան, այլապէս չպիտի թողնէին, որ Հայկական նահանգները կըլան մնային Ազրբէյջանին և Վրաստանին: Մինչդեռ երկէ, այդ մարքսիստները դէմ էին Հայկական հասարակական կեանքին և անոր պահանջած դաշնակցութեան: Լսենք այդ մասին Գ. Անանունի խոստովանութիւնը. — «Այս հետնակարի դիմաց, որ միջոցառային կոխ ու անհամաձայնութիւն էր, հայ մարքսիստները դէմ էին արտայայտուում Անդրկովկասի փեդերացիային: Բայց մարքսիստների կարծիքը պարտադիր չէր դաշնակցականների համար, և նրանք շարունակեցին Ռուսական Հայաստանի տեղն ու դիրքը որոշելու»:

Եւ Դաշնակցութիւնը կըլան Հայաստանի տեղն ու դիրքը որոշելու հիմնապէս փոխել կողմանի ազգագրական քարտեզը...

Վերջին խոստովանութիւն մը նոյն հեղինակէն, որ իր հիմնական բնոյթով այսօր տակաւին անփոփոխ կը մնայ:

«Անա այսպէս ազգաշինութեան գաղափարն ու ծրագիրը Դաշնակցութեամբ շարքերում մտնեց ամբողջը: Մի կողմից նա կերպարանաւորեց իրեն ազգային կալուածական ինքնօրէնութիւն՝ յարմարեց անձային կայսի վրա, միւս կողմից դարձաւ տերիտորիայի և հայրենիքի արձանու միասական Հայաստանում: Մնացած քաղաքական հասանքները կամ մար քան չէին ստանձնել նրա հագումն ու սրտին, կամ հիմը կրկնելով»:

Նրա ձգտումները մշտնապէս էին շափարտութեան ուղիներում և այսպիսով չէին կարողանում տիրապետել նրա հասարակական համակրումին: Միայն Դաշնակցութիւնն էր, որ չէր հրաժարուում արձաններից և ինքնամփոփ հայրենիքի ներսնակար էր բաժան հայութեան առաջ: Նկատի առնելով, որ գաւառների հայ բնակչութիւնը հովանաւորող և պաշտպան արձանող գիւղացիութիւնն էր, մանր խանութքան ու արհեստուոր, որոնք իրանց գաղափարներն ու արհեստը կանգնում են ապահովագրել արտաքին վտանգներից, նկատի առնելով այս նախադրելները՝ պահանջուում էր ասել, որ Դաշնակցութիւնը բռնած ունէր ժողովրդի ամեն մտորումներին՝ հասաբանակարէն ապրելու և հասաբանակարէն մեծագործ լինելու»:

Դաշնակցութեան ազգային քաղաքականութիւնը, ճանկահայաստանի և Ռուսահայաստանի պատուազրման գործը՝ մեր հակառակորդ հոսանքներու և անհասանելու կողմէ կը նկատուէր կղերա-բուրժուական գործ մը. անոնք ոչ մէկ առիթ կը փախցնէին ու հիմա ալ չեն փախցնէր հարւածելու այդ աշխատանքը կոնաւելին: Հիմա տակաւին Հայ բոլշեւիկները թուրքաբէն կը կրկնեն տասնեակ տարիներ առաջ իրենց զոջ ըրած խօսքերը՝ միացեալ Հայաստանի ազատագրումը նկատելով բուրժուական-կապիտալիստական ձգտում մը: Նոյնպիսի գոն-հիկ արշաւանք մը կը մղեն Դաշնակցութեան այսօրուայ ազգային քաղաքականութեան դէմ, ինչոր կընէին երկէ մեր Փետրեացիայի պահանջին դէմ: Մարքսիստ քննադատ Անանունի որակումներու պատասխանը արժանի է իր բարեկամներու և կողմնակիցներուն: Վերջացնելը անոր խօսքերով. — «Մնացած պայմաններում այս շարժումը բուրժուական համարելի է ասել և հարւածել Քրիստոսի գամին, այսինքն մտրից յաշիլ աճապարով ու արդարին: Դատադրութեան այս կապակցութիւնն է, որ մեզ ստիպում է կրկնել՝ թէ Մրանանը (Ի՛նչու ոչ ոչ ան բոլոր Հայ մարքսիստները. Կ. Ս.) սխալ կամ գոնեակ էր դատում, երբ թիւրքահայ դատը դարձրեցին կապույլ էր հայ բուրժուագիւյի «բաղաբանական իդէալներին» հետ: Նման իդէալներ գոյութիւն չունէին: Հայ բուրժուագիւյի իր ցեղին պատճում էր ոչ թէ «բաղաբանական իդէալներով» ու «ծրագիրներով», այլ պարզապէս իր բացակայութեամբ»:

Այսպէս, մեր հակառակորդները ընկերվարութեան անունը շահագործեցին երկար տարիներով և գործեցին Հայ ազգի ազատագրութեան դէմ, որ ըսել է, Հայ աշխատաւորական զանազանի քաղաքական և անտեսական դերագոյն շահերը ոտնահարեցին: Տասնեակ տարիներով անոնք միաձայն վրաց սոց. — դեմոկրատներուն հետ բացականչեցին, որ Հայկական տերիտորիա դաշնակցութիւն չունի, սակայն, մարտնչող Հայ յեղափոխականութիւնը այդ իրականութիւնը դարձուց: Կղերաբուրժուական գործ մը նկատելով Հայկական հարցը՝ մեր հակառակորդ մարքսիստներն ու այլ հոսանքները ձեռք կառկառեցին ուսուին, թաթարին, մուսլիմի կոնաւորին, չովինիստ վրացուն, Հայ ազգագրական (կղերա-բուրժուական) բոլոր տարրերուն և գործեցին Հ. Յ. Դաշնակցութեան դէմ, կացնահարելով Հայկական հասարակական կամքը: Մինչդեռ այսօր երէկուայ դէս պայծառօրէն կը տեսնուի, որ Հայ

բուրժուազիին «լը փայլի իր կատարեալ բացակայութեամբ» :

Այսօր բուլճարի մը բարձրագոյն կը յայտարարէ, որ ինքն եկաւ և արմատական լուծում տուաւ ազգային հարցին: Հայ բուլճարիները՝ տեսակէտէ ու ազգային քաղաքական ձգտումներէ զուրկ՝ ուսական հսկայ թիւով իր ծայր կը բռնեն: Հայաստանի կուզէ՞ք.— ահա Յոբանջարային Հայաստանը: Անկախութիւն կուզէ՞ք.— Մենք անկախ ենք: Ազգամիջևան կուրներ այլևս գոյութիւն չունին: Այլ ինչ կուզէ՞ք. ազգային հարցը արմատապէս լուծած ենք: «Պատրաստի սեղանի» շուրջ նստողներուն շատ դիւրին է այս յայտարարութիւններն ընել: Իայց իրականութիւնն այդ մշուշի մէջ չի կրնար կրթուիլ: Ոչ հայ բուլճարիներն և ոչ ալ համառուական բուլճարի մարդային հարցին լուծելու մտօք մտակցած են: Այսօրայ կրեոյթներն այդ խաբկանքը կուտան, սակայն, ուշադիր պրոպոզիտ պիտի տեսնէ, որ բուլճարի մը երբեք առաջագրած չէ որևէ հիմնական ծրարի մարդային հարցը լուծելու և գործնական քայլերով չէ գիտած այս նպատակին: Բուլճարի մը, հարկադրած՝ ընդառայ ցագած է կատարած իրադրութեամբ: Որովհետև բուլճարի մի միջև վեր էր դէմ կեցող ճնշում ազգերու պատագրական մեծ շարժումներուն, որոնք, միշտ է, շատ մեծ քափ ստացան ուսանողան վերաբերեալ և հոկտեմբերեան յեղափոխութիւններու հետեւեալ: Բուլճարի մը արտաշին երեք տարիներուն զլիսակարոյս իստուած էր ուսական քաղաքացիական կուրի քաստն մէջ, երբ բազմաթիւ ազգեր ինքզինքնին անկախ կը հռչակէին և կը կազմակերպէին իրենց ազգային պետութիւնները: Այդպէս ըրին Ֆրանսիացի, Աւստրիացի, Իտալացի, Եստոնիացի, Լեհաստան, Ուկրաինացի, Վրաստան, Լեռնականներ, Թուրքական, Ազգերջան, Սիպիք, Հայաստան և այլն: Մոսկուս՝ կորուած այդ բուլճարի՝ գլուտ քաղաքական նպատակներով, ուստի լով «ամենուն, ամենուն» կը յայտարարէր երբեք իրմէ շատ հեռու ազգերու անկախութիւնը ողբերգական ծիծաղելիութեամբ մը, օրինակ, Լեհիներ Տաճկահայաստանի անկախութեան հռչակումը, երբ հակաբուլճարի քանակները Ռուսաստանի կեղերներէն ղէպիլ Մոսկուս կարչաէին: Տարիներ յետոյ, բուլճարիկան Ռուսաստանը՝ իր ներքին կուրներէն ազատուած՝ թեկըր տարածեց դէպի այդ կազմակերպուած ազգային պետութիւնները և որոնց որ կրցան ընկճել, տեղական ինքնապետութեան մը հիմունքներով, դաշնակցային կազմով իրեն կապեց: Այդչէ առկա սեղմումն ոչ մէկ հնարաբարութիւն կար: Իսկ անոնք, որ կրցան դիմանալ, մնացին անկախ պետութիւններ, ու այսօր բարգաւաճ վիճակ մ'ունին: Այս է ահա բուլճարիկան ազգային հարցի արմատական լուծման հուրթիւնը:

Ռուսաստանի դաշնակցութիւնը դարձեալ կատարուած իրողութիւններու պարզ հաստատումն է, ժամանակաւոր հանդրան մը: Ռուսական ներկայ պետական կառուցումը ճիգի, ջանքի ու մշակում ծրարի մը արդիւնքը չէ: Այս իրողութիւնն առանձնապէս աղէ-

տայի անդրադարձում ունեցած է հայ ժողովրդի վրա: Մասնաւորելով մեր խօսքը կողմասի մասին՝ կը տեսնենք հայ ժողովուրդի կատարելապէս անիրաււան, զրկուած գուս հայաբնակ իր երեք նահանգներէն, որոնց միացումով, այսօրայ Յոբանջարի հայաստանը փոխանակ 25,000 քառ. քիլմ. փ պիտի ունենար 50,000 քառ. քիլմ. տարածութիւն և 1,300,000 բնակիչ:

Հայ բուլճարիները նստած պատրաստի սեղանին շուրջ՝ կանուխեն Տաճկահայաստանի ինքերը — հիմա կղերս-բուրժուական բառի փոխարէն դաշնակցական էմպրիալիզմ կանաննն այդ պահանջը: Իսկ Ախալ-քալախի, Գանձակի, Դարբասի և Նախիջևանի խնդիրները 7 տարիէ վեր կատարելապէս կանգնեցան: Ու այս ամբողջ հայոց հասարակարգային հարցի հիմնական լուծում կը նկատեն:

Եթէ 19րդ դարու ազգային շարժման խոշոր ազգակներէն մէկը ունեցող բուրժուազիին էր, պատմական ճամարտութիւն մըն է, որ 20րդ դարու ազգային ազատագրման արագութիւնը գործը ընկերավարական գոնգուաներու տենչանքի և աշխատանքի արդիւնքն է: Ընկերավարութիւնը բուլճարի խորեպատիր շարժման հրամարած է: Այսօր ճնշւած ազգերու աշխատատեղական գոնգուաններու քաղաքական գերազույց ձգտումը իրենց ազգային անկախութեան պահանջն է: Հ. Յ. Դաշնակցութիւնը հայ աշխատատեղական գոնգուանի համամարդկային և ազգային իղէպներու ներդաշնակող և իրականացման ձգտող հայոց ընկերավարական յեղափոխական կուսակցութիւնն է: Ու ան կրնայ պարծենալ, որ ազգային հարցի տեսակներ և գործնականը իր կազմութեան օրէն՝ ու ուսումնասիրած է և՛ գործադրած: Հայոց պատմութիւնը հասած է սոցի մը, ուր Դաշնակցութիւնը յստակօրէն ծրարած է և կը ձգտի միացնալ և ամկայս Հայաստանի մը. այլ ելք չունի հայոց պատմութեամբ ընթացքը: Ով որ կազմակերպուած ուժով իրականացնէ այս հիմնական պահանջը, ան կը դառնայ հայ ժողովրդին միջէն ուժը, ու միայն ան կարող է հայ ազգի խանձարուրի մօտ կենալ: Այլ կերպ պատմական առաքելութիւնը կը մնայ Հ. Յ. Դաշնակցութեան:

Հայ ընկերավարական երիտասարդութիւնը, առջան պատմական փորձերէն անցնելէ յետոյ, չի կրնար օրօրել բուլճարիկան կուսակցութեան «ազգային ինքնորոշում» ինքաթիւրած գործնականով: Ազգային հարցի լուծումը բուլճարիկան եղանակով, ընկերավարութեան անունով ճնշւած ազգերու աշխատատեղական քաղաքական խորսակումն է: Անկախութեան պայքարին այսօր կը հակադրեն լեհիներով «համամարդկային բարիքներ», որպէսզի տակաւին 20 տարի ևս հայ բուլճարիները հարւածեն հայոց ազատագրական շարժման կոնակէն, ու օր մը գան, Դ. Անանուի պէս, հայոց պատմութիւնը գրեն, ընդգծելու համար, որ ազգային հարցը լիովին ուսումնասիրուած չէր, այս անգամ, «լեհիներով իրաւալու» . . .

Գ. ՍՍՍՈՒՆԻ

# Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

## Մ Շ Ա Կ Ո Ց Թ Ա Յ Ի Ն, Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր

### ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Մեր անհատական և հանրային գոյութեան հիմնական տարրերը կազմող գաղափարները բազմապիսի կոմբինացիաների մէջ այնքան յաճախակի կերպով մեր առօրեայ կեանքում հանդէս են գալիս, այնքան մեզ համար միս ու արիւն են դարձել, որ մենք ամենևին կարիք չենք զգում հոգեկան առանձնակի սեւեռմամբ դիտել և քննել դրանց ծագման և ընդթի խնդիրները: Նման տիպի մի քննութիւն այն խորը հիմունքի վրա է կառուցւած, թէ մի անձն, փոխանակ անպիտակից մղումների թեթարկելու և ըստ այնմ պատահակապէս յուսմանց թեղադրանքներով շարժելու, այն ժամանակ միայն կարող է լիակատար տէր լինել իր անհատական կառուցւածքին և քաղաքակրթութեան, եթէ նա լուսապայծառ կերպով իրացել է իր գոյութեան հիմունքը կազմող և իրեն տոն առողջ գաղափարներին: Նոյնն է տեղի ունենում նաև հանրային կեանքում: Ինչքան մենք անտեղեակ ենք տւեալ հասարակութեան կառուցւածքի վրա իշխող հիմնական գաղափարներին, մենք ի վիճակի չենք բմբնելու լրջօրէն և խորունկ կերպով նրա արդի վիճակը, նրա ձգտումները, պահանջները և այլն: Եւ մեր այս անտեղեակութիւնից առաջ է գալիս այն գլխաւոր չարիքը, որ մենք անկարող ենք զիտակցարար, որոշ տեսակէտներով առաջնորդւած, ազդել ինչպէս մեր անհատական, նաև հանրային կեանքի ընթացքի վրա և չենք կարող դրանց բանականացնել:

Թէ անհատական և թէ հասարակական կեանքը — վերջինիս բոլոր բնագաւառներով — տողուած է մէկ կամ մի քանի գաղափարներով, որոնք սերտօրէն շաղկապւած լինելով և կեանքի բոլոր երևոյթիների վրա իշխելով, այս երևոյթներին մի ձուլւածքից առաջացրած փաստերի ընդթ են տալիս: Զի կարող գոյութիւն ունենալ մի մշակոյթ, որի տարրեր կողմէր բոլորովին տարրեր սկզբունքների, գաղափարների մարմնացումն լինելին, որովհետև այս պարագային կեանքի միութեան գաղափարը կոչչանար: Օրինակ, անհնար է, որ տնտեսական և քաղաքական կեանքում լիակատար ազատութեան սկզբունքը կիրառւէր, իսկ օրինակ, հասարակ խնդիրներում, դրան բոլորովին հակառակ, հնաւուսացեալի կրօնական ազատութիւնը կաշկանդող կապեր գոյութիւն ունենային: Ուրիշ խօսքով ասած, իրականութեան մէկ մասի մէջ տիրապետող սկզբունքները տրամադիր են վարակել միս մասերին: Եւ ընդհակառակը, երբ սկսուած է մշակոյթի որևէ բնագաւառի մէջ գոյութիւն ունեցող գաղափարի խախտումը, վերամշակումը կամ բոլորովին նորի կերտումը, այս երևոյթը իսկույն ազդում է — ամբողջ կեանքի միևնոյն ձուլւածքն ունենալու պատճառով — նաև միւս բնագաւառների վրա: Օրինակ, զուտ քաղաքական,

կրօնական, տնտեսական յեղաշրջումները անխուսափելիօրէն ազդում են միմեանց վրա, մինչև որ մի որևէ նոր սկզբունք գերիշխում է բոլորի վրա և այսպէս ասած՝ հասարակչութիւնը վերականգնում:

Սակայն, մի հանգամանք չպիտի աչքաթող անել: Ինչքան էլ որ մարդկութիւնը ջանում է նոր արժէքներ, տեսակէտներ և այլն ներմուծել կեանքի մէջ, դրանով դեռ բացարձակապէս չեն մեկուսացւում հին արժէքները, որովհետև եթէ մի սերունդ ջանար նախորդ սերնդի բոլոր ստեղծած արժէքները ոչնչացնել և բոլորովին նորը կառուցանել, այդ դէպքում մենք մշակոյթի գաղափարից առհասարակ պիտի ձեռք վերցնէինք: Մարդկային մշակոյթը ստեղծւում է իրրև հազարաւոր տարիների կուտակւած աշխատանքի արգասիք, և եթէ իւրաքանչիւր կարաշրջան ու սերունդ բոլոր նախկին դարերու ու սերունդների կերտած չէնք լիակատար կերպով ոչնչացնէր, այս դէպքում կը բացակայէին մարդկութեան բարձր գոյութեան այն պայմանները, որոնցով իսկապէս կուտուարական կեանք է ստեղծւում: Ճիշտ է, դարերի ընթացքում մեր հոգին, մեր գաղափարները, մեր կեանքի պայմանները ազնւանում, խորանում, նրբանում, ընդարձակւում են, սակայն, մարդու ըստ Էուֆեման Ույնը մնալն է պատճառը, որ մենք առհասարակ համամարդկային քաղաքակրթութեան պատմութեան մասին կարող ենք խօսել, որովհետև այլապէս, մենք ներկայ դարաշրջանի գաւակներս, ոչ միայն հնարաւորութիւն չէինք ունենալ բմբնելու մարդկութեան նախկին դարերի ստեղծագործական ճիւղի արդիւնքները, իրրև մերինները ից տարրեր բաներ, այլ և մարդկութեան տարրեր դարերում ունեցած աշխատանքի արգասիքները իրրև անջատ-անջատ, միմեանցից կախում չունեցող ստեղծագործութիւններ չպիտի տիրէինք:

Մշակոյթի պատմութեան մէջ ուշադիր դիտողի համար ամենահետաքրքիր երևոյթներից մէկն այն էր, թէ ինչպէս՝ դարերի ընթացքում ստեղծւած գաղափարները սերնդէ-սերունդ փոխանցելով, մեր հոգուն շատ աւելի փարթում, ճոխ բովանդակութիւն են տալիս, քան որ մենք մեր անմիջական շրջապատից ստանալ կարող էինք: Եւ իրրև արդիւնք այս փարթամացած անհատական քաղաքակրթութեան, մենք շատ աւելի ակտիւ, նորակերտող, ձևակերպող եղանակով ենք հանդէս գալիս մեր շրջապատի և սրանից ստացած անհամար գրդիւնների վերաբերմամբ, քան մեր նախահայրերը, որոնք օժտւած չլինելով բարբ և դարպացած գաղափարներով, անմիջական պասսիւ ազդեցութեան տակ են իրենց վրա այնքան սարսափեցուցիչ կերպով ազդող արտաքին միջավայրի: Իսկապէս ասած կուտուարան սկսում է այն վայրկեանից, երբ մարդը

գիտակցօրէն հակադրում է իր անհատական կեանքի կամ չըջնապատող բնութեան վրա և ախարտում է վերջինս յարմարեցնել իր աճող կարիքներին:

Գաղափարները մնայութեան և մեր հոգեկան կեանքի վրա ունեցած ազդեցութեան լաւ խորամուխ լինելու համար, վերցնենք իրրեւ պարզաբանող օրինակ ազգութեան գաղափարը: Գարեբէր ընթացքում մի որոշ ժողովուրդ, առանձնապատուկ աշխարհագրական-պատմական միջավայրով, ունենալով ւսուսող կենցաղ, նրա բոլոր հասարակական ինդիւիդները ստացել են նաև իւրապատուկ կոնկրետ արտայայտութիւն: Ազգութեան կեանքի ամբողջ բովանդակութիւնը — իր անցեալով ու ներկայով — մարմնացել է իւրայատուկ հոգեկան մեքենայի մէջ և իրրեւ արդիւնք այդ բոլորի, ազգութիւնը երկար դարաշրջանների ընթացքում ասպարէզ է բերել մտածողութեան, կամքի և զգայմունքների որոշ դունաւորումներ, որոնք յատուկ են տւււալ ազգը կազմող անհատներին: Ինչքան ազգութիւն կազմող մեծամասնութիւնը ապագային գործօն մասնակցութիւն է ունենում իր ազգային գործերի անօրինման մէջ, ինչքան այդ դանւածը գործօն է դառնում, այնքան աւելի սուր կերպով են հանդէս գալիս նրա մօտ պատմութիւնը և փորձաքաճ իւրայատուկ կոմիքստ ևնէրը, որոնց մէջ անխտուսփելիօրէն պիտի մտնեն նրա հասարակական կեանքի բոլոր կողմերը: Այս իւրապատուկ կոնկրետ մեքենայը կարող են լինել տնտեսական, իրաւական, կրօնական, զեղարեւստական և այլն:

Յայտնի է, որ մի անհատ, երբ բարդ բովանդակութիւն է ունենում, երբ իրականոր ծաւալում են նրա բոլոր կարողութիւնները, նրա ունեցած բոլոր ապրումները սերտ օրգանական ներգաշնակութեան և միութեան են վերածուում ու այնքան էլ նա իր հոգու արտայայտութիւններում անհատական թաղաքակրթութեան գրոյծն է դնում: Նոյնպէս պատահում է նաև ազգային օրգանիզմների հետ: Ինչքան ազգութեան հոծ մեծամասնութիւնը կուլտուրական բարիքների ստեղծման և վայելման մեծ շափով մասնակցում է, այնքան էլ նա կրատրական գրութիւնները դուրս գալով, մշակոյթային բոլոր արժէքները, որ նա ստեղծել է կամ ուրիշներից փոխ առել և իւրացրել, անմիջական յարաբերութեամբ մէջ է դնում այն բոլոր պատմականօրինակ առաջ եկած ուրույն մեքենայի հետ, որոնց մէջ միայն պարփակւած է իւրաքանչիւր ազգային կեանք: Հասարակական կեանքի բարդացմամբ անհրաժեշտօրէն նաև բարդանում, անհատականում են նրանց ընդգրկող վերոյիշեալ կոնկրետ մեքենայը: Ուրիշ խօսքով ասած, դարերի ընթացքում ազգութիւնը ստեղծել է և մեզ փոխանցել թանգազին արժէքներ, որոնք այսօրուայ կեանքի անմիջական արդիւնքը չեն և որոնց պատճառով մեր հոգին շատ աւելի հարուստ է քան ներկայի մեր անմիջական խղճուկ արտաքին պայմանները կարող էին ընձեռել, ահա այս մեզ փոխանցւած և մեր մէջ միտ ու արելն դարձած գաղափարներն են, որոնք ինքնարժէք բնօրթ ստանալով, անկախանալով, հակառակ մեր շրջապատի ողորմելի պայմաններին, իրենց շատ ուժեղ կերպով զգաւ առաջ և մեզ տրամադրում, ի դին ամէն տեսակի գոհաւորութեան, հաւատարիմ մնալ մեզ ներշնչւած այդ հաւուրըց գաղափարներին: Հայ ազգութիւնը իսկապէս տւււել է իր վերջին դարերի

ապարտիտ պատմութեամբ մեր այս տեսակէտի լուաւորոյն հիմնաւորումը և բացատրումը այն միակողմանի ըմբռնման, թէ արտաքին անմիջական պայմանները, և այն էլ անպայման անտեսական տիպի, կազմում են վերջին և միակ գործօնը հանրային կեանքի: Եթէ իրօք այսպէս լինէր կեանքը, այն դէպքում վերին աստիճանի տարօրինակութիւն պիտի ներկայացնէր, որ հայութիւնը, ամենաանպատ անհատներումն իսկ, փոխանակ լթելու իր պատմական ազգային արժէքները և անմիջական շահին ունկնդրելով՝ ձուլւելու իրեն տիրապետող և զերակշտող տարրի հետ, ընդհակառակը, անհաւասար կուտւււմ ամէն ինչ զոհարեցող, իր ազգային ինքնութիւնն է շեշտում: Այս հետաքրքիր երևոյթի միակ բանական բացատրութիւնն այն էր, որ ազգութիւնների կեանքը միութիւն ներկայացնելով, նրանց ներկայի մէջ ապրում են իրրեւ կենդանի իրականութիւն այն գաղափարներն ու արժէքները, որոնք դարերի ընթացքում են կերտւել, փոխանցւել և ազգային անհատականութեան բաղկացուցիչ տարրերը կազմել:

Նոյնպիսի յարաբերութեան են ձգտում նաև կրօնական գաղափարները: Սրանք մէկ անգամ որ կազմոււււմ, կերտոււււմ և ձև են ստանում, ապա հանդէս են գալիս իրրեւ ուրոյն արժէք և բոլոր արտաքին իրադարձութիւնների, պատահանքների վրմայ ջանում են, իրրեւ հոգեկան աներկ կառուցւածքներ, իրենց տիրապետութիւնը շատ անգամ ամէն տեսակի զոհարեւորութիւնների և տառապանքների պատրաստ են՝ այդ մինչև իրենց հոգու խորքը թափանցւած գաղափարներին անսայթաքօրէն հետևելու համար:

Անշուշտ, շատ անգամ դուււ կրօնական բախումների մէջ, օրինակ, նաև նիւթական տարրեր են խառնւել, սակայն, դրանով խնդիրը ըստ էութեան չէ փոխւել, այլ աւելի բաղադրելու բնօրթ է ստացւել և նուրբ դիտող է պէտք այդ տարրերը միմեանցից բաժանելու համար, փոխանակ, ինչպէս սովորաբար, դիւրին կերպով կատարում է, ամէն ինչ բոնազօրօտիկ կերպով մէկ բանաձևի տակ մտնելու և դրանով սին կերպով բազմերանգ իրականութիւնը բացատրել ջանալու:

Գաղափարների լուսաւորման տեսակէտից կարեւորութիւն է ներկայացնում նաև նրանց ծագման հարցը: Այս խնդրում պիտի տարբերութիւն դնել գանազան տիպի գաղափարների յղացման մէջ: Կեանքից համեմատաբար կարած գաղափարները, օրինակ, աստղաբանական համ մաթեմատիկական գաղափարները, որոնք անմիջական կախում չունեն կեանքից — մեծ մասամբ իրենց առաջացման և գարգացման մղուււմ ստանում են մարդու մի բան, նոր և անձանօթ բան իմանալու տենչից: Սոյն մարդկային տենչը, որ անմար է, անպայման կերպով խոշոր և կարեւոր ազդակներից մէկն է առհասարակ մեր իմացութեան, բայց առանձնապէս ուժեղ կերպով նա հանդէս է գալիս վերացական գիտութիւններում, որոնք փարթամանում են մեծ մասամբ իրենց տեսլների ներքին տրամաբանութեան գարգացման և նրանից բխած հետեւութեանց հիման վրա: Կեանքից անմիջապէս կախում չունենալու պատճառով, այս տիպի վերացական գաղափարները

նաև անմիջապէս շին արդու մտն այդ կեանքի վրա, այլ լաւագոյն պարագային՝ միջնորդապէս:

Բոլորովին խնդիրը փոխուած է, երբ բարոյական, հասարակական զարգացման ևնք մտնեալով, որոնք անմիջական են սերտ յարաբերութեան մէջ են առօրեայ աշխուժութիւն հոգանքի հետ: Այստեղ տեսալ հասարակութեան պահանջները, ձգտումները, տեղերը որոշիչ, մեծական նշանակութիւն ունեն այդ զարգացմանը հետեւեալն, ձեռնարկում, ձեռնարկում, գործարարական համար: Իտեղապէս ասած, այս դէպքում զարգացմանը միայն յաջող ձեռնարկութիւններ են անդիտակցողն առաջացած և հասունացած այն պահանջները, որոնք պիտի անհրաժեշտորեն հարապարակ գան, եթէ ուզում են բաւարարութիւն ստանալ: Միայն պիտի նկատուի, որ ինչպէս կեանքի տեսնական, նոյնպէս նաև քաղաքական, կրօնական, արդարային հարցը և այդպիսիները կարող են ծնունդ առնալ նոր զարգացմանը: Երբեմն այս տարրերից ոմանք կարող են գերակշռութիւն ստանալ, կրնան միւսները և իրենց ուրոյն դրոշմը դնել նորաստեղծ տեսութիւնների վրա: Դարաշրջաններ կան, երբ կեանքի տեսնական կողմէ է գերիշխում մշակութիւնը վրա, բայց եղել են նաև կրօնական, արդարային և այլ կողմերի տիրապետութեան ժամանակաշրջաններ: Նայելով ուրեմն ժամանակաշրջանի ուղուն, մշակութիւնը իր բոլոր ճիւղերով այս կամ այն դասակարգումն է ստանում: Այս պատճառով էլ սխալ են այն բոլոր պատմափիլիսոփայական փոքրերը, երբ զիտուրը միայն մի զարաշրջանում գերիշխող արդարակից նորարարական ազդեցիկով, անթոյլաբար ընդհանրացումներ է անում բոլոր զարաշրջանների վերաբերեալ: Միմիայն մարդկութեան բոլոր ժամանակաշրջանների և բարձրագոյնի զարգացմանը ըստ կարելոյն լիակատար և անկողմնակալ բուսումնասիրութիւնն ու համեմատութիւնը մեզ, հետո պահելով բանարարիկ և քմահաճ կերպով կատարեալ թանձակակերպ և ցուցադրելով պարզ կերպով համայն մարդկութեան բարձրագոյնը դա՛կ և բարձրագոյնը ճիշդ պատկերը, կը թոյլատրէ գոչել, ընդունել, բանական ու իրականութեան համապատասխան ընդհանրացումներ կատարել:

Մշակութի յարաբերութեան համար կարեւոր մտնեաներից են անշուշտ նաև նրա փոխանցման միջոցը: Հասկանալի է, որ պատմաբանականութեան միջոցով է, որ նոր սերնդին փոխանցում ենք միևնույն այժմ գոյութիւն ունեցած կուլտուրան: Ըստ ինքեան հասկանալի

է, որ մասադ սերունդը, եթէ սա կեանքին պիտանի անձինք պիտի արտադրէ, պիտի տողորէ հասարակութեան զարգացման ընթացքին համապատասխանող զարգացմանը: Հակառակ պարագային, այսինքն եթէ հասարակագիտութեան բնական զարգացման ընթացքին հակառակ զարգացմանը սնունդանք մեզ ենթակայ անոց սերունդը, ապա նա, իւրապատակ կերպով գոտարակուցելով, պարագային կեանքի մէջ իւրաքանչիւր քաջամտութեամբ հանդիպելով իր ուսմանին և իւրաքանչիւր բոլորովին հակառակ մտայնութեան օգտակարից կը խորտակի հանրային կեանքի անողջութեանը: Թեւազբանքների արդեցութեան տակ:

Կուլտուրաների թարմացման, վերանորոգման մեծապէս նպաստել է և այժմ էլ նպաստում է այլ կերպների կամ զարաշրջանների մշակութիւնը փոխառումը և իւրացումը: Պատմական ակնյայտ փաստ էր, թէ նոր-գարու շէմքին ինչ հակայական կարգաբերիչ, վերանորոգիչ նշանակութիւն ունեցաւ եւրոպական արդարի համար հին յունահունական կուլտուրան: Այս ինչպիսի կզած վիճաբանութեանց մէջ շմանելով, կարեւոր ենք համարում այստեղ միայն այնքանը շեշտել, որ երբ ժողովուրդները խոշոր տարբերութիւններ են ներկայացնում կենցաղի և մտածելակերպի տեսակէտից, գո՛ւր թէ եթէ ոչ անհնարին, իսկական փոխառութեան կամ իւրացման մասին խօսել: Արդեւորի մի ժողովուրդը միւսի քաղաքակրթական տարրերից գոնէ որոշ շարժով իւրացնել կարողանալ, պիտի զարգացման որոշ աստիճանի վրա դանել: Հակառակ պարագային կա կը լինի ընդօրինակում, որն անհրաժեշտ արմատներ շունենալով իրական կենցաղում, աւելի շուտ ձեռնարկ ընդթ կունենայ և ուշ թէ կանուխ կանհետանայ, առանց խորին հետքեր թողնելու ժողովուրդների կեանքի վրա: Աւելի խօսքով ասած, զարգացմանը իրական փոխանցման և այլ միջոցառում արդատարեր հանդէս դալու համար անհրաժեշտ է գոյութեան պայմանների որոշ բարձրութիւն: Հինց հասարակագիտութեան ընձեռնած օգուտներից մէկն էլ այն է, որ ուսումնասիրելով և համեմատելով տարբեր հասարակութեանց զարգացման տարբեր աստիճանները, նա մեզ մտաւոր կերպով ցուցադրում է զարգացման այն անհրաժեշտ ուղին, որով տեսալ ժողովուրդը պիտի գնայ, աւելի բարձրագոյն գոյութեան պայմանների հասնելու համար:

ԴՌԿՏ. Ա. ԳԱՊԱՐԵԱՆ

# Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Շ ՈՒ Ի Ջ

Մէկը միւսին հունէն, Թիւրքիա կնքեց երկու դաշնագրեր, առաջինը՝ Էնկիւրիի մէջ, Աֆղանիստանի հետ (1928 մայիս 26), երկրորդը՝ Հոտի մէջ, Իսպայիւի հետ (1928 մայիս 30):

Այնպէս որ, մինչ կարծողներ կային թէ Մ. Գեմալ կը լքէ իր արևելեան քաղաքականութիւնը, հակելու համար դէպի արևմուտք, ընդհակառակը նոր գոյն մը ստացաւ Թիւրքիոյ հին քաղաքականութիւնը, թուրանականութիւնը:

Աֆղանիստանի հետ կնքած համաձայնութիւնը ամենէն առաջ ապտակ մըն է խորհրդային իշխանութեան երեսին: Ուրիշ ապտակ մըն ալ՝ իտալեթիւրք գաշնագրեր: Թէև, խորհրդային գործընկերն ու հրապարակագրերնրը, իրենց սովորական ստիստութեամբ, պողմնը հարած մը նկատեցին իրենց ոտոխին, Անդլիոյ դէմ, իսկ երկրորդին համար գաղափարական իրատեսիլ տւին զինակից Թիւրքերոյ:

Պէտք է նկատել, որ մասնաւոր մտերմութիւն մը կը մատնէր Աֆղանիստանի թազաուորին ընդունելութիւնը Էնկիւրիի մէջ: Ամանուլլահ խան ամբողջ Եւրոպայի շրջանի ըրաւ, սիւնով Հոտիէն, և քանի մը անգամ Փարիզին Լոնտոն և Պէրլիի երթևեկեց: Չորս քաղցեանի պետութիւնները մեծարանքի և հրապարակաբար մեղքեր փորձեցին, իրենց նիւթական հարստութեան և վայելքներուն հետ ցուցադրելով նաև զինուորական, ծովային և օդային ուժերը: Նոյնիսկ հողացի թազաուորին և հետևորդներուն առօրեայ ծախքերը և հրապարակի պնդութիւնը:

Ասիացի փառիշահն ու իր թազուհին նոյն շոգոմարը ցոյցերով ընդունեցան նաև Մոսկուայի մէջ, ուր բանտոր-գիւղացիական գործավարներ ջանք շինակցին, և ն.՝ վեհապառուութեանց համոյք պատճառելու համար: Խնջոյք, բաժակաճառ, պտոյտներ մայրաքաղաքին կարևոր վայրերը, շքեղ զորահանդէս: Մէկ խօսքով՝ արքայազայել ընդունելութիւն, ապահար բանտորներու և զերգացիներու զլոտն վերև: Նոյն լորձնալուրթին փառաբանութիւնը և երկակենցաղ շոգոգորթութիւնը կարծիք Զիշերիններու, ինչպէս դեղին Ձեմպերլեններու կողմէ:

Եւ, սակայն, կը թւի թէ հասուն պտուղը քաղեց ջեմալական Թիւրքեան:

Արդարև, ինչ որ տեղի ունեցաւ Էնկիւրիի մէջ, թէև իր արտաքին շքեղութեամբ չի հասասարբեր միսներու, բայց ներքին բովանդակութեամբ կը զերազանցէ դանձոց: Էնկիւրիի մէջ, մայիս 20-ի հաւաքոյթին, պատասխանելով Մ. Գեմալի ճառին, որ կը պանծացանէր երկու «քոյր երկիրներուն» անկախութեան պայքարը, Ամանուլլահ թազաուորը հեռեեալ խօսքերն արտասանեց.

— «Մեր երկու ազգերուն միջև կապերը այնքան գորտաւոր են, որ մեր երկիրները կարելի է նմանցնել իրկու մարմններու, որոնք նոյն հագին և նոյն գգամուն ունին: Մեր երկու քոյր ազգերը նոյն նպատակ-

ներն ու նոյն պարտականութիւններն ունին: Աֆղանիստան պարտատ է կատարելու քոյր ազգի մը բաժին ինկած պարտականութիւնները»:

Իսթականներէն առաջ, անշուշտ պատրաստ էր դաշնագիրը, որ կնքած է, տարը տարան համար և կը ճշտէ քոյր-ազգերու փոխադարձ պարտականութիւնները:

Պաշնագիրը կը հաստատէ քաղաքական և տնտեսական գործակցութիւն, և մշտնջենական բարեկամութիւն: Կը բաղկանայ եօթ յօդածներէ, որոնց երրորդին համաձայն, կողմերը շին կրնար մասնակցել ո՛րև է քաղաքական, զինուորական կամ անտեսական զինակցութեան, կամ ո՛րև է թշնամական գործընդունութեան, որ ուղղած ըլլալ միւս կողմին դէմ: Տրք յօդածով, Թիւրքիա յանձն կառնէ Աֆղանիստանի արամադրութեան ասի զնէլ գիտական, իրաւագիտական և զինուորական մասնագէտներ:

Այս վերջին յօդածը, որ գործնական արժէք ունի, շարժանք խանգամաճ է Թիւրքերը: Շուտով կնկարէն դէպի Աֆղանիստան ճամբայ կկէլ զինուորական պատերազմութիւն մը, նախապահութեամբ սպասակոյտի դեր-նախազան ճեղգիմ փաշայի: Պատերազմութեան հինգ անգամներէն շորք զնդպեմունք են: Քեաղիմ փաշա պիտի դառնայ Աֆղանիստանի սպայա-կոյտին նախազան, և միևնոյն ատեն Ամանուլլահ թազաուորին զինուորական խորհրդակցի: Պատերազմութիւնը պիտի կազմակերպէ ամիզան բանակը, Թիւրք սպաներու յանձնելով պատերազմական նախադրութեան զանազան սիւղերը: Թիւրքիա պիտի ճարէ բոլոր անհրաժեշտ սպաները:

Միևնոյն ձևով պէտք է զրկել կրթական պատերազմութիւն մը, տարը մասնագէտներէ, որոնք պիտի ստանան բարձրագոյն վարժարաններու տեսչութիւնը: Պատերազմութեան նպագաւոր պիտի վարէ Աֆղանիստանի կրթական խորհրդակցի պաշտօնը: Վերջուպէս, Թիւրք ուղղութիւնը և ուսուցչութիւնը պիտի զրկեն վարժանքներու համար:

\*\*\*

Եւրոպական զանազան պետութիւններ թերևս խաշոր սպարաբաններ կամ խոսարժներ ստացան Ամանուլլահ թազաուորէն. բայց ունեցա՞ն այսպիսի փայլուն և շօքափելի յաջողութիւն: Ժամանակին կնկար և ձեմալ փաշաները յաջան այսպիսի ծրարները, բայց անաստակ ինկան կէս համար. իսկ Պոլսոյ քաղաքականութեան բարբարոս տեսուչը, Պէտաի պէյ, որ իր կաշին ազատելու համար Աֆղանիստան սպաստանած էր, այնտեղ ալ փչեց իր գարշաճգա շունը: Սակայն, ծրարներ փոխանցեցաւ մէկ վարժութենէն միւսը, իրեն հիմնական տարը մը Թիւրքերոյ արևելեան քաղաքականութեան, և ահա կը գործադրուի Մուստաֆա Բեմալի կողմէ:

\* \* \*

Այլապէս շահեկան է թիւրքերտալական դաշնագիրը, որ կնքուեցաւ Հինգ տարւան համար:

Պէտք է խոստովանուի, որ երկու կողմերն ալ սար ու ձոր ինկան, մինչև հոս յանգելու համար: Գեռ մէկ տարի առաջ, Մուսոլինի հօրը կը ժայթքէր, «պայթեալ» սպառնալիքներով, իսկ թիւրք մամուլը՝ հոտ առած՝ «թիւր մը հող չենք տար» կաղապակէր: Անոնք, որ 1915-ին, զարմացան երբ «երախտագէտ» Պուլկարեան ցարին դէմ ելաւ զինակցելով ջարդարար թիւրքերոյ հետ, նոյնքան կը զարմանան, այսօր, տեսնելով յանկարծ համաձայնած՝ որսորդն ու որսը:

Իսոյց չէ՞ որ հակասութեանց և անհնկանքներու հանգոյց մըն է քաղաքական կեանքը...

Մայիս 30-ի դաշնագրով, Իտալիա և Թիւրքիա 1. յանձն կառնեն շմռնել ո՛րևէ է քաղաքական կամ տնտեսական համաձայնութեան մէջ, որ ուղղած է կողմերէն մէկուն դէմ. — 2. Եթէ երկու կողմերէն մէկը յարձակման ենթարկուի մէկ կամ աւելի պետութեանց կողմէ, միւսը չնգոք պիտի մնայ կուի ամբողջ տևողութեան ընթացքին. — 3. Երկու կողմերը յանձն կառնեն հաշտարար եղանակով լուծել ըստը վէճերը, իսկ չլսողներու պարագային դիմել դատական կարգադրութեան, որուն մանրամասնութիւնները պիտի ճշտուին յաւելածով մը: — 4. Դաշնագրին մեկնութեան կամ դարձարութեան առթիւ ծագելիք վէճերը պիտի ենթարկուին լա շէի ստեանին: — 5. Եթէ պայմանագրի վերջնական վեց ամիս առաջ լուր չտրուի, դաշնագիրը ի գործու պիտի ըլլայ Հինգ տարւան համար ևս:

Այս համաձայնագիրը դունանակութեամբ արձանագրուեցաւ մամուլին կողմէ, որ պետական թիւրքի տակ է երկու երկիրներուն մէջ ալ: Հասկնալի է թիւրքերուն ցնծութիւնը, քանի որ յողովեցան, գոնէ Հինգ-տասը տարւան համար, հետացնել արշաւանքի մը աղէտը: Իսկ Հոսով մէջ կը նափահարեն համաձայնութիւնը, որովհետեւ այնպէս կողջէ Մուսոլինին: «Մէյսանէթ» հարկ դատեց գրել, թէ պատերազմէն ի վեր, Իտալիոյ կնքած ամենէն կարևոր դաշնագիրն է այս, քանի որ, «ոչ միայն կը փարատէ Միջերկրականի աւազանին մէջ տիրող չլիթ կացութիւնը, այլ և Հոսով և Էնկիլթիի քաղաքական և տնտեսական յարաբերութիւնները կը դնէ փախալարձար շահաւոր դեռնի մը վրա»:

Անշուշտ, հասարակ ընթերցողը բան չի հասկնար ոչ դաշնագրին տրամադրութիւններէն, ոչ ալ այս դիւանագիտական բացատրութիւններէն: Արհեստով քաղաքագէտներու համար ալ ամէն բան պարզ չէ սակաւին:

Ինչ շօշափելի առաւելութիւններ ստացաւ Փաշիստ Իտալիան, Թիւրքերոյ թափուր հողերէն հրաժարելու համար:

Լրագրական լուրի մը համաձայն, որ չհերքուեցաւ, Իտալիա նախապատուութեան իրաւունք պիտի ունենայ Պոլսոյ, Իզմիրի, Ատալիոյ, Սինոպի և Տրապիզոնի հանրօգուտ շինութեանց մէջ, իտալական դրամազուլիս պիտի գործածուի երկաթուղիներու շինութեան և հանգրուան շահագործման համար: Իսկ ամենէն կարևորը, իտալացի բանաւորներ Անատոլու հաստատուելու իրաւունք

պիտի ունենան, պայմանաւ որ իւրաքանչիւր նահանգի մէջ Հինգ հազարէն աւելի ըլլան:

Եթէ բոլորովին ճիշտ ալ չեն այս տեղեկութիւնները, ամէն պարագայի մէջ խելքի մօտ են: Մնաց որ, ամէն կողմէ կը շնչուի Իտալիոյ խաղաղ թափանցումը Արևելքի մէջ, նաւագնացութեան, առևտուրի և մշակութի սասարկչին մէջ, և մասնաւորապէս Փրանսան այժմ լուրջ մրցակից մը ունի իր առջև: «Քան»-ի Պոլսոյ թրքատէր թղթակցը, որ իբրև կարևոր ոյժ փոխադրուեցաւ Հոսով, իր առաջին թղթակցութեան մէջ կը մատնանչէ այս պարագան: Քանի մը հատուածներ միայն.

— «Արդէն Աւ ծովու մէջ իտալական դրոշակը առաջին տեղը կը գրաւէ: Թրքական շուրթերու մէջ և մինչև նեղուցները իտալական աներու տարողութիւնը տարիներէ ի վեր առաջին անգամ ըլլալով կը գլէ կանցնի անգլիականը... Քանի մը տարիէ ի վեր, իտալիան գոյլոյն անցած է Մերձատր Արևելքի առևտրական շարժումին:

«... Իտալիա կը յուսայ Մերձատր Արևելքի մէջ խիստ նպատաւոր դաշտ մը գտնել, իր անևտրական և նարտաարւեստական ծաւալումին... Աժուլ, երկաթ, մանկանէզ, պղինձ, արծաթախառն կապար, քարիւղ, որոնցմէ գոյլ է իտալական թերակղզին, առատօրէն կը գտնուին Թիւրքիոյ և Աւ ծովու աւազանին մէջ»:

Նոյնը՝ կրօնական, կրթական և առհասարակ մշակութի սասարկչին մէջ.

— «Քանի մը տարիէ ի վեր, Իտալիան յամր այլ հետևողական գործունէութեամբ կը ջանայ դառնալ հռոմէական եկեղեցիին պաշտպանը և լատինականութեան այնպէս Մերձատր Արևելքի մէջ:

«... Եղմեմ գզալի է Իտալիոյ մտաւոր ազդեցութիւնը Մերձատր Արևելքի մէջ: Մեր (Քրանսական) մշակոյթին եզակի դիրքը աշխարհի այս մասին մէջ՝ այլ ևս այն չէ ինչ որ էր առաջ... Իտալիա սկսած է մտաւորական ծաւալման շարժում մը ստեղծել Միջերկրականեան Արևելքի մէջ: Եգիպտոսի, Փաղեստինի, Սուրիոյ, Թիւրքիոյ, Յունաստանի և Պուլկարիոյ մէջ իտալական աշխարհիկ և կրօնական դպրոցները արագ ծաւալում ստացած են պատերազմէն ի վեր: Բայց առանձնապէս Հնդոսի մէջ է, որ այժի կը գարնել մշակոյթի ծաւալման այս ճիղը: Իր քանգարանով, իր հնագիտական կամուրջով, իր մայր-եկեղեցիով, հիւանդանոցներով, դպրոցներով և յառաջիկայ համալսարանով: Ապստոներու նախկին կղզին հետզհետէ կը դառնայ իտալական մշակոյթի, լոյսի վառարան մը Մերձատր Արևելքի համար»:

Այս տողերուն տակ ծածկուած է տեսակ մը դառնութիւն: Եւ Թան միակը չէ իր տեսակին մէջ: Դաշնագրին կնքումէն ի վեր, Փրանսան աւելի կը դուրս գործայ Մուրիոյ վրա, իսկ Թուրքերը իրենց կարգին տրտնջալու պատրասկներ կը գտնեն Փարիզի դէմ... Բայց դաշնագրէն դժգոհ մնաց առանձնապէս խորհրդային իշխանութիւնը:

Առէք ո՛րևէ է կարմիր թերթ, և տողերու մէջէն պիտի կարդաք ամբողջ սրտմտութիւնը: Հետևելով Մոսկուայի «Փրաւտա»-ին և «Իդեվստրա»-ին թիֆլիսի հայտատու «Պրոլետար»-ը, ինչպէս Փարիզի Փրանսե-



րէն «Իմանիթէ»-ն պարտք համարեցին զուշացնել բարեկամ և զինակից թիւրքերան: «Թիւրք կոտորածը-րու թիւնը խիստ մօտիկ ապագայի մը մէջ դառնօրէն պիտի զզջայ զԻրացուցած ըլլալուն համար իր հողին վրա տեղադրուած պետութեան մը, որ դեռ շատ չընէր իր կալտարարէր թէ ծրագրած է ընտնել թիւրքեան»: (Իմանիթէ): «Լաւ գիտնալով որ երբ-տասարդ թիւրքիոյ քաղաքականութիւնը այնքան ալ միամիտ և տկար չէ, և որհրդային Միութիւնը այնու-ամենայնիւ կը յայտնէ իր կասկածները, քանի որ թիւրքիոյ հետ բանակցող պետութիւնները դէպի Խ.Ս.Հ.Մ. տրամադրուած են բացասաբար, և յարձա-կողական քաղաքականութիւն կը վարեն անոր դէմ»: (Պրոլետար):

Այս արտայայտութիւններէն են թաղողներ եղան, թէ թիւրքեան կը հետանայ Ռուսիայէն, կամ Արևել-քէն, կապելու համար Արևմուտքի հետ: Իայց տա-կաւին կանուխ է այդպիսի եղրակացութեանց յանգելու համար: Էնկիթրի առ այժմ յենարաններ կը փնտռէ ամէն կողմ, վախ չունենալով խորհրդային իշխանու-թենէն, որուն տաքուկ ծոցին մէջ հասակ կետեց, և որ ներկայիս աւելի շատ պէտք ունի իր բարեացակամ շեղբութեան, եթէ ոչ զինակցութեան:

\* \* \*

Էնկիթրի վերջին խարախ միջոցները կը փորձէ, քիւրտ փախտականները և ապստամբները հրապուրե-լու համար:

Արևելեան նահանգներու մարզպանը հրատարակեց նոր ազդարարութիւն մը, մինչև օգոստոս 15-երկարա-ձգելով ընդհանուր ներման պայմանաժամը: Իմաս-տը, — եկէք անձնատուր եղէք: «Հոգի այրելէն, տուն քանդելէն բան դուրս չի գար: Ազատելով շահա-խնդիրներու ձեռքէն, աշխատեցէք հարստանալ, տու-նի-տեղի, լծկանի տէր դառնալ և ձեր օջախները շէնցնել»:

Անշուշտ, միամիտներ և դասալիքներ, մանաւանդ շէյխեր և ցեղապետներ չեն պակսիր, այս հայրական խրատներէն խաբուելու և իրենց ողջ գլուխը նորէն վտանգի ենթարկելու համար: Դեռ շատ պող ու տաք պիտի անցնի քիւրտ վարիչներու գլխէն, մինչև որ ըմբռնեն թիւրք իշխանաւորներու բոլոր դիւային խողերը: Երէկ անդորմ և անբարտաւան, արեան բաղնիքներ կը սարքէին անոնք, և կախաղաններ-այսօր՝ քրիստոնէական խրատներ կուտան, կը յոր-զորեն ու կը հրապուրեն: Թերևս այնքան իրար անցած

չէին երէկ, չէի Սայիդի տարերային շարժումէն, որքան այսօր, երբ յեղափոխական կորիյներ կերևան անմատչելի բարձունքներու վրա, Տէրսիմէն մինչև Արարատ, Սասուն և այլուր: Քիւրտ ժողովուրդի փրկութեան միջոցներ ալ մեծապէս կախում ունեն այս կորիյներու դարգացումէն ու զօրացումէն, ինչպէս ընդունած է իրենց քաղաքական առաջին կազմակեր-պութիւնը, Հօյրուներ:

Կը մնայ տեսնել թէ որքան հաւատարմութեամբ պիտի գործեն, դիմանալով թրքական թակարդներուն: Ուշագրաւ է, որ գործավարներ և ուրիշ բարձր պաշտօններ իրարու ետեւ պտոյտներ կը կատարեն քրտական շրջաններուն մէջ, զանազան «բարենորո-գումներ» կատարելու համար: Կարեւոր ձեռնարկներէն կարժէ յիշել կրթականը, որ կը ձգտի թրքացնել քիւրտ նոր սերունդը: Կառավարական գործակալներ վերջերս հարկադրեւ են մաղցիլ մինչև Արարատ, հնազան-դութեան հրաւիրելու համար ապստամբութեան վա-րիչները: Այս վերջիններէն մէկը, որ դասալիք ըլլալու կը պատրաստէր, ահաբեկեւ է անմիջապէս: Ուրիշ-ներ ալ մահաւան դատապարտուած են: Իսկ թրքական ջոկատ մը յարձակում փորձած ատեն, յանկարծակիի եկած և կրտսնցուցած է իր ռազմածիւրերն ու պարէնը:

Հակառակ բոլոր հաւաստիացումներուն, խուժա-յոյգ վիճակ մը կը ներկայացնեն Պայաղիտի, Վանի, Մուշի, Բաղէշի և Տիգրանակերտի շատ մը շրջանները: Խրտումներ կը նշմարեն նաև թիւրքերու մէջ:

Միևս կողմէ, խորհրդային գործակալներն ալ սկսած են արտակարգ հետաքրքրութիւն մը ցուցնել թրքական շարժման հանդէպ, որուն ջանջախումբ կաւետէին դեռ մէկ տարի առաջ:

\* \* \*

Վերջին նորութիւնները, — թիւրք թերթերը ար-դէն սկսած են գործադրել էւրոպական թւանշանները, որոնք տարօրինակ տեսարան մը կը պարզեն, արարա-կան տառերու հետ խառն, և սովորականէն խոշոր՝ յարմարելու համար թիւրքերէն շարուածքին: 1929 յունիսէն, նոյն թւանշանները պարտաւորիչ պիտի ըլ-լան պետական պաշտօնատուներուն համար:

Սեղանի վրա կան ծրագրիներ՝ ուրբաթի արձա-կուրդի կիրակի օրւան փոխելու, արարական ազօրք-ները՝ թիւրքերէնի, մզկիթներու մէջ աթոռ և նստա-րան դնելու, ջնջելով կօշիկները հանելու սովորութիւ-նը. նաև՝ երաժշտութիւն հաստատելու և այլն:

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ա Ն Կ Ա Խ Ո Ւ Թ Ե Ա Ն Տ Ա Ս Ն Ա Ս Ե Ա Կ Ի Տ Օ Ն Ա Կ Ա Տ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Հայաստանի անկախութեան տասնեւորդ տարեդարձը արժանապաշտելու շուրջ ու հանդիսաւորութեամբ տօնակցութեամբ բոլոր գաղութներուն մէջ: Գրեթէ ամէն տեղ հանդէսներու նախաձեռնութիւնը սասնանքին Հ. Յ. Գ. մարմինները, իսկ ժողովրդական լայն զանգուածներ, իրենց անվերապահ ու խանդավառ մասնակցութիւնը բերին անոնց: Այս տարւան «Մայիս 28»-ը փորձաքար մը եղաւ, աւելորդ անդամ մըն ալ ապացուցանելով, որ տարագիր հայութեան ջախջախիչ մեծամասնութիւնը տարտղնած ու հայրենաբազմ գաղթականութիւնը կապած է միացեալ անկախ Հայաստանի գաղափարին, որուն յառաջապահը կը հանդիսանայ Հ. Յ. Գ. Ինչնակցութիւնը:

Ո՛չ մէկ գաղութ անմասն մնաց տասնամեակի հանդիսութիւններէն: Նոյնիսկ հեռուոր անկիւններու մէջ, կամ հոն, ուր տասնեակ մը հայեր խմբած են քորձարանի մը շուրջ, անկախութեան հանդէսը տօնակցութեամբ խանդավառութեամբ: Ամէն տեղ հայկական եռագոյնը ծածանցեալ՝ սթափեցնելով թմբած հողինները և ոգևորելով նկուն սիրտերը: Ամէն տեղ երիտասարդութիւնը կրկնեց իր ներկան ուխտը՝ յաւէտ հաստարիմ մնալու սրբազան եռագոյնին, որ բոլոր գիտակից հայերուն համար կը մնայ անմահ խորհրդանշանը ազատ, անկախ և միացեալ հայրենիքի:

Փորձեցր տալ հակիրճ պատկերը զանազան երկիրներու մէջ տեղի ունեցած տօնակատարութեանց, սկսելով Ֆրանսայէն. —

### ՖՐԱՆՍԱ

Փարիզ. — Հանդէսներու ամենէն փառաշուքն ու տպաւորիչը տեղի ունեցաւ Փարիզի մէջ, նախաձեռնութեամբ Հ. Հ. Պատրիարկութեան և Հ. Յ. Գ. Ինչնակցութեան Երջանային Կոմիտէի: «Քրիթ Ժուրնալ»-ի ընդարձակ սրահը շատ նեղ կուգար անհամար բազմութեան, — մեծ մասով երիտասարդներ — որ ժամանակէն շատ առաջ գրաւած էր աթոռները: Սրտաբեկ ետ դարձան հարեւաւորները, որոնք ոտք դնելիք տեղ չէին կրցած գտնել: Մեծ գժարութեամբ կարելի կըլլար տեղ ճարել նոյնիսկ օտար հիւրերուն, որոնք մէջ յիշենք՝ Փրանսացի ծերակուտակները պ. պ. Ժիւսթէն Կոտարն ու Վիկտոր Պէլաւըր, նախկին նախարար Թիպոն, Փարիզի ոստիկանական տեսչութեան օտարականներու դիւանի պետ Փիլքար, Մարզու և Բարդաւայի Իրաւունքի Պաշտպան Լիզայէն Հէրար, Փրանսացի գնդապետ Շելվալէ, Անգլիոյ վարչապետի որդին՝ ընկ. Օլիվըր Պոլտակցը, Զիւլիգիւրի Հայասիրական Միջազգային Ընկերակցութեան նախագահ Գրաֆֆ-Պոնար, Ժուռնալ դը Ժընէի թղթակից Ժան Մարթէն, ռուս նախկին դեսպաններ՝ Մաքլաթով, դը Կիրս և Նելիտով, Անդրէ Մանուելլիս, Զիլիսով, Մարիուլիէֆ (Դուսայի անդամ), վրացիներէն՝ Ժորտանիա, Ռամիշվիլի, Կապարիձէ, Արքէշանի կողմէ՝ Թոփեճիպաշև, Բէտուլ

Զատէ, Մէմէտ էմին պէյ, Շէլիսիւ Իսլամով, Դաղըստանի կողմէ՝ Սանքերթով, Ուկրայինայի կողմէ՝ Գոր. Շափովայ և Գոր. Եուզենիչ: Ներկայ էին նաև բազմաթիւ ուրիշ օտար և հայ հրաւիրեալներ, ու հայ աշխատակրներու անհամար բազմութիւն մը:

Յիսուհ Հոգիոց դիմորական նազախուժը փայլ կուտար հանդիսին: Դնջման խօսքը արտասանեց ընկ. Ա. Ահարոնեան, նախ Փրանսերէն, ապա հայերէն:

Ընկերը ողջունեց մեր օտար բարեկամները և ներկայ հազարաւոր հայրենակիցները: «Ասիկա փաստ մըն է, որ պէտք է մտածել տայ մեր հայրենիքի դաւաճող կամքով կը հետապնդէ և պիտի շարունակէ հետապնդել իր ազգային բաղձանքներուն իրականացումը: Այս ցոյցը պարզ ազգային տօն է մը աւելի բան է. հայ ազգին խելոցն է, որ ամէն տարի այս յիշատակելի թահկանին, իբրև կենդանի բողոք կը ցցուի քաղաքակիրթ աշխարհին առջև, ջանալով արթնացնել անոր խելոցը»:

Ընկ. Շ. Մխաբեան պարզեց ազատութեան և հայրենիքի գաղափարին արշաւը սերունդէ սերունդ, և սարերու կատարէն մինչև ջաղաքները, Պոլսոյ փողոցներէն մինչև Փարիզի Պողոտաները:

Յետոյ խօսեցան օտար հիւրերը՝ Փրանսացի ծերակուտական Ժիւսթէն Կոտար, Զիւլիգիւրի Հայասիրական Միջազգային Լիզայի նախագահ Գրաֆֆ-Պոնար և Անգլիոյ վարչապետին որդին՝ ընկեր Օլիվըր Մ. Պոլտակցին:

Փրանսացի ծերակուտականը բռնէ յետոյ թէ հայկական դատը ո՛րքան արդար է, հատուածներ կարգացայ այն խոստումներէն, զորս պատերազմի ընթացքին Փրանսացի պետական մարտիկը ըրած էին հայ ժողովուրդի անկախութեան համար: «Այս խօսքերը չեն ուրացած, չեն տոց, մեծ է թիւր մեր մէջ անոնց, որոնք չեն մոռցած այս խոստումները: Սիրտեր կան, որ կը բարբախեն ձեր կողքին. ձայներ կան՝ որ պիտի արժարծեն ձեր պահանջները, որպէսզի ազատագրուի ձեր հայրենիքը»:

Պ. Գրաֆֆ Պոնար ևս գեղեցիկ խօսքերով պատուպանեց հայկական դատը. — «Քաղաքական խնդիր չէ, որ կարծարծենք. կա՛յ ազգ մը, որ կապրէ և կուզէ ապրել, ազգ մը, որ գոհը եղած է թիւրքերու բարբարոսութեան և ներապայտի ու Նահանգներու վատութեան: Հայ ժողովուրդը կուզէ ունենալ ազատ հայրենիք և դրօշ, ինչպէս ամէն ազգ: Մեծ պետութիւններէն ողորմութիւն չէ որ կը հայցենք, թո՛ղ անոնք իրենց պարտականութիւնը կատարէին հանդէպ վերաւորած ազգի մը»:

Ընկեր Օլիվըր Պոլտակցի ներկաները ողջունեց հայերէն լեզուով՝ բարև ձեզ, հազար բարի, ու խօսեցաւ Փրանսերէն: Յիշեց Հայաստանի բանակին մէջ իր ծառայութիւնը, ու պատմեց զանի մը յիշատակներ:

Յետոյ, յայտարարեց. — Ձերե՛ք մի վստահէք մեծ պետութեանց խօսքերուն և խոստումներուն: Անզկիս բացարձակապէս մոռցաւ Հայաստանը: Վստահեցէ՛ք միայն ձեր ուժին: ձեր դաւաճողուն և ձեր թոռնեւորուն վրա: Անո՛նք է միայն, որ եռագոյն դրօշակը դարձեալ պիտի տնկեն Արարատի վրա»:

Տասնամեակին առթիւ բազմաթիւ շնորհաւորական նամակներ և հեռագրներ հասած էին: Օտար ղէմբերէն յիշենք Ֆրանսական նախարարներէն Փէնլլովէ, Ժորժ Լէկ, Անտրէ Թարսիէօ, Լուի Մարէն, Փարիզի գիււարական կառավարիչ զոր. Կուրօ, Պեժիոյ Մերակոյտի փոխ-նախագահ Հ. Լաֆոնթէն, Ֆրանսացի ընկերվարական Փիէռ Ռընոտէ (Էրևսիոյան), Ժան Լոնկէ, Ռուսիոյ նախկին Առժամայ Կառավարութեան նախագահ Ա. Կերենսկի, էս-իբ կուսակցութեան Ն. Ավիլենտիս, գերմանուհի Կեթերուզ Հէդցէլ, գերմաններ՝ Ռիխարդ Եէֆըր, Տոթթ. Երայլէն ևն:

Պորապէս յուզիչ էր ուղերձը, զոր Լոժի (Լեհաստան) մեր հայրենակիցները գրեած էին Հ. Հ. Պատերազմութեան: Կիտովին օտարացած մեր այդ հայրենակիցները շանյողողղ Հաւատք ունին, թէ մեր սիրելի հայրենիքը, վերածնւած երկար դերութենէ մը վերջ ու կրկին օտար լուծի տակ ինկած, դարձեալ ազատ և բարգաւաճ պիտի դառնայ: Հաստատօրէն Համոզած են թէ բոլլեկիմ մեր օջախները մթազնող արհնատ մտախոտը պիտի փարատի և թէ կրկին պիտի տեսնենք մեր ազգային դրօշակի հպարտօրէն ծածանելը հայրենիքի պատասպարած Հողին վրա»:

Միևնոյն ատեն տասնամեակը տօնեցաւ Փարիզի արուարձաններէն Պուա-Քոլումպի, Անուվիլ-է-Կոնէսի, Ալֆրովիլի և Սարսելի մէջ, ուր խօսեցան մեր երիտասարդ ընկերները:

Մարսիլիս

Տասնամեակը տօնեցաւ մեծ հանդիսաւորութեամբ մայիս 27-ին, կիրակի: Ներկայ էին 2500 հայրդիրներ, Կարօր Փարբի ընդարձակ սրահին մէջ. շատերը ուրի մնացին: Պոսեցան ընկերներ Կարօ Սասունի և Պոզոս Հիւսեան: Գեղարեստական բաժնին կը մասնակցէր Չափահաս Որբերու Միութեան նախարարը: Նոյնպէս Կարդան, Հ. Յ. Դ. Տան մէջ:

Լըփիւիի Համեստ գաղութն ալ տօնեց տասնամեակը ճիշտ Մայիս 28-ին:

Փոն ԹՊպնայի մէջ անկախութեան տասնամեակը տօնեցաւ մայիս 27-ին կիրակի օր, խանդավառութեամբ: Պոսեցաւ ընկեր Աշոտ:

Քոնպի (Ալէյրոն) մէջ ալ տօնեցաւ մայիս 27-ի կէսօրէն վերջ: Ներկայ էր ամբողջ գաղութը: Այս առթիւ քանի մը ընկերներ աւելցան Հ. Յ. Դ. տեղական կազմին վրա:

Պորտօ. — Տօնեցաւ մայիս 27-ին, նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. տեղական մարմինն: Պոսեցան ընկերներ Մ. Պապրիկ և Ա. Քէնտէրեան:

Պոլէմի մէջ տօնեցաւ մայիս 27-ին: Փոն Սէնթ Էսպիրէն ալ փութեցան էին բազմաթիւ հայրենակիցներ: խօսեցան ընկ. Հայի Մարզեան: Չորս նոր ընկերներ աւելցան շարքերուն վրա:

Փրիվայի մէջ տօնեցաւ մայիս 27-ին, մեծ խանդավառութեամբ: Ներկայ էին 200 հայրենակիցներ: Պոսեցաւ ընկ. Աշոտ:

Սէնթ Էթիէնի մէջ տօնեցաւ 28 Մայիս երկուշաբթի օր: Պոսեցաւ ընկ. Մկրտիչ Երիցանց: Վեց երիտասարդներ, անդամ արձանագրեցան տեղական կազմին:

Նիսի մէջ տօնեցաւ մայիս 27-ին: Հանդէսին եկած էին նաև Փոսէլի, Քանի և Կրասի հայրենակիցներ: Պոսեցաւ ընկ. Մ. Գուլումահան:

Վալանի մէջ տօնեցաւ 26 մայիս, շաբաթ գիշեր, Հոծ բազմութեան ներկայութեամբ: Պոսեցան ընկերներ Կարօ Սասունի և Հայի Մարզեան:

Փոն տը Եէրիի մէջ՝ մայիս 28-ին, Պոսեցաւ ընկ. Երանդ Ճանկեօղեան:

Տէրիմի մէջ տօնեցաւ մայիս 28-ին, մեծ բազմութեան ներկայութեան: Պոսեցաւ ընկեր Ազգին Մարտիրոսան:

Լիոնի մէջ տօնեցաւ յունիս 2-ին շաբաթ գիշեր, Չ. Թաղապետարանին սրահին մէջ, մեծ հանդիսաւորութեամբ: Հարիւրաւոր ժողովուրդ էս դարձաւ՝ տեղ չպտեղով: Պոսեցան ընկ. Թաղէոս Մեծատուրեան և Ալ. Պատիսեան:

Վիէնի մէջ տօնեցաւ մայիս 27-ի կէսօրէն վերջ, Հ. Յ. Դ. Երջ. կոմիտէի նախաձեռնութեամբ և մասնակցութեամբ Չ. Ե. Ո. Միութեան, Ղ. Մ. Ը. Մ. Ի., Հ. Կ. Ուայի և Կէմէրէշի Հայրեն. Միութեան: Պունն բազմութիւն լեցած էր քաղաքապետարանի սրահը: Պոսեցաւ ընկ. Թ. Մեծատուրեան:

Պելիփորի և Վլէրիփուրի մէջ տօնեցաւ 27 և 28 մայիսին: Այս երկու քաղաքներուն մէջ ալ օրւան տօնին մասին խօսեցաւ ընկեր Յար. Պունուպեան:

Կլընոպլի մէջ տօնեցաւ յունիս 3-ին՝ նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Կրճուպի և Լանէշի երթակմորտներուն: Պոսեցաւ ընկ. Թ. Մեծատուրեան:

Յրանայի բաժնից ատալ, ըսնք թէ տօնակատարութիւններ տեղի ունեցան նաև Փիւմլի, Քասթիլ-Սարազնի և Տէքազիլի մէջ, ուր խօսեցաւ ընկ. Մ. Պապրիկ, Սէն-Շամսնի մէջ, ուր խօսեցաւ ընկ. Մ. Երիցանց, Փուզէնի մէջ, ուր խօսեցաւ ընկ. Հ. Մարզեան:

ՊԵՆՆՆԻՍՍ

Պրիւսի շքեղ սրահներէն Salle Marchal-ի մէջ տօնեցաւ տասնամեակը՝ մայիս 26-ին շաբաթ գիշեր, նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Պելճիքայի մարմինն: Ընկ. Դ. Դաւիթխանեանը բանալով հանդէսը՝ բեմ ճաւիթեց օրւան բանասուր՝ ընկ. Ալ. Պատիսեան, որ երկար ճառով մը պարզեց թէ Հայ ժողովուրդը այսօր սիրացած է այնպիսի թանկագին զանձերու, որոնց մասին տասը տարի առաջ ամենին լաւատես պոլիտիկոս Հայն անգամ չէր համարձակիլ երազիլ: Անկախութենէն առաջ կեանքի, ինչքի և պատուոյ պաշտպանութեան համար եւրոպացիներու դուռները կը բարկէին, խնդրազր մը մեր ձեռքը, իսկ այսօր դարձած ենք պետական ժողովուրդ և հայկական դատը նկատի կառնեն իբր պետականութեան տէր ազգի մը դատը: Ընկ. Պատիսեան յետոյ խօսեցան Ֆրանսերէն ու կարգաց Ա. Ահարոնեանի մէկ յօշուածին թարգմանութիւն:

նը՝ «Պեղծիքա և ծերակուտական տը Պրուքեր» խորագրով: Տը Պրուքեր ծափերու մէջ բեմ բարձրանալով, խօսեցաւ հէս ժամ: —

— Տիրող պայմաններուն մէջ, ըսաւ, չեմ ուզեր մեծ յոյսեր տալ ձեզ: Չեմ ալ կրնար բռնել, որ պէտք է յուսահատիլ: Արդեւրու Դանիակցութեան մէջ պիտի աշխատեմ որ Եւրոպայի գանազան երկիրները ցրած հայերը պետականագործի չնկատուիք և գոնէ ճշտի՛ք ձեր իջաւակներն հանգամանք: Հայակահան դատին համար աշխատելը անխուսափելի պարտք մըն է և ո՛չ թէ շնորհ մը: Դուք իրաւունք ունիք ապրելու և պիտի ապրիք:

Յետոյ կարդացեցաւ ծերակուտական Լաֆոնթէնի համակրական նամակը:

ԳԵՐՄԱՆԻԱ

Պերլինի մէջ Հ. Հ. անկախութեան տարեդարձը տօնեցաւ յունիս 2-ին շաբաթ երեկոյ, Շարլոթենպուրիի «Հոհնցուրլըն»-ի ընդարձակ մէկ սրահին մէջ, նախաձեռնութեամբ Գաղթային Միութեան: Բացի Պերլինի հայ գաղութէն, ներկայ էին գերման ու կովկասցի հիւրեր — վրացիներ և ազրբէյնացիներ: Հայրենակիցներ եկած էին նաև Լայպցիգէն: Վրացիներն ներկայ էին՝ Պերլինի նախկին դեսպան Ախմեթելի, Լոնտոնի նախկին դեսպան Դ. Կամպաչիձէ, Տրապարակազի-գործիչ Դիասամիձէ. ազրբէյնացիներէն՝ «Միջնործնութեան Կոմիտէ»-ի նախագահը՝ ձեյալ Միւնչիէ, վարչութեան անդամ՝ Սայիա էֆէնտի, գերմաններն ներկայ էին՝ Տոքթ. Շրայպեր, Ռիխարտ Շէֆէր, Օր. Արտէլ, Ֆարլէյց ընկերվարական թէրթի աշխատակից Օր. Շուլց, հայաբան փրոֆ. Մարգարազ, մեր հայրենակիցներէն՝ փրոֆ. Տոտտեանց և տոքթ. Գրինֆելդ:

Նախագահ տոքթ. Ա. Արեղեան բանալով հանդէսը, նախ հայերէն և ապա գերմաներէն համասօտ ճառով մը պարզեց օրւան նշանակութիւնը հայ ժողովուրդին հայ երկրին համար: Յետոյ ողջունեց օտար հիւրերը՝ գերմաններն ու կովկասցիները՝ պարզելով այս վերջիններու քաղաքական համերաշխութեան անհրաժեշտութիւնը: Հ. Հ. Պերլինի նախորդ դեսպան տոքթ. ձէյմիս Գրինֆելդ, գերմաներէն քանխօսութիւնով մը պարզեց Հ. Հանրապետութեան ծագումը և պատմական այն բոլոր փուլերը, որոնք Հայաստանն ու հայ ժողովուրդը բերին հասցուցին Մայիս 28-ի գաղափարին:

Տոքթ. Շրայպեր, իրրև հին հայասեր և գործակից հանգուցեալ տոքթ. Լեփսիւսի՝ համասօտ ակնարկ մը նետեց գերման որչ շրմանակներու 30 տարւան աշխատանքին մասին՝ թիթեցնելու համար հայ ժողովուրդի տառապանքները: Նոյն իմաստով խօսեցաւ նաև Ռիխարդ Շէֆէր, յանուն հանգուցեալ տոքթ. Լեփսիւսի հիմնած Արեւելի Առաքելութեան և Հայ և Գերման ընկերութեան:

Վրացիներուն կողմէ խօսեցաւ Ախմեթելի՝ շնորհաւորելով հայ ժողովուրդը անկախութեան տօնին առթիւ՝ ան չեչոտեց քաղաքական անկախութեան անհրաժեշտութիւնը ամբողջ Կովկասի համար: Խօսեցաւ նաև Դ. Կամպաչիձէ՝ պատմելով իր տպագորութիւնները Հայաստանէն, ուր այցելած էր 1920-ին:

Աղբրէյնացիներու ներկայացուցիչ Ձեյալ Միւնչիցաւ յայտնեց, որ հայերու և ազրբէյնացիներու միջև ստանութիւն եղած է միշտ, և անհրաժեշտութիւն գտաւ Կովկասի ժողովուրդներու համերաշխ գործակցութիւնը, որ, սակայն, կատարեալ չէ կրնար ըլլալ ստանց հայերու, որոնք ամենէն խելօքն են այդ ժողովուրդներուն մէջ:

Յայտնի ընկերվարական տեսարան էդուարդ Պէրլինի ընկերվարական ֆարվէրց և դեմոկրատ ֆալցսայթունկ թերթերը, ինչպէս նաև գաւառի շաբթ մը լրագիրները հրատարակեցան իրենց աշխատակից ընկ. Ա. Արեղեանի յօդածները:

Անկախութեան տանամեակին առթիւ Պերլինի ընկերվարական ֆարվէրց և դեմոկրատ ֆալցսայթունկ թերթերը, ինչպէս նաև գաւառի շաբթ մը լրագիրները հրատարակեցան իրենց աշխատակից ընկ. Ա. Արեղեանի յօդածները:

ՁԵՆՈՍԱԻԱԿԻՍ

Փրակայի «Օպցնի Դուս» չէնքին շքեղ մէկ սրահին մէջ Մայիս 28-ին տօնեցաւ անկախութեան տանամեակը, նախաձեռնութեամբ Հ. Յ. Դանիակցութեան և անկուսակցական Ուսանողական Միութեանց և Փրակայի փոքրաթիւ հայ գաղութին: Այս վերջինին կողմէն երկու խօսք արտասանեց Մր. Քօչեան: Հանդէսին նախագահն էր Վիկտոր Չերնով, Ռուսոյ Սահմանադիր ժողովի նախագահ և ուսուցիչ կուսակցութեան մեծանուն պարագլուխը: Ուսանողներն, Բաղալեան Փրակայի Հայ Ուսանողական Միութեան, իսկ Դ. Միկէլ-Դադայեան Դանիակցութեան կողմէ չեխերէն ճառերով ամփոփեցին Հայաստանի և Հ. Յ. Դանիակցութեան պատմութիւնը, շեշտելով հայրենական և Դանիակցութեան սրբազան ուխտը՝ վերստեղծելու ազատ, անկախ և ժողովրդավար Հայաստանը:

Ձեի ընկերվարական կուսակցութեան կողմէ խօսեցաւ ծերակուտական Վազներ, որ բաղադատելով չեխ և հայ ժողովուրդներու պատմական ու բազմադրեան տառապանքները բունութեան լուծին տակ, յայտնեց իր լիալոյս հուստը թէ հայ ժողովուրդն ալ, այսօրւան չեխերուն նման անպատճառ պիտի հասնի իր դարաւոր իգէալիի՝ կրկին ձեռք բերելով իր կրօնացուցած անկախութիւնը:

Ուկրայնական Սոց.-Յեղ. կուսակցութեան կողմէ խօսեցաւ յայտնի քաղաքական գործիչ Շապալալը, որ համակրական ջերմ խօսքեր ըրաւ. «Կուեւ Հայաստանի անկախութեան համար, կը նշանակէ կուրի համայն մարդկութեան լաւագոյն մէկ արժէքին համար: Մեզ ձեզի իմացնող անկախութեան էութիւնն է, վսեմ գաղափարը մարդկային ազատութեան: Իմ կողմէ ողջունեցե՛ք Դանիակցութիւնը, մարտական փառքերով պսակած ձեր հզօր յեղափոխական կուսակցութիւնը, որու հերոսական պայքարը մեզ՝ ուկրայնացի ընկերվարականներու և յեղափոխականներու համար օրինակելի կը մնայ և որմէ մենք պայքարի զօսեր պիտի առնենք:

Ռուս էս-էրներու կողմէ խօսեցաւ զորժիչ Գուրի-  
ւիչ, շեշտելով արգարութիւնը հայ դատին, որու  
համար մղւած պայքարէն ինք թանկագին յուշեր կը  
պատմէ դեռ 1902-էն: Բանախօսը իր հիացումը յայտ-  
նեց շ. Յ. Դաշնակցութեան:

Վրաց Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութեան և  
ուսանողութեան կողմէ խօսեցաւ Չիռչիա, որ սրտագին  
ողջունեց Հայաստանի անկախութեան տասնամեակը:  
«Հայ-վրացական բարեկամութիւնը, ըսաւ, դարեր  
ուեւած է և դարերով ալ պիտի շարունակուի: Հայկական  
Արարածը, որ ատեն մը պաշտպանած է մարդկութիւնը  
տիեզերական ջրհեղեղէն, կրկին պիտի զիմազարւ  
այն բոլոր հեղեղներուն, որոնք կը սպառնան հայ և  
վրացի ժողովուրդներուն»: Վրաց Սոց-Դեմ. կուսակ-  
ցութեան և սեղանային դադուի կողմէ խօսեցաւ ուրիշ  
ճառասօս մը: Յետոյ կարգով ողջոյնի ճառեր խօսե-  
ցան Բելլոտոս ընկերավարական կուսակցութեան, Կով-  
կասի Լեւնականներու, Քաղաքներու և Դոնի կազ-  
մակերպութիւններու ներկայացուցիչները: Ողջոյնի  
խօսքեր ըսաւ նաև չին ուսանողութեան ներկայացու-  
ցիչը, ինչպէս նաև առևտական զիմնացիոնի տեսուչ  
հայազգի Պողոսեանը: Կարգապահեցան ողջոյնի և շոր-  
հատութեան հեռագիրներ, որոնցմէ յատկանշական  
էին ձեռքակտակածներ ստըթ՝ Սուսերուպի և Կյօֆաշի  
ողջոյնները, առաջինը չին Սոց-Դեմ. կուսակցութեան  
վարիչներէն, երկրորդը չին ընկերավարական կուսակ-  
ցութեան նախագահը:

Փակման խօսքն արտասանեց նախագահ Վիկտոր  
Չերնով, որ յանուն էս-էր կուսակցութեան ողջունելէ  
յետոյ Դաշնակցութիւնն ու հայ ժողովուրդը, ըսաւ,  
թէ «մեր ո՛չ միայն բարեկամութիւնը, այլ և սերտ  
յեղափոխական պայքարի գործակցութիւնը Դաշնակ-  
ցութեան հետ շատ հին է, անխախտ ու յարատև:  
Յարական ինքնակախութեան դէմ մեր մղած պայքարին  
ատեն մենք շատ քան սորված ենք Դաշնակցութեան  
հերոսական, սքանչելի կրիւներէն: Յեղափոխական  
պայքարներու պատմութիւնը միշտ լեցուն եղած է  
յաղթանակներով և պարտութիւններով: Ճմարիտ  
յեղափոխականները անոնք են, որ վհատել չեն գիտեր  
և իրենց յաղթանակի միակ ապահով ուղին կը համա-  
րեն յեղափոխական հինաւորեց նշանախօսը՝ «կռուով  
ձեռք կը բերես քո իրաւունքը»: Կը հաւատամ որ դա՛ւք,  
երիտասարդ ընկերներ, պիտի կուէք առաջաւոր զիր-  
քերու վրա՛ յանուն ձեր իդէալի վճռական յաղթանա-  
կէն»:

Հանդէսին ներկա եղան Չեֆի Սլովո թերթին  
(հիննչի ընկերավարական կուսակցութեան օրգան)  
Թղթակիցը և բազմաթիւ չին ուսանող-ուսանողուհի-  
ներ: Չին երկու կարեւոր թերթեր՝ Պրաւո Լիդու  
(կեդր. օրգան չին սոց-դեմ. կուսակցութեան) և  
Նարոդնի Պոլիտիկա (ազգ. ժողովրդավար կուսակց-  
օրգան) մասնաւոր յօդուածներ ներբացին Հայաստանի  
անկախութեան տասնամեակին: Պրաւո Լիդու հրատա-  
րակեց նաև ընկ. Ա. Ահարոնեանի նկարը:

**ՊՈՒԼԿԱՐԻԱ**

Սոփիայի մէջ անկախութեան տասնամեակը տօն-  
ւեցաւ մայիս 27-ին, նախաձեռնութեամբ՝ Թաղական

Պորհուրդին և մասնակցութեամբ Սոփիայի հայ քա-  
ղաքական կուսակցութեանց և բոլոր մշակութային ու  
հայրենակցական միութիւններու, եկեղեցւոյ բակին  
մէջ: շ. Յ. Դաշնակցութեան կողմէ խօսեցաւ ընկեր  
Գրիգոր Գուտուբեան: Հնչական ներկայացուցիչն ալ  
խօսեցաւ անկախութեան և սրտաւ հայրենիքի գաղա-  
փարին վրա, փոտարանելով Մայիս 28ը:

Հայ Արիններն ու ճեմարանի աշակերտները կը  
բերէին իրենց մասնակցութիւնը: Նոյն օրը տեղի  
ունեցաւ ցերեկոյթի մը, մասնակցութեամբ մշակութա-  
յին միութիւններու: Պօսեցան ս. Յ. Մարթեան և  
հ. Սահակ Կողեան՝ անկախութեան դաղափարի մա-  
սին: Տասնամեակը նոյն հանդիսաւորութեան տօնեցաւ  
նաև Պուլխարիոյ միւս հայաքանակ քաղաքներու մէջ,  
ինչպէս Ռուսնուք, Պասքովօ, Թաթար Պապարճը և  
այլն:

**ՅՈՒՆԱՍՏԱՆ**

Աթենքի մէջ տօնեցաւ մայիս 27-ի կերակին  
Դիմնիսիայի շեղ սրահը, ներկայութեամբ աւելի քան  
3000 հայրենակիցներու, որոնք եկած էին Աթենքէն ու  
արուարձաններէն՝ Ֆիքսէն, Լիփազմայէն, Սիկուուէն:  
Ներկայ էին Մարիթարեան հայրերն ու Տիկին Եանքօ,  
յոյն ընկերավարական կուսակցութեան կանանց լիգա-  
յէն, ազգ. վարչութեան անդամները, և ազգ. պաշտօ-  
նական ներկայացուցիչներ: Նախագահ ընկեր թիւղ  
Գրիգոր Էօտէմիշլեանի բացման ճառէն յետոյ, գրաւոր  
ճառ մը կարդաց օր. Թորգոմ, զրաւտելով ժողովուր-  
դին կամը և հարաբերելով բոլորը, որ իրենց պարտա-  
կանութիւնը կատարեն հայրենիքին հանդէպ: Պօսեցաւ  
Հաճըրի մարտիկներէն Արամ Կարճեան: շ. Յ. Դաշ-  
նակցութեան կողմէ՛ ընկ. Մ. Փափագեան, որ այս  
տարի կը կարդայ նաև քաղաքները՝ Չոպանեանի և  
Պողոս Նուպարի ճառերէն, խօսած 1919-ին՝ Փարիզի  
մէջ, անկախութեան առաջին տարեկարճին: Տիկին  
Եանքօ՝ ընկերավարական գրագիտուէին խօսեցաւ կնոյ  
ազատագրութեան մասին և կոչ կընէ հայ կիներուն  
գործակցել իրենց: «Մե՛ծ ժողովուրդ էք դուք, կուտ,  
ձեր քաղաքակրթութիւնը դարաւոր է: Մեր հին պատ-  
միչներէն Գաննուփոն կը զրէ թէ իր օրով միայն հայերը  
երկյարկանի տուններ կը բնակէին»:

Տարեկարճը տօնակատարութիւններ տեղի ունեցան  
նաև Հին Յունաստանի, Մակեդոնիոյ և Արևելեան  
Թրակիոյ բոլոր հայաշատ քաղաքներուն մէջ, ինչպէս  
Սելանիկ, Քալպալ, Տեսէ Աղաճ, Կիւմուզգիճնա, Գոն-  
թի, Վալը, Լավրիտոյ, Գամարեկա, Բէթիմնօ և այլն:

Ռումանիոյ մէջ տասնամեակը տօնեցաւ Ազգային  
վարժարանին մէջ:

**ՍՈՒՐԻԱ**

Տարեկարճը տօնեցաւ Սուրիոյ և Լիբանանի բոլոր  
մեծ ու փոքր քաղաքներուն մէջ՝ Պէյրութ, Գաղթա-  
կայան, Ճիւնիէ, Ջաիլէ, Դամասկոս, Տրիպոլիս,  
Լաթաքիա, Անտիոք, Ալեքսանդրէթ, Քուսայ, Սուէ-  
տիա, Հալէպ և այլն, մասնակցութեամբ մեծ բազմու-  
թեան:

ՊԱՆԵՍՏԻՆ

Երուսաղէմի մէջ տօնեցաւ 27 մայիսին, տեղւոյն Բարեխրկան Աղուամբին մէջ: Խօսեցան ընկ. Միգրսիչ Տօնեան, քաղաքագետական բժիշկ Տոքթ. Յովհաննէս Թորեան և ընկ. Օննիկ Մամառեան, որ յատկապէս հոն դացած էր Գահիրէին՝ օրւան տօնին առթիւ:

ԵԳԻՊՏՈՍ

Գահիրէի մէջ տօնեցաւ մայիս 28-ին, նախաձեռնութեամբ Հ. Յ. Գ. տեղական կոմիտէին: Ներկայ էին աւելի քան 1000 հոգի: Նախագահ ընկ. Համօ Օհանջանեանի ոգևորիչ ճառէն յետոյ խօսեցան ընկերներ Լևոն Շանթ, Ն. Աղրախան և Գ. Իփէկեան՝ հայ ոգիի պահպանման, հայ ինքնօրոյնութեան և հայկական անկախութեան ծնունդին մասին: Հանդէսին ներկայ էր նաև եզիպտական Խորհրդարանի անդամ Տոքթ. Մանհրուպ Սապէթ պէյ, որ նախ արարեցին, յետոյ Ֆրանսերէն ճառ մը խօսեցաւ՝ շփման բացմաթիւ կէտեր գտնելով հայ և եզիպտական ժողովուրդի շին պատմութեան մէջ, պանծացուց հայերու մատուցած ծառայութիւնը Եզիպտոսի՝ դանապան մասերու մէջ: Վերջացնելով, մայրաքննչի ըրաւ հայ ազատ և անկախ հայրենիքի ստեղծման մասին:

Տարեդարձը տօնեցաւ նաև Արեւմտաօրիոյ մէջ՝ յունիս 3-ին: Հանդէսին նախագահեց ընկ. Լ. Շանթ. խօսեցան ընկերներ Ն. Աղրախան և Գ. Իփէկեան: Զակազիկի մէջ տօնեցաւ յունիս 9-ին, նախաձեռնութեամբ Հայ Երիտասարդաց Միութեան:

Տօնեցաւ նաև Թանքայի մէջ:

ԿԻՊՐՈՍ

Լառնաքայի մէջ տօնեցաւ մայիս 27-ի կիրակի առտուն, նախաձեռնութեամբ Հայ Գրասիրաց Միու-

թեան և Հ.Մ.Ը.Մ.ին: Ներկայ էր յոյն քաղաքագետը և աւելի քան 600 հայրենակիցներ:

Նիկոսիոյ մէջ հանդէսը տեղի ունեցաւ նոյն գիշերը: Սարաճեան եպօ. ևս կը մասնակցէր հանդէսին:

ԱՄԵՐԻԿԱ

Նիւ Եորքի մէջ տօնեցաւ մայիս 27-ին, 1200 հոգիի ներկայութեամբ: Նախագահ ընկեր Զաւէն Նարանդեան համառօտ ներկայացուց Հայաստանի Հանրապետութեան ծաղման պատմութիւնը: Յետոյ հետզհետէ խօսեցան երիտասարդ ընկեր Ասատուր Խըրըրեան, պ. Վահան Գարուշեան (անգլիերէն) և ընկ. Վահագն Գրմբեան:

Տիքսոյիք ևս տօնեցաւ նոյն օրը. ընկ. Յ. Գարբինեան բացատրեց տօնին նշանակութիւնը: Օրւան բանախօսներն էին ընկերներ Ա. Վանարեան, զօրավար Սեպուհ և Յ. Ամատունի:

Պոսթըրի մէջ տօնեցաւ մայիս 27-ի կէսօրէն վերջ, մասնակցութեամբ Հ.Յ.Գ. Պոսթըրի, Չըլլիի, Քէյմպերջի, Ուոթըրթոնի, Մէտֆըրրի և Լինի կոմիտէներու: Խօսեցան ընկերներ Թ. Գարբինեան և Յ. Ամատունի:

Եիփսոյի մէջ՝ մայիս 27-ին: Խօսեցան ընկերներ Զ. Զատրիկեան և Կ. Գանտէրեան:

Ֆրէզլոյի մէջ՝ մասնակցութեամբ Լօն Սթարի, Բիտլիի և Գլովեօի կոմիտէներուն:

Տօնեցաւ նաև Լոս Անճելուսի, Փրախոնման, Հուայթինսվիլի, Կրանիք Սիքիի մէջ (Ի.Ս. Լուիզի կոմիտէին մասնակցութեամբ), Թրոյ-Սիօքսվիլիի մէջ (մասնակցութեամբ տեղական կոմիտէներու և հայ եկեղեցիի հոգաբարձութեան), Թորաթոյի, Պրեթֆըրսի, Նիւ Պրինսիփի և Լաֆլորսի մէջ, ուր խօսեցան ծանօթ ընկերներ և գործիչներ:

Ի Ն Տ Ե Ր Ն Ա Ս Ի Ո Ն Ա Լ

ԲԻՐԻՍԵԼԻ ԸՆԴՈՒՄԱՐԸ

Համաձայն Մարտիի Համազումարում արտասայուած ցանկութեան՝ Ինտերնաթիոնալի հերթական Համազումարը պէտք է տեղի ունենար անցեալ տարի Լոնդոնում: Սակայն, անգլիական ընդհանուր զործադուլի հետեանցով առաջացած դժուարութիւնները և մի քանի այլ հանգամանքներ արգելի հանդիսացան այս ցանկութիւնն իրագործելու:

Գործադիր կոմիտէի վերջնիկներ ղուամարման ժամանակ, վերջնականապէս որոշեց Համազումարը հրաւիրել այս տարւայ օգոստոսին Բրիւսելում (Բելգիկ) իսկ վերջին ղուամարմանը՝ Գործադիր կոմիտէին ընդհանուր զօժերով սահմանեց հրաւիրելիք Համազումարի օրակարգը և զբաղումների եղանակը՝ մանրամասնութիւնները թողնելով իր Բիւրօի հայեցողութեանը:

Վերջինս յունիս 7-ին Բրիւսելի մէջ նիստի հաւաքուելով՝ վերջնականապէս մշակել է օրակարգի հետեան:

Նախադիմը, որ, բնականաբար պէտք է ներկայացուի Համազումարին ի ջննութիւն և ի հաստատութիւն.

1. Համաշխարհային ֆալաֆալայ վիճակը և միջազգային բանաբական շարժումը.
  2. Զօրապաշտութիւն (միլիտարիզմ) և զինաբափութիւն.
  3. Գաղութային ֆալաֆալայութիւն.
  4. Յետ-պատերազմային տնտեսական կացութիւնը և բանաբական դասակարգի տնտեսական ֆալաֆալայութիւնը.
  5. Կանանց միջազգային խորհրդածառովի գեղարուցումը և առաջարկները.
  6. Կազմակերպական հարցեր: Համազումարը պէտք է բացւի օգոստոս 5-ին:
- Համաձայն Ինտերնաթիոնալի կազմակերպական կանոնների՝ մեր կուսակցութիւնը Համազումարում ունի երեք մեծական և իննը խորհրդակցական ձայնի իրաւունք:

**ԲԻՒՐՈՒ ՄԻՒՍ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ**

Գործադիր կոմիտեի փետրարի նիստում հարց էր դրւած ընկերվարութեան տեսականին և դործնականին վերաբերելով մի ընդարձակ հանրագիտական գրառաւանք հրատարակելու: Քարտուղարութիւնը Բիւրօի վերջին նիստին զիկուցում է այս առաջարկն իրագործելու համար կատարւած աշխատանքների մասին: Բիւրօն որոշում է համազումարից անմիջապէս յետոյ ձեռնարկել հանրագիտականի հրատարակութեան անդէիբէն, զերմանբէն և Փրանսբէն լեզուներով:

Նոյն նիստի մէջ Բիւրօն զրարում է և այսպէս կոչւած «Ալբերտ Թոմայի դէպքով»: Ալբերտ Թոման, Փրանսական ընկերվարութեան յայտնի դէմքերից մէկը, որ նախագահն է Ադգերի Լիգային կից հաստատւած Աշխատանքի Միջազգային Բիւրօի՝ վերջերս Փաշխտական Արհեստակցութիւններ Միութեան հրահրով այցելելով Իտալիա՝ նրանց համազումարին մի ձառ էր արտասանել, որ Փաշխտական մամուլի կողմից որակւեց իբրև դրաստանք Մուսոլինիի բանտարկան քաղաքականութեան, և մեծ վրդովմունք առաջ բերեց մասնաւորապէս իտալական ընկերվարականների շրջանում:

Գործադիր կոմիտեի քարտուղարը՝ ընկ. Ալբերտ մամուլի մէջ Ալբերտ Թոմայի՝ այս ընթացքը պարտաւերաց յետոյ՝ Բիւրօի առաջ հարց էր յարուցել վերաբերմունք ճշտելու նրա հանդէպ:

Բիւրօն հաւանութիւն տուց ընկ. Ալբերտի հրապարակային պարտաւանքին և ցաւ յայտնեց, որ Ալբերտ Թոման այսպիսի անթոյլատրելի ընթացքի մէջ է ընկել՝ վրդովմունք պատճառելով բոլոր ընկերվարական կուսակցութիւններին:

Նոյն նիստի մէջ Բիւրօն հաւանութիւն է տալիս Գաղութային Գործերի Յանձնախմբի մշակած բանաձեւին և որոշում ներկայացնել այն համազումարին ի զննութիւն:

Այս վերին աստիճանի հետաքրքրական բանաձեւի մասին մենք կարտայայտուեց համազումարի զննութիւնից յետոյ: Առայժմ աւելորդ չենք համարում ակնարկել, որ նա մի կողմ նետելով Գրք Ինտերնասիոնալի խոստանալարութեան քաղաքականութիւնը զարուիթիւնի հանդէպ, որ արտայայտուած է ճեճները հետոյ գաղութներից, և նրան բացառականութիւններով՝ վեր է հանում կապիտալիստական գաղութային քաղաքականութեան և՛ զբաղկան և բացասական կողմերը:

Իրականը կայանում է նրանում, որ կապիտալիզմը շահագործելով գաղութները բնական հարստութիւնները և այլ շահագործման համար անհրաժեշտ քաղաքակրթական աշխատանքներ կատարելով գաղութներում (վարչութիւն, հաղորդակցութիւն ևն)՝ մի կողմից զարգացնում է, համաշխարհային չափանիշով, արդիւնաբերական ուժերը և միւս կողմից, անկախ իր կամքից իսկ, զարկ տալիս գաղութաբանակ տեղացիները յառաջադիմութեանը: Իսկ բացառական էլ այն է, որ կապիտալիզմը անսահմ և անմարտապային շահագործման է ենթարկում այն գաղութաբանակ տեղացիներին, և

արհեստական միջոցներով ու բռնութիւններով կասնցնում նրանց յառաջադիմութեան ընթացքը:

Կապիտալիզմի այս շինարար և կործանարար դերերը համաբնութիւնով բանաձեւը պահանջում է լիակատար անկախութիւն տալ այն բոլոր պաշտութային ժողովուրդներին, որոնք կարող են իրենց երկիրը կառավարել՝ առանց ստեղծւած արդիւնաբերական կեանքը խանդարելու և առանց նախնական բռնակալական կարգերի դիւրկը նետելու՝ իսկ դեռ ևս յետամնաց նախնական ժողովուրդների հանդէպ որդեգրել այնպիսի մի քաղաքականութիւն, որ նրանք ըստ կարելոյն շուտ հասունանան ազատ և անկախ կեանքի համար:

Բուլղարական ընկերվարական կուսակցութիւնը երկրաշարժի աղէտի առթիւ մի հաղորդագրութիւն է ներկայացրել Ինտերնասիոնալի քարտուղարութեանը երկրի տնտեսական վիճակի մասին, որով յայտնում է, թէ աղէտահար բուլղար ժողովուրդը անհնարին կացութեան է մատնւած պատերազմական տուգանքի երեսից: Հաղորդագրութիւնից երևում է, որ այդ բայեքաւած ժողովուրդին, որ մինչև օրս զանազան ձեւերով 1,401,207,753 ոսկի Փրանսի տուգանք է վճարել, կատարելա կործանում է սպասում, և թէ՛ Հաստուցումների Յանձնախումբը շվեդացի կամ շվեդացիի իր դրամական պահանջները:

Քարտուղարութեան զեկուցման հիման վրա Բիւրօն որոշեց դիմել ընկերվարական կուսակցութիւններին, որպէսզի նրանք պարտադրեն իրենց կառավարութիւններին և Ազգերի Լիգայի մէջ աշխատող ներկայացուցիչներին՝ Բուլղարիայի վրա դրած պատերազմական տուգանքը վերացնելու կամ մեղմացնելու իմաստով առաջադրութիւններ անել Հաստուցումների Յանձնախմբին:

Այս ամենից դուրս՝ Բիւրօն զրարւեց և ընթացիկ կազմակերպչական հարցերով, որոնք թւում և Մաստիտի Ֆոնդի զարգացման հարցով, որ համազումարի զբարոյսի նիւթ ևս պէտք է դառնայ:

**ԳԵՐՄԱՆԻԱ**

Բախտապի ընտրութիւնները վերջացան ընկերվարականների անսպասելի յաջողութեամբ: Գերման ազգայնականների և միւս բուրժուական կուսակցութիւնների չորսամեայ հակաժողովրդական քաղաքականութիւնը՝ հիասթափեցրել էր ոչ միայն նրանց յետևից գնացող բանտարկան խաւերին, այլ և միջակ քաղքենիութիւնը: Այդ պատճառով էլ ազգայնականների «հայրենասիրական» ճիւղերն այս անգամ արձաւանք չդասն ժողովրդական գանգաւանների մէջ:

Ընկերվարականների յաղթանակը մասին գաղափար կայմելու համար, համեմատեց նախորդ (1924) և այս ընտրութիւններին նրանց շահած ձայները և պատգամաւորական աթոռները.

1924—ին ընկերվարականները ստացել էին ընդամենը 7,880,058 ղւէ, որ հաստար է ընդհանուր ղւէների 26%—ին, և 131 պատգամաւորական տեղ: 1928—ին նրանք ստացան 9,146,165 ղւէ, որ հաստար

սար է ընդհանուր քւէների 29.6%-ին, և 153 պատ-  
շամաւորական տեղ :

Այսպիսով, վերջին ընտրութիւններին նրանք ստա-  
ցել են 1.266.107 նոր քւէ, որ 3.6%-ի յաւելում է  
նշանակում և 22 նոր պատգամաւորական աթոռ :

Կոմունիստները ևս շահել են ժողովրդական  
զանգուածների ընդհանուր զփոշուրթիւնից, բայց շատ  
աւելի նւազ չափով քան ընկերվարականները : Նրանք  
1924-ին ստացել էին 2.708.178 քւէ (9%), իսկ հիւսմ  
3.262.584 քւէ (10.2%) : Ուրիշ խօսքով նրանց ստացած  
քւէները աւելացել են 554.408-ով կամ 1.2%-ով :

Բայխտազի ընտրութիւնների հետ տեղի ունեցան  
և լանդտազի (տեղական խորհրդարան) ընտրութիւն-  
ներ Պրուսիայում, Բաւարիայում, Վիւրտեմբուրգում  
ևն : Սրանց մէջ ևս ընկերվարականները զգալի յաջո-  
ղութիւններ ձեռք բերին : Օրինակ, Պրուսիայում  
նրանց շահած քւէների թիւը բարձրացաւ 4.579,268-ից  
5.456.418-ի (+4.1%), Բաւարիայում՝ 513,590-ից  
802,727-ի (+6.9%), Վիւրտեմբուրգում՝ 238,750-ից  
267.077-ի (+3.3%) ևն :

Նոյն երկրներից առաջինում կոմունիստները շա-  
հել են՝ իրենց քւէների ստիպուր բարձրացնելով 9.6% էից  
11.9%-ի, իսկ երկրորդում և երրորդում զգալի կո-  
րուսանք են ունեցել :

Ընկերվարականների այս յաղթանակը հարկադրեց  
հանրապետութեան նախագահ Հինդենբուրգին կառա-  
վարութեան դեկր յանձնել նրանց պարագլուխ Հեբման  
Միւլլերին : Վերջինի՝ Բայխտազում ընկերվարական  
մեծամասնութիւն շունեհալով՝ բանակցութեան մտաւ  
բուրժուա-հանրապետական կուսակցութիւնների հետ,  
խառը կառավարութիւն կազմելու համար : Բուրժուա-  
կան կուսակցութիւններից մէկը, այսպէս կոչւած  
«Գերման ժողովրդականների կուսակցութիւնը» անըն-  
դունելի պայմաններ դրաւ ընկերվարականների առաջ,  
որով կուսակցութիւնների գործակցութիւնը անհնարին  
դարձաւ :

Այս պայմաններում Հ. Միլլերը հարկադրեցաւ  
անհատական սկզբունքով կազմել իր դահլիճը, որի  
մէջ ամենակարեւոր նախարարութիւնները՝ վարչապե-  
տութիւն, ներքին գործեր, Ելմտական, աշխատանքի,  
զանուում են ընկերվարականների ձեռքին :

Այսպիսով, շուր տարւայ դադարից մտոյ, ըն-  
կերվարականները նորից իրենց գործած մասնակցու-  
թիւնն են բերում Գերմանիայի պետական վարչութեա-  
նը, որ եթէ այլ արդիւնք էլ չունենայ, յամենայն  
դէպս կապահովէ հանրապետութիւնը աջակողմեան և  
ձախակողմեան ոտընձգութիւններից և նրա ընկերային  
յաւաջադիմութեանը զարկ կը տայ :



### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուրւագծւող նոր կացութիւնը (Ռմբադրական)	161
Յովակիմ Բուդաղեան (Յ. Տէր-Դաւթեան)	164
Հակախորհրդային գաղափարական պայքարի յա- տուկ առաջադրութիւնները Հայաստանում (Ա. Ջամալեան)	165
Ինֆլաշննադատութիւն... (Աշոտ)	171
«Ազգային հարցը մարտիկովի փութում» (Կ.Սա- սունի)	174
Գաղափարների նշանակութիւնը (Ա.Գասպարեան)	180
Թիւրքիոյ շուրջ	184
Հայաստանի անկախութեան տանամանակի տօնա- կատարութիւնները	186
Ինտերնասիոնալ	190

### ՄՍՍՅՒԱՅ ԳՐԳԵՐ

Հայ Հասարակական Միտքը, Դր. Ե. Ֆրանզեան  
Գահիրէ 1928թ.



### « Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 Փր. 50 սանտ.

### Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Դրօշակ, ամսադիր, Փարիզ, տարեկան 25 Փր. կամ 2 դոլար.
Հայրենիք, օրաթերթ, Բոստոն, տարեկան 6 դոլ.
Յուսաբեր, օրաթերթ, Գահիրէ, տարեկան 150 եգ. դահեկան.
Արաքս, օրաթերթ, Սոֆիա, տարեկան 550 լւա.
Հայրենիք, ամսադիր, Բոստոն, տարեկան 5 դոլ.
Նոր-կեանք, շաբաթաթերթ, Թեհրան, տարեկան 2 թուման.
Ասպարէզ, շաբաթաթերթ, Ֆրէզնօ, տարեկան 1,50 դոլար.

### « Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«ԴՐՕՇԱԿ»-ի տարեկան բաժնեգինն է Ֆրանսայի,  
Յուճաստանի, Բուլգարիայի, Ռումանիայի, Եւրոպա-  
կան այլ երկիրների, Միւրիայի և Պարսկական Ասր-  
պատականի համար՝ 25 ֆրանս. ֆրանկ :  
Անգլիայի, Ամերիկայի, Եգիպտոսի, Պագետիների,  
Միջագետքի, Պարսկաստանի, Հնդկաստանի և մնացած  
բոլոր երկիրների համար՝ երկու դոլար :  
Իսթանբուրգից և Կարէիէ հեռաքանչիւր ամսի  
սկզբից :

### « Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի Հասցէն՝

M<sup>10</sup> S. AGOPIAN.  
5, rue des Gobelins, 5. Paris (13<sup>e</sup>)